

## **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

### **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ ՎԱԼԵՐԻԻ**

**ՀԱՐՖԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ.  
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Ժ. 02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝  
բ.գ.թ., դոցենտ Ս. Բ. Կարաբեկյան

**ԵՐԵՎԱՆ 2018**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՀԱՐՖ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՀՆՁՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	18
1.1. Հնչոյթի և հնչոյթաբանական այլ հասկացությունների կիրառությունն ընդհանուր լեզվաբանության մեջ.....	18
1.2. Արաբերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները.....	21
1.3. Հարֆի հնչոյթաբանական և վանկաչափական բովանդակության մեկնաբանումն արաբ առաջին քերականների աշխատություններում.....	32
1.3.1. Ալ-Խալիլ իբն Ահմադ.....	32
1.3.2. Սիբավեյհի.....	41
1.3.3. Ալ-Մուբառադ.....	46
1.4. Հարֆ հասկացոյթի բովանդակությունն արաբերենի և այլ լեզուների տեսական հնչոյթաբանության հասկացակազմի համատեքստում. տիպաբանական վերլուծություն....	50
ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՖ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	60
2.1. Ձևոյթի լեզվաբանական ընկալումների համառոտ ներածական ակնարկ.....	60
2.2. Արաբերենի ձևաբանական համակարգի առանձնահատկությունները.....	63
2.2.1. Անուններ.....	67
2.2.2. Բայեր.....	73
2.2.3. Մասնիկներ.....	79
2.3. Հարֆի ձևաբանական բովանդակության մեկնաբանումն արաբ առաջին քերականների աշխատություններում.....	81
2.3.1. Ալ-Խալիլ իբն Ահմադ.....	81
2.3.2. Սիբավեյհի.....	91
2.3.3. Ալ-Մուբառադ.....	96
2.4. Հարֆ հասկացոյթի բովանդակությունը սեմական ձևաբանության հասկացակազմի համատեքստում. համեմատական վերլուծություն.....	101
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	111
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	114
ՀԱՎԵԼՎԱԾ.....	120

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արաբական լեզվաբանական ավանդույթում լայնորեն կիրառվող եզրույթների համարժեքների սահմանումն արդի լեզվաբանության համընդհանուր ընդունված եզրույթների միջոցով, եղել և մնում է արաբերենի քերականության ուսումնասիրման կարևոր խնդիրներից մեկը: Բանն այն է, որ լեզվաբանական գրականության մեջ չկա Արևելքում ձևավորված լեզվաբանական դպրոցների համակարգված ուսումնասիրություն, թեև տեղի ժողովուրդների մշակույթն ուսումնասիրող գիտության այդ ոլորտը հասել է մեծ նվաճումների [Звегинцев 2007: 3]: Արաբական լեզվաբանության առաջացումը կապված էր ժամանակի քերականական ավանդույթների զարգացման հետ: Լեզվաբանական ավանդույթները սկզբնական շրջանում վերաբերել են մայրենի լեզվի, իսկ այլ ժողովուրդների հետ շփման արդյունքում՝ նաև նոր լեզուների ուսումնասիրությանը:

Արդի լեզվաբանության արմատները, այդպիսով, հասնում են մինչև անտիկ շրջան և վաղ միջնադար: Ակադեմիկոս Գևորգ Զահուկյանը լեզվաբանության պատմությունը բաժանել է ստատիկ-վերլուծական, պատմահամեմատական և համակարգային-վերլուծական փուլերի, որոնցից երկրորդն ու երրորդը թվագրվում են 19-20-րդ դարերին: Ստատիկ-վերլուծական փուլը բաժանվում է երեք շրջանների՝ ապոստերիորիստական իզոլյացիոնիզմ (հին դարեր), ապրիորիստական դոգմատիզմ (վաղ միջնադար), էմպիրիկ-տեխնիկական և ռացիոնալիստական ունիվերսալիզմ (վերածնունդ և ուշ միջնադար) [Զահուկյան 2015: XXVII]: Գրային համակարգեր ունեցող բազմաթիվ ժողովուրդներ չեն ստեղծել լեզվաբանական ավանդույթներ, կամ դրանք պարզապես դեռ անհայտ են գիտությանը [Алпатов 2005: 8]: Տարբեր ժողովուրդների լեզուներ գտնվել են զարգացման տարբեր մակարդակներում [Березин, Головин 1979: 57]: Ինչպես նշել են Վիլիելմ Հումբոլդտը, Ալեքսանդր Պոտերնյան և Գերման Պաուլը՝ լեզուն ոչ այլ ինչ է, քան գործունեություն, և այդ գործունեության արգասիք: Պատմականորեն տեղի ունեցող փոփոխությունները և լեզվի հարաշարժությունը չեն նշանակում, որ լեզվի մեջ մնայունություն չկա: Ցանկացած

լեզու կայունության ու շարժականության միություն է, չնայած նրան, որ իր ստատիկան դինամիկ է, իսկ դինամիկան՝ հետզհետե զարգացող [Кодухов 1974: 185]:

Ապոստերիորիստական իզոլյացիոնիզմի շրջանում ձևավորվել են հնագույն քերականագիտական ուսմունքները, ինչը հետևանք էր տնտեսության առաջընթացի ու մշակութային զարգացման: Հնդկական լեզվաբանական ավանդույթը հիմնել էր Պանինին (մ. թ. ա. 5-4-րդ դարեր)՝ Վեդաների ճիշտ արտասանման և սերունդներին փոխանցելու նպատակով<sup>1</sup>, ուստի նա մեծ դեր է հատկացրել հնչյունաբանությանը [Березин 1984: 6]: Մ. թ. ա. 3-2-րդ դարերում առաջացել է չինական լեզվաբանությունը՝ միակը, որի ուսումնասիրության առարկան, ի հակասություն եվրոպական թեքական լեզուների, անջատողական իզոլատիվ լեզու է: Լեզվական հարցերն ուշադրություն են գրավել դեռ Մո Ռիի և նրա հետևորդների՝ մոխստների ուսմունքների մեջ<sup>2</sup>: Ավելի ուշ շրջանի «Էրյա» բացատրական բառարան-հանրագիտարանը գրվել է երկարատև ժամանակահատվածում՝ տարբեր հեղինակների կողմից [Алпатов 2005: 12]:

Գրեթե նույն ժամանակաշրջանում Հին Հունաստանում լեզվաբանության հիմքերը դրեցին Հերակլիտը, Դեմոկրիտը, Պլատոնը, Արիստոտելը, մեծ էր էլեաթների, ստոիկների, սկեպտիկների, էպիկուրյանների ներդրումը: Ավելի ուշ հունական ավանդույթն իր ազդեցությունն է թողնում Հին Հռոմում (Հելլիոս, Մարկոս Տերենցիոս Վառոն, Ռեմիոս Պալեմոն) [Աղայան 1987: 185]: Քերականությունն աստիճանաբար առանձնանում է փիլիսոփայական լեզվաբանությունից (օնոմաստիկա) [Березин 1984: 9]: 4-5-րդ դարերում լատինական և հունա-բյուզանդական լեզվաբանությունները զարգանում են

---

<sup>1</sup> Վեդաները (वेद, բառացի՝ «գիտելիք», «ուսմունք») սանսկրիտական գրականության հնագույն շերտն են, հինդուիզմի վաղագույն գրություններ: Այդ կրոնի բնօրինակ անունը հնչում է որպես սանաթան-դհարմա (सनातनधर्म), ինչը նշանակում է «հավերժ կրոն», «հավերժ ճանապարհ» կամ «հավերժ օրենք»:

<sup>2</sup> Չինական ավանդույթում քերականագիտական եզակի, փոքրածավալ ուսումնասիրություններ հանդիպում են նաև ավելի վաղ շրջանում: Հետագայում բառարանագրությունը դառնում է առանցքային ճյուղ: Չինական լեզվաբանական ավանդույթը նպաստում է նաև հարևան երկրներում քերականական ավանդույթների զարգացմանը, սակայն անհետևանք է մնում եվրոպական լեզվաբանության համար:



առանձին. առաջինը կրում էր կրոնական, երկրորդը՝ քաղաքական-մշակութային դրոշմ [Զահուկյան 2015: 104]: Լատինական լեզվաբանության հիման վրա հետագայում սկզբնավորվել է եվրոպական կամ արևմտյան դպրոցը, որն անցել է զարգացման չորս փուլ՝ լատինական ժառանգության և սխոլաստիկայի ձևավորման (6-12-րդ դարեր), փիլիսոփայական քերականության սկզբնավորման (13-14-րդ դարեր), վերածննդի (15-16-րդ դարեր) և ռացիոնալիստական (17-18-րդ դարեր):

Արաբական լեզվաբանական ավանդույթը ձևավորվում է 7-րդ դարի վերջին և 8-րդ դարում [Զահուկյան 2015: 106-109]: Այդ ժամանակ արաբերենն արդեն անցել էր զարգացման մի ամբողջ շրջան, որն ընդունված է բաժանել հին (մ. թ. ա. 9 - մ. թ. 1-ին դարեր) և վաղ (1-7-րդ դարեր) փուլերի: Հին արաբական գրավոր հուշարձանները խիստ սակավաթիվ են՝ արտահայտված վիմագիր արձանագրություններով: Վաղ արաբական փուլում, մասնավորապես՝ 5-6-րդ դարերում, ձևավորվում է արաբական գրականությունը [Беляев 1966: 27]: Այն ի սկզբանե բանավոր էր, կարող էր զուգակցվել երաժշտության հետ: Պատահական չէ, որ բանաստեղծությունների ժողովածուներից մեկը, հեղինակած Աբու ալ-Ֆարաջ ալ-Իսֆահանիի կողմից (897-967), կոչվում է «*Kitāb al-Ağānī*», թարգմանաբար՝ «Երգերի գիրք» [Фильштинский 2006: 36]: Ձևավորվում է արաբական բանաստեղծությունը [Фролов 1991: 69], որը արդյունք էր արաբական հանգավոր արձակի զարգացման: Այն կիրառվում էր կրոնական առաջնորդների կողմից՝ ծիսակատարություններ վարելիս [Фильштинский 2006: 51]:

Լեզվաբանական որոշ աշխատություններում արաբերենը կոչվում է *հյուսիսարաբական լեզու*, ի հակադրումն հին հարավարաբական՝ այժմ մեռած լեզուների [Гранде 1998: 37]: Դրանց թվագրումը հասցվում է մինչև մ. թ. ա. 23-րդ դար, երբ թերակղզու հարավում (ժամանակակից Եմեն), հիմնվում է Կահտան (*Qahtān*) ցեղային միությունը [O’Leary 2001: 15]: Մ.թ.ա. 8-րդ դարից սկսած ստեղծվում են մի քանի պետական կազմավորումներ: Արաբերենը կոյնե էր թերակղզով մեկ ցրված ցեղերի համար: Վերջիններս ապրում էին

տոհմացեղային կարգով, ունեին սեփական, հաճախ տարբերվող հեթանոսական հավատալիքները: Տարածված էին հուդայականությունը, քրիստոնեությունն ու հանիֆականությունը, ինչպես նաև՝ այդ երեքից ձևավորված, սակայն բոլորից տարբերվող *եմենական միաստվածությունը* [Пiotровский 1985: 105]: Վաղ միջնադարում Արաբիայի հյուսիսում կազմավորվում են Լախմիների ու Ղասանիների պետությունները, իսկ Նաջդում և Հիջազում<sup>3</sup> ձևավորվում են մի քանի քաղաք-պետություններ [Heery 1981: 103-104]:

7-րդ դարում արաբ վաճառական Մուհամմադը հիմնադրում է միաստվածական նոր կրոն՝ իսլամը, որը համախմբում է արաբական ցեղերը [Hitti 1970: 119-121]: 632 թվականին հիմնադրվում է Արաբական խալիֆայությունը, որի կազմ են մտնում հսկայական տարածքներ՝ Բյուզանդական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի հաշվին: Նորաստեղծ պետության ազդեցության տակ է հայտնվում նաև Հայաստանը, որը 701 թվականին հարևան երկրների հետ միավորվում է վարչատարածքային մեկ միավորի՝ Արմինիա կուսակալության կազմում [Тер-Гевондян 1977: 74]: Արաբերենը դառնում է պետական ու կրոնական լեզու. խալիֆայության բնակիչների բացարձակ մեծամասնությունն իսլամ ընդունեց [Hawting 2000: 9-10]: Վարչական-քաղաքական և տնտեսական միավորման արդյունքում լեզուն ձեռք է բերում վերազգային նշանակություն: Ինչպես ժամանակին Հին Հռոմում, այնպես էլ Արաբական խալիֆայությունում սկսում են ինտեգրվել զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող ազգեր ու ժողովուրդներ [Мечковская Н. Б. и другие 1983: 59]:

---

<sup>3</sup> Նաջդը կիսաանապատային տարածք է Արաբական թերակղզու կենտրոնում, հայտնի է օազիսներով: Արևմուտքում ընկած Հիջազն իսլամի առաջացման բնօրրանն է. այստեղ են մուսուլմանների սրբազան քաղաքներ՝ Մեքքան (*makka al-mukarrama*՝ մեծապատիվ Մեքքա) և Մադինան (*madīna al-munawwara*՝ լուսավորյալ քաղաք, որ նախքան Մուհամմադի՝ այդտեղ բնակվելը (622) հայտնի էր որպես *yaṭrib*):

Իսլամական շրջանում ընդունված է առանձնացնել արաբերենի վաղ դասական (7-9-րդ դարեր), դասական (9-18-րդ դարեր), նոր (18-20-րդ դարեր) և ժամանակակից (20-21-րդ դարեր) փուլեր [Белова 2003: 6-7]: Վաղ դասական փուլում կատարելագործվում է արաբերենի գրային համակարգը: Արաբ առաջին քերականներից Աբու Ասուադ ադ-Դուալին (603-688) հեղինակել է արաբերենի այբուբենի ձայնավորները և դիակրետիկ նշանները, իսկ Աբդալլահ իբն Աբի Իսհակը (մահ. 735) գործածել է լեզվական անալոգիաներ: Արաբական ավանդույթն զգալի ազդեցություն է կրել հունարենի և ասորերենի քերականությունից [Versteegh 1997: 3]: Քերականագիտական առաջին կենտրոններից էին ժամանակակից Իրաքի հարավում գտնվող Բասրայի և Քուֆայի դպրոցները, որոնց հիմնադիրներն են համարվում Աբու Ամր իբն ալ-Ալան (մահ. 770) [Hoyland 2001: 245] և Աբու Ջաֆար ալ-Ռուասին (մահ. 802) [Weil 1913: 4]: Բասրայում քերականության կանոնները բացատրելու համար որպես հիմք խստորեն ընդունում էին լեզվական հետազոտությունները՝ հենվելով դասական հեղինակների լեզվի վրա: Քուֆացիների ուսումնասիրության առարկա էին չափածո և արձակ երկերը, ուշադրություն էր հատկացվում դասական լեզվից շեղումներին, բացառություններին և խոսակցական լեզվին:

Առաջին քերականները ոչ միայն արաբներ էին, այլև տեղաբնիկ ժողովուրդների ներկայացուցիչներ, ովքեր լեզուն յուրացնելու փուլում էին, և պետք է այն ուսումնասիրելու ճանապարհներ փնտրեին [Рыбалкин 2003: 8-9]: Քերականներն ուսումնասիրում էին հնչյունաբանություն (*tajwīd*, التجويد), ձևաբանություն (*taṣrif*, التصريف), բառակազմություն (*iṣṭiqāq*, الاشتقاق), շարահյություն (*naḥw*, النحو), ճարտասանություն (*balāḡa*, البلاغة) [Рыбалкин 2003: 92-96]:

Մեզ են հասել միջնադարի հեղինակների բազմաթիվ աշխատություններ, որոնք վերահրատարակվել են արաբական ժամանակակից կրթական կենտրոններում: Դրանք վերաբերում են ոչ միայն վաղ դասական, այլև հետագա՝ դասական, նոր և ժամանակակից փուլերին: 9-18-րդ դարերն ընդունված է անվանել արաբերենի զարգացման դասական ժամանակաշրջան, քանի որ արաբերենի

դասավանդումը շարունակում էին ի կատար ածել առաջին հեղինակների աշխատություններով: Կործանված խալիֆայության փոխարեն Եգիպտոսում, Միջին Ասիայում, Իրանում, Անդալուսում, Հյուսիսային Աֆրիկայում հիմնվում են նոր պետություններ: 10-րդ դարում լեզվաբանությունը շարունակում էր զարգանալ՝ ի դեմս սիրիական, անդալուսյան և եգիպտական դպրոցների [Meu 1973: 199]: Պետության ղեկավարներն ուշադրություն էին դարձնում գիտության ու մշակույթի զարգացմանը. առանձնապես մեծ հոչակ էին վայելում Կահիրեի, Սամարղանդի, Կորդովայի, Կայրավանի և այլ ուսումնական կենտրոնները: Գիտական գրականությունը ներկայացված էր նույն դասական արաբերենով, որով ժամանակին գրվել էր Ղուրանը:

Նոր և ժամանակակից փուլերում աստիճանաբար ձևավորվում են արաբերենի բարբառները: Ընդունված է առանձնացնել բարբառների հինգ խումբ՝ թերակղզու, միջագետքյան, սիրիա-պաղեստինյան, եգիպտական, մաղրիբյան (հյուսիսաֆրիկյան): Կան նաև միջինասիական, կիպրական, եբրայական և այլ բարբառներ: 21-րդ դարի սկզբին արաբական երկրներում որպես պետական, կրոնական և քաղաքական լեզու շարունակում է լինել գրական արաբերենը, որը, սակայն, առօրյա խոսակցական լեզվի դիրքը վաղուց զիջել է բարբառներին: Ժամանակակից համալսարաններում շարունակում են դասավանդել արաբական բանասիրությունը՝ կիրառելով նույնպիսի եզրույթներ, որպիսիք ներմուծվել էին դեռ վաղ միջնադարում:

Արդ, արաբերենի քերականության ուսումնասիրման կարևոր խնդիրներից մեկը հենց այդպիսի եզրույթների համարժեքների սահմանումն է ժամանակակից լեզվաբանության՝ համընդհանուր ընդունված եզրույթների միջոցով: Ատենախոսության հետազոտման առարկան է «հարֆ» եզրույթը: Արաբերեն *harafa* նշանակում է փոփոխել, պտտել ինչ-որ բան: Գրական արաբերենում հարֆ կարող է համարվել՝

- Վերջնական միավոր, որն առանձնանում է բառի գծային անդամատման արդյունքում
- Վանկաչափական, ձևաբանական ու բառակազմական համակարգերի միավոր

- Արաբական տեքստի ցանկացած հատույթ, որն օժտված է լեզվական գործառնությամբ (բառ, ձևույթ)
- Լեզվական միավորների որոշակի խումբ
- Խոսքի մաս, որը անուն կամ բայ չէ [Karabekyan, Yavrumyan 2006: 236]

Առաջին անգամ եզրույթը հանդիպում է Բասրայի դպրոցի ներկայացուցիչ ալ-Խալիլ իբն Ահմադ ալ-Ֆարահիդիի (718-791) «*Kitāb al-‘Ayn*» («Սյն հարֆի գիրք») բառարանում: Նրան վերագրվող մեկ այլ աշխատությունում՝ «*Kitāb al-‘Arūḍ*» («Վանկաչափական տաղաչափության գիրք»), հարֆը կիրառվում է որպես տաղաչափության միավոր, որն ունի մեկական բաղաձայն և ձայնավոր հնչյուններ: Ցրո դարում թարգմանական գրականության առաջացումը խթանում է գիտությունների զարգացումը: Հավասարապես ուշադրություն էր դարձվում իսլամի ուսումնասիրությանը, գրականությանը, լեզվաբանական ավանդույթին (*al-‘ulūm al-‘arabiyya*՝ «արաբական գիտություններ»), աստղագիտությանը, բժշկությանը, թվաբանությանը (*al-‘ulūm al-‘ajamiyya*՝ «օտար գիտություններ»): Լեզվաբանության և գրականագիտության կապող օղակն էր արաբական տաղաչափությունը: Հայտնի է, որ գրականագիտության համար լեզուն անուղղակի ուսումնասիրության առարկա է՝ ինչպես հետազոտման, այնպես էլ հետաքրքրության տեսանկյունից: Այն դիտարկում է լեզուն՝ որպես ստեղծագործական մտքի արտահայտման միջոց [Березин, Головин 1979: 30]:

Հարֆ եզրույթը շարունակում են կիրառել ալ-Խալիլի հետևորդները: Նրա աշակերտ Սիբավեյհին (760-797) հեղինակում է արաբական քերականությանը նվիրված առաջին աշխատությունը՝ «*al-Kitāb*» (բառացի՝ գիրք<sup>4</sup>) [Versteegh 1997: 55]: Դրա վերահրատարակված օրինակը բաղկացած է տասը հատորից. հեղինակը մանրամասնորեն սահմանում է արաբերենի խոսքի մասերը, բերում դրանց մասնավոր կիրառությունները, տալիս մասնիկների բացատրությունը [Fischer 1983: 138]:

Բասրացիների ու քուֆացիների աշակերտները նոր դպրոց են հիմնում Արաբական խալիֆայության քաղաքական, տնտեսական, մշակութային և կրոնական

<sup>4</sup> Ամբողջական անունն է՝ *kitāb sibawayhi al-mašhūr fī al-naḥw wa ’ismuhu al-kitāb* ( کتاب سيبويه: المشهور في النحو واسمه الكتاب)՝ Սիբավեյհիի հայտնի գիրքը քերականության մեջ, որ կոչվում է ալ-քիթաբ:

կենտրոն Բաղդադում: Բասրայի քերականական դպրոցի վերջին ներկայացուցիչներից ալ-Մուբառուադը (826-898) հեղինակում է «*al-Kāmil fi al-Luġa wa al-'Adab*» («Լեզվի ու գրականության ընտրանի») աշխատությունը, որտեղ եզրույթը բացատրվում է ժամանակի ստեղծագործություններից բերված օրինակներով:

Լեզվաբանության պատմության պատմահամեմատական և համակարգային-վերլուծական փուլերում ներմուծվել են նոր եզրույթներ, և փորձեր են արվել դրանք համապատասխանեցնել բոլոր լեզուներին: Ժամանակակից լեզվաբանների առջև ի հայտ է եկել քերականական ավանդույթում կիրառվող եզրույթների համարժեքների սահմանման խնդիրը:

Դպրոցների մի մասը շարունակում է հավատարիմ մնալ արաբական քերականական ավանդույթի առաջ քաշած դրույթներին, և հարՖը սահմանում է որպես հնչույթաբանական նվազագույն անբաժան մասնիկ՝ օժտված կաղապար ձևավորելու հատկությամբ՝ որպես ձևաբանական դիրք: Դրանցում չեն առանձնացվում հարՖի բաղաձայն և ձայնավոր հնչունները՝ որպես ձևույթ կազմող միավորներ՝ հնչույթներ: Դպրոցների մեկ այլ մաս առհասարակ չի կիրառում հարՖ եզրույթը՝ այն համարելով հնաբանություն. հնչույթաբանական նվազագույն մասնիկի կազմում բաղաձայնն առանձնացվում է ձայնավորից: Ձևաբանական իմաստով հարՖի ներսում եղած ձայնավորը համարվում է առանձին հնչույթ: Նման մոտեցումն ընդունելի չէ սեմական լեզուներում: Պետք է նշել, որ վանկային լեզուներում նույնպես ի հայտ են գալիս ձայնավորի ու բաղաձայնի անբաժան մասնիկներ:

Իսլամի տարածման ու արաբամուսուլմանական գրականության զարգացման արդյունքում հարՖ եզրույթը գործածվում է նաև մի շարք այլ՝ հնդեվրոպական (պարսկերեն, քրդերեն, փաշթո, դարի, ուրդու), ալթայյան (ույղուրերեն, նախքան ԽՍՀՄ կազմավորումը՝ Միջին Ասիայի լեզուներ), ավստրոնեզիական (բեգոն, ջավի, սուրաբե) լեզուներում, որոնցում գործածում են արաբերենի այբուբենը՝ որպես գրային համակարգ: Այդ լեզուներով դարեր ի վեր ստեղծվել են բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք հարմարեցվել են ոչ թե հունական, այլ արաբական տաղաչափությանը, որքան էլ դա խորթ լիներ լեզվակիրների համար: Արաբական գրային համակարգը հարմարեցվել է այդ լեզուների հնչունական համակարգին,

ավելացվել են որոշ հարֆեր (օրինակ՝ ուրդուն ունի 58 հարֆ): Հարկ է ավելացնել, որ հարֆերն այդ լեզուներում չեն պակասել. նույնիսկ hamza-ն, լինելով կոկորդային շփական հնչյուն, գոյություն չունի բազմաթիվ լեզուներում, սակայն արաբական ներմուծված բառերի շնորհիվ այն թափանցել է իսլամադավան ժողովուրդների լեզուներ: Հետևաբար, ցայսօր պահպանված է հարֆի հայեցակարգը ոչ միայն արաբերենի, այլև բազմաթիվ այլ լեզուների պարագայում:

Կարելի է տեսնել, որ տաղաչափական երեք տարբեր համակարգերի գոյությամբ առաջացել են հնչույթային մակարդակի երեք տարբեր միավորներ՝ հնչունները (հունական տաղաչափություն), հարֆերը (արաբական տաղաչափություն) և վանկերը (չինական տաղաչափություն): Արդեն հստակորեն ապացուցվել է, որ վանկային լեզուների պարագայում հնչունը չի կարող համարվել հնչույթ, և ձևույթ կազմելու գործառույթը վերագրվում է վանկերին: Դրա արդյունքում ընդհանուր լեզվաբանություն են ներմուծվել եզրույթներ, որոնց կարևորությունը չի սահմանափակվում որևէ մետալեզվով: Ուստի, խնդրի ակտուալությունը դուրս է գալիս արաբական լեզվաբանության սահմաններից և վերաբերում է նաև ընդհանուր լեզվաբանությանը, քանի որ վերոհիշյալ ձևակերպումը չի կարող վերաբերել միայն արաբերենին կամ որևէ մետալեզվի: Այս աշխատանքը, ըստ այդմ, փորձ է՝ հստակ սահմանելու հարֆի դերն ընդհանուր լեզվաբանության համատեքստում, հաստատել հնչույթային մակարդակի երեք տարբեր միավորների առկայությունը:

Աշխատանքի առաջին գլխում հնչույթաբանության տեսանկյունից կատարվել է այլ՝ ոչ սեմական լեզուների հետազոտություն՝ *տիպաբանության տեսանկյունից*. պարսկերենի և օսմաներենի հետ համեմատությունը ցույց կտա «հարֆի» դերն ու տեղը ընդհանուր լեզվաբանության, մասնավորապես՝ հնչույթաբանության մեջ:

Բասրայի քերականական դպրոցի երեք քերականների ընտրությունը պայմանավորված է որոշակի սկզբունքներով: Ալ-Խալիլ իբն Ահմադն առաջինն էր կիրառել եզրույթը՝ այն ներմուծելով արաբական լեզվաբանական ավանդույթ: Հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նա էր հեղինակել նաև *hamza* եզրույթը՝ կոկորդային շփական մի հնչյուն, որը նույնպես ներկայացվել էր որպես հարֆ: Ալ-Խալիլի աշակերտ Սիբավեյհին հարֆ եզրույթը կիրառել էր արաբական

քերականությանը նվիրված առաջին աշխատությունում, որտեղ պարզաբանում էր լեզվաբանական ավանդույթում կիրառվող եզրույթներ, լուսաբանում բազմաթիվ անցքեր: Եզրույթի կիրառումը շարունակել են նաև այլ քերականներ: Ժամանակիցների կողմից ճանաչվելով որպես քերականագիտության խոշոր ներկայացուցիչ է ճանաչվել ալ-Մուբառադը, ով իրավամբ համարվում է Բաղդադի նորաստեղծ դպրոցի հիմնադիրներից մեկը՝ բասրացի և քուֆացի քերականների հետ միասին՝ որպես Բասրայի դպրոցի վերջին ներկայացուցիչ:

Շարունակելով հարֆի՝ հնչույթաբանական նվազագույն միավոր լինելու դիտարկումը, երկրորդ գլխում անդրադարձվում է արաբերենի ձևաբանությանը: Այսպես, հնչյուններ ունենալու պարագայում բառը կարելի է հստակորեն տարանջատել արմատների ու ածանցների, սակայն պատկերն այլ է ինչպես սեմական, այնպես էլ չինտիբեթական լեզուների դեպքում: Ձևահնչության վերլուծությունը ցույց է տալիս, որ արմատային հարֆերը երկրորդական (հավելյալ) հարֆերի հետ միասին կազմում են կաղապար, սակայն միջձևության սահմաններն այստեղ հստակ չեն: Բանն այն է, որ հարֆերի ներսում բաղաձայն բաղադրիչը մշտապես կայուն է, իսկ ձայնավոր հնչյունը կարող է փոփոխության ենթարկվել: Դա թույլ է տալիս ենթադրել, որ բառի ձևաբանական կառուցվածքը երկու բաղադրիչների ագուցումն է [Karabekyan и другие, 2004: 3]: Ընդ որում, հիմնական (արմատական) և երկրորդական (հավելյալ) հարֆերը կազմում են բառեր, որտեղ կարևոր է հատկապես վերջին հարֆի դերը:

Արաբերենը բազմաթիվ ընդհանրություններ ունի սեմական այլ լեզուների հետ: Նախքան արաբական քերականական ավանդույթի ձևավորումը՝ աքքադերենը, հին եբրայերենը և շատ այլ լեզուներ ունեին հստակորեն ձևավորված լեզվական կաղապարներ: Արաբերենի պարագայում այդ կաղապարը բաղկացած է հնչույթային մակարդակի նվազագույն միավորներից՝ հարֆերից: Վերջինս, լինելով բուն արաբական եզրույթ, և առաջանալով շատ ավելի ուշ, երբ վերոնշյալ լեզուները գոյություն չունեին, բնական է, չէր կարող հանդիպել դրանց լեզվաբանական բառապաշարում: Ձևաբանության մասին պատկերացում կազմելու համար առանձին գլխում հետազոտված են սեմական լեզուները՝ *համեմատության տեսանկյունից*: Այդ համեմատությունը կոչված է ցույց տալու սեմական լեզուների կաղապարի



անբաժանելիությունը, սահմանելու հարՖի դերն ու տեղը ընդհանուր լեզվաբանության, այս անգամ արդեն՝ ձևաբանության մեջ:

Արաբերենի հնչյունները տառադարձելու համար ընտրված է EALL (Encyclopedia of Arabic Language and Linguistics) այբուբենը:

Ատենախոսության գլխավոր նպատակն է վեր հանել հասկացույթի բովանդակությունը ժամանակակից տեսական լեզվաբանության հասկացական համատեքստում՝ հիմնվելով Ալ-Խալիլ իբն Ահմադի, Սիբավեյհիի և ալ-Մուբառռադի աշխատություններում «հարՖ» միավորի կիրառությունների վերլուծության վրա:

## Գրականության համառոտ տեսություն

Աշխատանքում օգտագործվել են ինչպես արաբերենով գրված սկզբնաղբյուրներ, այնպես էլ հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն ու գերմաներեն գիտական ուսումնասիրություններ ու աղբյուրներ:

Արաբերենի քերականական ավանդույթն ուսումնասիրելու նպատակով աշխատանքում ներառվել են քաղվածքներ ալ-Խալիլ իբն Ահմադի հեղինակած «*Kitāb al-‘Ayn*» բառարանից և նրան վերագրվող «*Kitāb al-‘Arūḍ*» գրքից: Բառարանն ութ հատորով 1960-ական թվականներին վերահրատարակվել է իրաքցի լեզվաբան Մահդի ալ-Մախզումիի (1910-1994) և իրաքցի գրականագետ Իբրահիմ ալ-Սամառայիի (1923-2001) կողմից՝ Բեյրութում: Առանձին բաժիններով ներկայացված են նաև մեջբերումներ Սիբավեյհիի՝ «*al-Kitāb*» գրքից, որն արաբական քերականությանը նվիրված առաջին աշխատությունն է: Աբդ ալ-Սալամ Հարունը 1988-92 թվականներին Կահիրեում հրատարակել է այն՝ տասը հատորով: Հնչունաբանությանն ու ձևաբանությանը նվիրված գլուխներում առանձին բաժիններով ներկայացված են մեջբերումներ նաև երրորդ հեղինակի՝ ալ-Մուբառռադի «*al-Kāmil*» գրքից: Դրա ժամանակակից վերահրատարակությունը բաղկացած է չորս հատորից, հեղինակել է Աբդ ալ-Համիդ Հինդավին՝ 1998-2000 թվականներին: Ատենախոսության սահմաններում դրանով ավարտվում է արաբական լեզվաբանության պատմական ուսումնասիրությունը:

Արաբերենի վերոնշյալ ավելի քան երկու տասնյակ սկզբնաղբյուրները մեկնաբանված են նաև Ա. Բելլվայի, Հ. Գաբուլյանի, Դ. Ֆրոլովի, Ս. Կարաբեկյանի, Ե. Պոլիվանովի հոդվածներում ու գրքերում, ինչպես նաև՝ Ռ. Բաալբաքիի, Գ. Գելդերի, Ա. Լևինի, Վ. Ֆիշերի աշխատություններում: Նրանք, լինելով լեզվաբանական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ, ուրույն կերպ են մեկնաբանել որոշ եզրույթներ, այդ թվում՝ խնդրո առարկա «հարֆ» եզրույթը: Արևելյան լեզուներն ուսումնասիրողների մի խումբ այն համարում է հնչույթային նվազագույն մասնիկ: Բացի այդ, հարֆը վերջնական միավոր է, որն առանձնանում է բառի գծային անդամատման արդյունքում,

երբեմն նույնիսկ՝ բառ, և, իհարկե, խոսքի երեք մասերից մեկը: Դրան անդրադառնում են Հ. Գաբուչյանը, Դ. Ֆրոլովը և Ս. Կարաբեկյանը ինչպես բուն լեզվաբանական, այնպես էլ տաղաչափության թեմատիկային վերաբերող հոդվածներում: Լեզվաբանների մեկ այլ խումբ հարՖ եզրույթը համարվում է հնաբանություն և փոխարինում է ժամանակակից ընդհանուր լեզվաբանության եզրույթներով: Ջ. Մակքարթին, Ա. Փրինսը, Ջ. Ուոթսոնը և շատ ուրիշներ հարՖը ձևակերպում են զուտ երկու հնչյունների միություն, որոնք ոչ թե հնչույթային մեկ միավոր են, այլ երկու առանձին հնչույթներ:

Նախախլամական ու վաղխլամական շրջանների պատմությունը, ինչպես նաև կրոնական, քաղաքական և մշակութային անցքերի լուսաբանումը ներկայացված է ոչ միայն խորհրդային (այդ թվում՝ հայ) և ռուս արևելագետներ Ե. Բեյլակի, Օ. Բոլշակովի, Լ. Նեգրյայի, Մ. Պիոտրովսկու, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ի. Ֆիլշտինսկու, այլև Ջ. Հոթինգի, Ռ. Հոյլանդի, Ֆ. Հիթթիի և Ա. Մեցի աշխատություններում: Ե. Բեյլակը և Օ. Բոլշակովը հիմնվում են ժամանակի պատմիչների աշխատությունների ուսումնասիրության վրա, իսկ Մ. Պիոտրովսկին և Ա. Տեր-Ղևոնդյանը արել են աղբյուրագիտական սեփական հետազոտությունները: Ֆ. Հիթթիի և Ա. Մեցի աշխատություններն առանձնանում են որպես առավել սկզբնական, արևելագիտության դեռ սաղմնավորման փուլում գտնվող գրքեր, իսկ Ջ. Հոթինգի և Ռ. Հոյլանդի մոտեցումներն առավել արդիական են, հազեցած սկզբնաղբյուրներից մեջբերումներով՝ պատճառահետևանքային ուրույն կապ ձևավորելով միջնադարի և արդի հեղինակների աշխատությունների հիման վրա:

Լեզվաբանական ավանդույթների, ինչպես նաև լեզվաբանության պատմության հետազոտման լուսաբանման համար կիրառվել են Վ. Ալպատովի, Ֆ. Բերեզինի, Գ. Ջահուկյանի, Վ. Կասևիչի աշխատությունները: Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ մանրամասն քննության է առնվել լեզվաբանական ավանդույթների նկարագրությունը՝ սկսելով լեզվաբանության սաղմնավորումից՝ ի դեմս շումերական և արքադական ավանդույթների: Վ. Կասևիչի «*Элементы общей лингвистики*» աշխատություններում բերվում են բազմաթիվ օրինակներ՝ ինչպես հնդեվրոպական, այնպես էլ չին-տիբեթական լեզուներից: Արդյունքում պատկերացում է կազմվել ինչպես արաբական, այլնպես էլ հնդկական, չինական ու հունական

լեզվաբանությունների մասին, որոնցից երկուսը (չինականի բացառությամբ) նպաստել են նոր ձևավորվող արաբական քերականական ավանդույթի զարգացմանը: Վերջինս ներկայացնում են արդի լեզվաբաններ Վ. Չվեգինցևը, Վ. Ռիբալկինը, Բ. Ֆերստեդը: Արաբական լեզվաբանական ավանդույթի հետևողական նկարագրություն է մասնավորապես Վ. Ռիբալկինի «*Классическое арабское языкознание*» աշխատությունը, որտեղ կարելի է հանդիպել ոչ միայն միջնադարի առանձին հեղինակների՝ արաբերենի հնչյունաբանական, ձևաբանական ու շարահյուսական կառուցվածքին վերաբերող աշխատություններին ու նրանց քննմանը, այլև հունական ու հնդկական ավանդույթների հնարավոր ազդեցություններին: Առանձին ուշարության է արժանի նաև Գ. Վայլի՝ Քուֆայի և Բասրայի դպրոցներին վերաբերող 20-րդ դարասկզբին հրատարակված ու վերամշակված «*Die grammatischen Schulen von Kufa und Basra*» աշխատությունը: Արաբալեզու գրականության և մասնավորապես տաղաչափության առաջին հիմնավոր փորձերը վերագրվում են նրան: Հնչույթաբանության և ձևաբանության մասնավոր հարցերի ուսումնասիրմանն են անդրադարձել ոչ միայն Դ. Ֆրոլովը, Հ. Գաբուլյանը, Ս. Կարաբեկյանը, այլև Ջ. ՄակՔարթին, Ա. Փրինսը, Ջ. Ուոթսոնը: Վերջիններս նորովի են մեկնաբանում հարֆի ներսում եղած բաղաձայն և ձայնավոր հնչյունների գործառույթները: Մասնավորապես Ջ. ՄակՔարթի «*Template form in prosodic morphology*» և Ջ. Ուոթսոնի «*The Phonology and Morphology of Arabic*» աշխատություններում ամբողջապես անտեսված է արաբական տաղաչափական համակարգը և արաբերենի հնչույթաբանությունը ներկայացված է հունական տաղաչափության տեսանկյունից: Դ. Քուլոլին իր աշխատանքներում հետևողականորեն անդրադարձել է թանվինի հայեցակարգին: Այդ վերջավորությունը յուրահատուկ է միայն արաբերենին և առանձնացնում է արաբերենի անունները խոսքի մյուս մասերից:

Ընդհանուր լեզվաբանության անհրաժեշտ մոտեցումները լուսաբանելու համար օգտագործվել են Է. Աղայանի և Գ. Զահուկյանի, ինչպես նաև՝ Վ. Կոդուխովի, Յու. Մասլովի ու Ա. Ռեֆորմատսկու աշխատությունները: Ինչպես վերոնշյալ հայրենակից ակադեմիկոսների, այնպես էլ Վ. Կոդուխովի «*Общее языкознание*» և Յու. Մասլովի «*Введение в языкознание*» աշխատությունները հազեցած են բազմաթիվ լեզուներից

օրինակներ բերելով, որոնք տեղ են գտել նաև սույն հետազոտության մեջ: Պետք է նշել, որ եզրույթները կարող են տարբերվել զանազան լեզուների ուսումնասիրման դեպքում: Վ. Կասևիչի «*Фонологические проблемы общего и восточного языкознания*» աշխատությունում դիտարկվել են «արևելյան» լեզուների հնչույթները և ձևույթները. դրա շնորհիվ հնարավոր է դառնում սահմանել հնչույթային ու ձևաբանական մակարդակի նվազագույն նոր միավորներ՝ առանձին լեզուներ դիտարկելիս:

Արաբերենի ձևահնչույթաբանական առանձնահատկությունները մեկնաբանելիս օգտագործվել են նաև ժամանակակից արաբ լեզվաբանների՝ Թամամ Հասանի (Եգիպտոս), Էմիլ Յակուբի (Լիբանան), ալ-Տեյիբ Ատավիի (Ալժիր) աշխատությունները: Շարունակելով միջնադարի հեղինակների գաղափարները՝ նրանք ևս անբաժանելի են համարում հարՖը՝ որպես ձևույթ ստեղծող հնչույթաբանական մեկ միավոր: Իրենց հոդվածներում հեղինակները ձայնավոր հնչյունին չեն վերագրել ձևույթի հատկություն:

Պարսկերենի և օսմաներենի հետազոտության համար գործածվել են Գ. Ասատրյանի և Ալ. Սաֆարյանի խմբագրած դասագրքերը, որոնցում ներկայացված տեղեկությունը տեղ է գտել սույն աշխատանքի՝ հնչույթաբանությանը վերաբերող գլխի տիպաբանության բաժնում: Աքքադերենի, հին եբրայերենի ու ասորերենի համեմատական ուսումնասիրությունը լավագույնս ներկայացված է Բ. Գրանդեի «*Введение в сравнительное изучение семитских языков*», Տ. Լամբրինի «*Учебник древнееврейского языка*» և Զ. Հյուներգարդի «*A Grammar of Akkadian*» գրքերում:

# ԳԼՈՒԽ 1. ՀԱՐՖ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1. Հնչոյթի և հնչոյթաբանական այլ հասկացությունների կիրառությունն ընդհանուր լեզվաբանության մեջ

Խոսքի նյութական միավորը հնչյունն է, որն այլևս հնարավոր չէ տարրալուծել: Դրա ուսումնասիրությամբ է զբաղվում հնչյունաբանությունը [Աղայան 1987: 196]: «Արևելյան» լեզուների հնչյունաբանությունը ենթարկվում է ընդհանուր տեսությանը [Касевич 1983: 193]: «Հնչյուն» իմաստով մեկ այլ եզրույթ՝ «հնչոյթ» (հին հունարեն՝ φώνημα) տերմինն առաջին անգամ կիրառել է Անտոնի Դյուֆրիշ Դեսպենետը 1873 թվականին: Կազանի դպրոցի լեզվաբաններ Իվան Բոդուեն դը Կուրտենեն (1845-1929) և Նիկոլայ Կրուչևսկին (1851-1887) ցույց տվեցին, որ պետք է տարբերել արտասանվող ու լսվող ձայնային միավոր հնչյունը հոգեբանական պատկերումից: Այս տեսությունը զարգացում գտավ Ռուսաստանում (Լենինգրադի դպրոց՝ Լև Շչերբա (1880-1944), Մոսկվայի դպրոց՝ Նիկոլայ Յակովլև (1892-1974)) և նրա սահմաններից դուրս:

Հնչոյթի տեսությանն անդրադարձան նաև Պրահայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչներ Վիլլեմ Մատեզիուսը (1882-1945), Նիկոլայ Տրուբեցկոյը (1890-1938), Ռոման Յակոբսոնը (1896-1982): Վ. Մատեզիուսը նշում էր, որ հնչոյթաբանությունն առաջատար դիրք է զբաղեցնում ոչ միայն գործառական, այլև կառուցվածքային լեզվաբանության մեջ, այնպես ինչպես պատմական հնչյունաբանությունը դարձավ երիտքերականների աշխատանքային հիմնական դաշտը և հպարտությունը [Кодухов 1974: 83]: Ն. Տրուբեցկոյը ցույց է տվել, որ եթե երկու հնչյուններ հանդիպում են նույն դիրքում, փոխարինում են իրար, և բառի իմաստը չի փոխվում, ուրեմն դրանք միևնույն հնչոյթի տարբերակներ են: Երկրորդ, եթե երկու հնչյուններ հանդիպում են իրար միևնույն դիրքում, բայց չեն կարող փոխարինել իրար այնպես, որ չփոխեն բառի իմաստը, ապա այդ հնչյունները երկու տարբեր հնչոյթների հնչյունական իրացումներ են: Երրորդ, եթե երկու ձայնաբանական իրար մոտ հնչյունները երբեք չեն հանդիպում նույն դիրքում, ապա դրանք միևնույն հնչոյթի համակցական տարբերակներ են: Եվ չորրորդ, եթե երկու ձայնաբանորեն իրար մոտ հնչյունները երբեք չեն հանդիպում նույն

դիրքում, երկու հնչյուններ չի կարելի համարել միևնույն հնչույթի տարբերակներ, եթե դրանք տվյալ լեզվում կարող են հաջորդել միմյանց՝ ինչպես հնչյունային համակցական անդամներ, ընդ որում այնպիսի իրավիճակում, որում կարող է հանդիպել այդ հնչյուններից մեկն առանց մյուսի ուղեկցության:

Գոյություն ունեն նաև տեսություններ, որոնք խզում են հնչյունի ու հնչույթի դիալեկտիկական հակադրամիասնությունը [Աղայան 1987: 244]: Դանիել Ջոունզը (1881-1967) հնչույթը սահմանել է որպես դասային հասկացություն. հնչույթի ու հնչյունի հարաբերությունը դասի և նմուշի հարաբերություն է (ծագումնաբանական տեսություն): Կոպենհագենի դպրոցի հիմնադիր Լուի Ելմսլը (1899-1965) ցույց է տվել, որ հնչյունները որևէ կապ չունեն հնչույթների հետ (մաթեմատիկական տեսություն): Ամերիկյան դեակրիպտիվիզմի ներկայացուցիչ Լեոնարդ Բլումֆիլդը (1887-1949) հնչույթը համարում է այնպիսի խորհրդանիշ, որ կախված է միայն իր պայմանական հատկանիշներից, քանի որ լեզուն ինքնին խորհրդանիշների համակարգ է (խորհրդանշական տեսություն): Նշվում են նաև պայմանական, բաշխումային, իմացաբանական ու գործառական տեսություններ:

Այսպիսով, հնչույթը տվյալ հնչյունային կազմությանը հատուկ հնչյունաբանորեն էական հատկանիշների ամբողջությունն է: Լեզվի այդ նվազագույն իմաստազատիչ միավորը զուրկ է քերականական և բառային իմաստից, սակայն տարբերում է իմաստակիր միավորները՝ ձևույթներն ու բառերը:

Հնչույթի դիրքային տարբերակները՝ պայմանավորված յուրահատուկ միջավայրով, կոչվում են *այլահնչույթներ* [Նազարյան 1993: 55] (*αλλόφωνο*) կամ *ենթահնչույթներ* [Պետրոսյան 1975: 89]: Էդ. Աղայանը կենդանի խոսքում արտասանված յուրաքանչյուր հնչյունի իրական դրսևորումն անվանել է «հնչուրդ» [Աղայան 1987: 237], որը հայտնի է նաև որպես «հնչակ» [Նազարյան 1993: 376], հին հունարեն՝ *φωνή*:

Հնչույթային միջոցներն ունեն նաև առավել բարդ ստորակարգություն, որը ձևավորում է հնչույթային ինքնուրույն միավորներ: Ստացվում է, որ հնչույթն այդպիսի միավորներից միայն մեկն է [Касевич 1983: 194]:

Լև Շչերբան (1880-1944) ցույց է տվել, որ որևէ հնչյունական միավոր իրենից ներկայացնում է հնչույթ միայն այն տեսանկյունից, որ այն կարող է ինքնուրույն հանդես գալ ձևույթի կազմում: Շչերբայի այս գաղափարը զարգացում է ստանում նաև հետագայում. հնչույթն արտահայտման այն միավորն է, որն ունի լեզվական նշանակություն՝ *միայն* այն բանի շնորհիվ, որ կարող է ձևավորել լեզվի նվազագույն իմաստակիր մասնիկը՝ ձևույթը [Зиндер 1977: 12]: Ֆրանսիացի լեզվաբան Էմիլ Բենվենիստի (1902-1976) կարծիքով լեզվական միավորը հնարավոր է նույնականացնել ավելի բարձր մակարդակի լեզվական միավորի մեջ [Бенвенист 1974: 134]: Ըստ այդմ, հնչույթաբանական նվազագույն միավորը միայն հնչույթը չէ:

Մասլովը հնչույթի սահմանը գծելու համար դիտարկել է երկար ձայնավորները: Գերմաներենում երկար ձայնավորով չի անցնում երկու հարևան հնչույթների սահմանը, ուստի երկար ձայնավորը հանդես է գալիս որպես մեկ հնչույթ: Ինչ վերաբերում է ֆիններենին, ձևույթի սահմանը կարող է անցնել երկար ձայնավորի միջով՝ այն դիտարկելով որպես երկու հնչույթների միություն [Маслов 1987: 47]:

Հնչույթաբանական նվազագույն մասնիկի սահմանումը լավագույնս կարող է երևալ տաղաչափության մեջ: Ինչպես նշել էր Պրահայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչներից Ռոման Յակոբսոնը, մարդկային որևէ քաղաքակրթություն չի կարող գոյություն ունենալ առանց տաղաչափության: Ընդունված են հանգավորման երեք հիմնական տեսակներ՝ հունական, որով ներկայացված է հնդեվրոպական լեզուների մեծամասնության տաղաչափությունը, արաբական՝ արաբամուսուլմանական մշակույթ կրող ժողովուրդների գրական ավանդույթներ, և արևելասիական, որը հիմնականն է չին-տիբեթական ու ճապոնական լեզուների դեպքում:

Հունական տաղաչափական համակարգը հնարավորություն է տալիս ձևույթը բաժանել հնչյունների, սակայն արաբական և չինական տաղաչափական համակարգերում պատկերն այլ է: Չինաստանում և Հարավարևելյան Ասիայում տարածված վանկային լեզուների դեպքում նվազագույն մասնիկը մեկ հնչյուն լինել չի կարող: Չինարենում «*gqh*» հատույթը ներառում է մեկական բաղաձայն և ձայնավոր հնչյուն: Ընդ որում, միավորի սահմաններում ձայնավորի բացակայությունը հիմք չէ այդ միավորը կցել նախորդ՝ ձայնավոր ունեցող միավորին [Касевич 1983: 306]:



## 1.2. Արաբերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները

Արաբերենի հնչյունաբանությունը (*tajwīd*, التجويد) սկսում է ձևավորվել իսլամի սուրբ գիրքի՝ Ղուրանի (*al-Qurʿān*) գրառման անհրաժեշտությունից ելնելով: Արաբական լեզվաբանական ավանդույթը Ղուրանի վերջնական գրառումն ավարտված է համարում 651 թվականին [Белова 2003: 22]:

Ինչպես վերը նշվեց, արաբերենը պատկանում է աֆրասիական (սեմաքամյան) լեզվաընտանիքի սեմական ճյուղին: Այն լավագույնս պահպանել է սեմական նախալեզվի հնչյունական կազմը, ձևաբանական կառուցվածքը և բառային ֆոնդը [Юшманов 1999: 2]: Արաբական թերակղզին սեմական ժողովուրդների ծագման, իսկ սիրիա-պաղեստինյան մարզը և Միջագետքի դաշտավայրը նրանց զարգացման տարածաշրջաններն են: Այստեղ ի հայտ են եկել առաջին այբուբենները՝ ուգարիտյան, փյունիկյան, արամեական, եբրայական, ասորական, որից ազդվելով նաև՝ արաբական ու հարավարաբական գրային համակարգերը: Վերջինս ձևավորվել էր դեռ մ. թ. ա. 10-րդ դարում [Пиотровский 1985: 7]:

Արաբական ցեղերը տեղաշարժվում են «Բարեբեր մահիկի» երկրներ (Արևելյան Միջերկրական, Եգիպտոս և Միջագետք) և Հյուսիսային Աֆրիկա [Беляев 1966: 142]: Այդտեղ տարածված են աֆրասիական լեզվաընտանիքի քամյան ճյուղին պատկանող բերբերա-լիբիական լեզուները<sup>5</sup>:

Արաբերենը, ինչպես և բոլոր սեմական լեզուները, աչքի են ընկնում սակավաթիվ ձայնավորներով և բազմաթիվ բաղաձայններով: Հիմնական երեք ձայնավորներն են՝ *a* (*fatḥa*), *u* (*damma*), *i* (*kasra*)<sup>6</sup>: Դրանք հայտնի են որպես «շարժում» (*ḥaraka*) գրի չեն առնվում [Фролов 1991: 55], այլ ապահովում մի բաղաձայնից անցումը մյուսին:

<sup>5</sup> Արաբները «բերբեր» ընդհանուր անունով կոչել են Հյուսիսային Աֆրիկայի բոլոր ցեղերին՝ նրանց որակելով որպես հետամնաց, «բարբարոս» (այստեղից էլ՝ բերբեր անվանումը): Այժմ բերբերները (ինքնանվանումը՝ ամազիգ) բնակվում են Ալժիրում (10-13 միլիոն), Մարոկկոյում (17-20 միլիոն), Լիբիայում և Մավրիտանիայում (3-ական միլիոն) և հյուսիսաֆրիկյան մյուս երկրներում:

<sup>6</sup> Որոշ բարբառներում *a* (*fatḥa*) ձայնավոր հնչյունը կարող է փոքր-ինչ քմայնացվել, *u* (*damma*) հնչյունը կարող է արտասանվել որպես *o*, իսկ *i* (*kasra*) հնչյունը՝ արտասանվել որպես *e*: Երկար ձայնավորների առկայության պարագայում դրանք բոլորն էլ կարող են սղվել:

Աղյուսակ 1. շփական և պայթական բաղաձայններ

Արտասանության տեղը		Արտասանության եղանակը   Ձայնի պարունակությունը					
		շփական			պայթական		
		ձայնորդ	ձայնեղ	խուլ	ձայնեղ	խուլ	շնչեղ խուլ
շրթնային	երկշրթնային	-	-	-	b	-	-
	շրթնատամնային	-	-	f	-	-	-
առաջնալեզվային	միջնատամնային	-	*d, d	t	-	-	-
	լնդերային (լեզվաքմային)	r	z	s, *ʃ	d	*t	t
միջնալեզվային (քմային)		-	ʃ	-	j	-	-
հետնալեզվային		-	-	-	-	-	k
լեզվակային (կատկային)		-	-	x	-	q	-
կոկորդային (ըմպանային)		-	-	h, ʻ	-	-	-
հագագային		-	-	h	-	ʻ	-
*-ով նշված են էմֆատիկ բաղաձայնները							

Բացի վերոնշյալներից, արաբերենում հանդիպում են նաև ոնգային և կողքային 5 բաղաձայն հնչյուններ, որոնք ըստ արտասանության տեղի հիմնականում լեզվաքմային են: Ռնգային ձայնեղ հնչյուններն են՝ m (երկշրթնային), n (լեզվաքմային): Կողքային հնչյուններն են՝ l ձայնորդը (լեզվաքմային), ɸ էմֆատիկ ձայնեղ բաղաձայնը (լեզվաքմային) և ʒ ձայնեղ բաղաձայնը (հետնալեզվային) [Watson 2002: 2]:

Այսպիսով, արաբերենում կան չորս էմֆատիկ հնչյուններ՝ ʃ, ɸ, t, d: Դրանցից առաջինը հանդիպում է փյունիկերենում (ʃādē ʻ), երբայերենում (ʃādi ʻ),

արամերենում (*šādē ʾ*), դասական ասորերենում (*šādē ܥ*), գեեզում (*šādäy ጸ*), իսկ մյուս երեք էմֆատիկ հնչյունները, ինչպես նաև ևս երեք հնչյուն՝ *h*, *ğ* և *d*, արաբներն ավելացրել են հետագայում: Ինչ վերաբերում է *x* և *ğ* հնչյուններին, ապա արաբերենում դրանք արտասանվում են կոկորդից՝ *h* հակասություն, օրինակ, հայերենի:

Արաբերենում կան նաև երկու կիսաձայն հնչյուններ *yāʾ* և *wāw*: Ձայնավոր կրելիս դրանք հնչում են որպես [*j*] և [*w*], իսկ ձայնավորի բացակայության դեպքում հանդես են գալիս որպես երկար ձայնավորներ՝ *ī* և *ū*: Ինչ վերաբերում է 'alif-ին, ապա դա «բաղաձայնից զուրկ» կամ զրո բաղաձայն է, որը հնչում է որպես *ā*:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև կոկորդային շփական խուլ հնչյունին, որը կոչվում է «*hamza*» (բառացի՝ օղակ): Նշանը (ء) ներմուծել է ալ-Խալիլ իբն Ահմադը, սակայն այն գոյություն է ունեցել դեռ սեմական նախալեզվում [Поливанов 1928: 85]:

Բաղաձայններին և ձայնավորներին արաբական լեզվաբանության մեջ՝ ի տարբերություն հնդեվրոպական լեզվաբանության, ընդունված չէ վերագրել ձևային կազմավորման գործառույթ: Այդ հնչյունների գործառույթը ձևային կազմավորման նկատմամբ միջնորդված է. այն սահմանափակվում է հարֆի՝ ձևային կազմավորող միավորի ձևավորմամբ: Այսպիսով, հարֆի սահմանի ու դիտարկման մակարդակի նշիչը ձայնավոր հնչյունն է՝ «*ḥaraka*»-ն: Հարֆը ձեռք է բերում ոչ միայն վանկաչափական ու հնչույթաբանական, այլև այդ երկուսից բխող՝ ձևաբանական միավորի գործառույթուն: Ըստ այդմ, ձայնավորը, օժտված չլինելով ձևային կազմելու հատկությամբ, առանձին հնչույթ չէ [Karabekyan 1996: 4]:

Եթե հարֆը կրում է որևէ հարաքա, ապա կոչվում է «շարժական» (*ḥarf mutaḥarrik*), իսկ եթե ոչ՝ «լուռ» (*ḥarf sākin*), այսինքն՝ սուքուն կրող: Հարաքաների անվանումների (*a* (*fatha*), *u* (*ḍamma*), *i* (*kasra*)) հետ կապված՝ դրանք կրող հարֆերը համապատասխանաբար կոչվում են *maftūḥ*, *maḍmūm*, *maksūr*: Ըստ այդմ, վերը հիշատակված *yāʾ* և *wāw* կիսաձայները և 'alif-ը համարվում են թույլ, թերի հարֆեր:

Նախորդ բաժնում նշվեց, որ հնչույթային մակարդակի նվազագույն միավորը միայն հնչույթը չէ: Արաբերենում բառի կառուցվածքային բաղադրիչները բաղաձայն և ձայնավոր հնչյունների նվազագույն գործառական զուգակցություններն են՝ հարֆերը, որոնք գծային միավորներ չեն: Հարֆն իր կազմում ընդգրկում է բաղաձայն հնչյուն՝

հաջորդող համապատասխան ձայնավոր հնչյունով [Габучан 1963: 121-122]: Որպես կանոն, յուրաքանչյուր հարֆ պետք է իր կազմում ունենա a, u, i ձայնավորներից որևէ մեկը [Юшманов 1999: 12-14]: Ինչպես նշվեց, 'alif-ը համարվում է «բաղաձայնից զուրկ» կամ զրո բաղաձայն: Ձայնավորի բացակայությունն անվանվում է *sukūn*՝ «դադար» [Фролов 1991: 55]: Ստացվում է, որ հարֆն իր կազմում անպայման պետք է կրի մեկական բաղաձայն և ձայնավոր հնչյուն, նույնիսկ՝ զրոյական: Այդ իմաստով հարֆը մոտ է կանգնած ամանակին<sup>7</sup> [Габучан 1965: 114-127]:

Հարֆերի թիվը, ըստ տարբեր մոտեցումների, կարող է լինել 28 կամ 29: Ինդրահարույց են 'alif-ը և hamza-ն. 'alif-ը հաճախ չի համապատասխանում հարֆի ընդհանուր չափանիշներին, սակայն համարվում է 28-րդ հարֆը [Jackson 2014: 80]: Երբեմն hamza-ն է համարվում հարֆ՝ 'alif-ի փոխարեն, քանի որ համապատասխանում է հարֆի կանոններին [Гранде 2001: 4]: Որոշ լեզվաբաններ, օրինակ՝ Վիկտոր Խրակովսկին, գտնում են, որ դրանք երկուսն էլ հարֆեր են, և ստացվում է, որ արաբերենի հարֆերը ոչ թե 28 են, այլ 29:

Գրավոր խոսքում հանդիպում է հարֆի՝ միայն բաղաձայնային մասի պատկերումը: Հարաքաները խիստ հազվադեպ են. կրոնաքաղաքական, առևտրատնտեսական կարևոր նշանակություն ունեցող այլ տեքստերից, այդ թվում՝ Ղուրանից, բացի դրանք կիրառվում են հիմնականում դասագրքերում: Շարունակելով գրավոր խոսքի բնութագրումը, անհրաժեշտ է հավելել, որ արաբերենի գրային համակարգի համար կիրառական է երկու հասկացություն՝ *hijā'* և *'abjadiyya*<sup>8</sup>: Առաջինն այբուբենն է, հետևյալ հերթականությամբ՝ ا (ā), ب (b), ت (t), ث (t), ج (j), ح (h), خ (x), د (d), ذ (d), ر (r), ز (z), س (s), ش (š), ص (s), ض (d), ط (t), ظ (d), ع (‘), غ (g), ف (f), ق (q), ك (k), ل (l), م (m), ن (n), ه (h), و (w), ي (y): Մյուսը հատուկ համակարգ է, որում յուրաքանչյուր

<sup>7</sup> Հայտնի է, որ ամանակը (լատիներեն՝ *mora*՝ ժամանակամիջոց), տևողության նվազագույն միավոր էր անտիկ տաղաչափության մեջ: Այն ցույց էր տալիս կարճ վանկի արտասանության ժամանակամիջոցը: Երկար վանկն իր տևողությամբ հավասար է 2 ամանակի: Հետևաբար, երկվանկ ուղքերը (քորեյ, յամբ), որոնք կազմաված են մեկ երկար և մեկ կարճ վանկերից, ունեն երեք ամանակ, իսկ եռավանկ ուղքերը (դակտիլ, ամֆիբրաքսոս, անապեստ)՝ չորս ամանակ և այլն: Բանաստեղծության տողերն ունեն արտասանության հավասար ժամանակամիջոցով նույն թվով ամանակներ: Ամանակը կարող է կազմված լինել նաև միայն բաղաձայն հնչյունից. այն հաջորդ բաղաձայնին միանում է առանց ձայնավորի:

<sup>8</sup> Գոյություն ունի նաև «աբուգիդա» համակարգը, որը բացառում է ձայնավորները: Այն կիրառելի է գեեզի, ինչպես նաև՝ հնդկերենի ու կանադական վանկային գրի համար:

գրույթ իրենից ներկայացնում է բաղաձայն՝ իր կազմում չբացառելով ձայնավորը: 'abjadiyya եզրույթը ձևավորվել է a, b, j, d հարֆերի հերթականության արդյունքում, որը հատուկ է ոչ միայն արաբերենի, այլև դրանից վաղ առաջացած եբրայերեն, ասորերեն ու փյունիկերեն լեզուների գրային համակարգերին: Պետք է նշել, որ այդ չորս գրույթներն այբբենական հաջորդականությամբ չէ, որ գրված են. բանն այն է, որ դրանք գրային համակարգ-այբուբենում իրար հաջորդող գրույթներից չորս՝ իրարից արտաքին տեսքով տարբերվող գրույթներ են: Ավարտելով իրար ոչ նման բոլոր հարֆերը՝ ըստ այբբենական հերթականության, հետագայում գրվում են իրար արդեն նմանվողները՝ այբուբենը սկսելով նորից<sup>9</sup>:

Հարկ է նշել, որ արաբերենի գրային համակարգն առաջացել է նաբաթեական գրից: Վաղագույն՝ փյունիկյան այբուբենից (մ. թ. ա. 2-րդ հազարամյակ) ծագում է արամեական գիրը, որի տարատեսակներից է նաբաթեական այբուբենը: Առաջին վիճագիր հուշարձաններից են լիհյանական, սամուդական և սաֆայական գրությունները, որոնք վերագրվում են Սաուդյան Արաբիայի տարածքում գոյություն ունեցած Լիհյան (*lihyān*) և Սամուդ (*tamūd*) պետական կազմավորումներին և Հարավային Սիրիայի Սաֆա (*safa*) տեղանքին [Белова 2003: 16]: Արաբերենի առաջին գրավոր հուշարձանը գտնվել է Սիրիայի Չաբադ գյուղում (512 թվական): Այդ եռալեզու (հունարեն, արամեերեն, արաբերեն) արձանագրությունում գործածվել են արաբերենի 22 գրանշաններ, որոնցից յոթը միանման են [Gruendler 1993: 13-14]:

Արաբերենի գրային համակարգում խիստ կարևոր նշանակություն ունեն, այսպես կոչված, «կետերն ու գծերը»՝ դիակրետիկ նշանները: Ի սկզբանե դրանք գոյություն չեն ունեցել. արդյունքում իրարից չեն տարբերվել, օրինակ, ﺀ ﺕ ﺏ գրանշանները, և դրանք հասկացվել են ըստ կոնտեքստի: Միայն 7-րդ դարում Աբու ալ-Ասուադ ադ-Դուալին (603-689) ներմուծում է լրացուցիչ գրային նշանները՝ գունավոր կետերով զանազանելով իրար նման գրույթները [Рыбалкин 2003: 70-72]: Նրան է վերագրվում նաև հարաքանների ներմուծումը:

---

<sup>9</sup> Նույն սկզբունքով են կազմվում նաև 'abjadiyya թվականները (28 գրանշան՝ 1-9 միավորներ, 1-9 տասնավորներ, 1-9 հարյուրավորներ, իսկ վերջին 28-րդը՝ հազար):

Արաբերենի գրային համակարգին հատուկ են նաև բառասկզբում հանդիպող մադդան (*madda*) և վասլան (*waṣla*), բառամիջում և բառավերջում հանդիպող շադան (*šadda*), անունների վերջում գրվող թանվինը (*tanwīn*)<sup>10</sup>: Երբ բառասկզբում հանդիպում են 'alif-ը և hamza-ն, ապա գրվում է մեկ 'alif **madda** նշանով (Ā): **Waṣla**-ն դարձյալ դրվում է միայն 'alif-ի վրա՝ դրանով ցույց տալով վերջինիս հնարավոր սղումը խոսքի հոսքում: Բառասկզբում hamza-ն գրվում է մշտապես և միայն 'alif-ի վրա կամ տակ, և կախված իր վրա գրվող ձայնավորից՝ կարող է կարդացվել a, u, i: Երբեմն hamza-ն և 'alif-ն ավելացվում են բառասկզբում, երբ բառը սկսում է ուժեղ բաղաձայնով, որը չունի ձայնավոր հնչյուն (Սթանբուլ-Իսթանբուլ): Եթե խոսքի հոսքի ժամանակ այն չի կարդացվում, և արդյունքում նախորդ ու տվյալ բառերը միանում են իրար, դա կոչվում է «միացնող» (*waṣl*): Եթե կոկորդային շփականը հստակորեն հնչում է, ապա այն կոչվում է «կտրող» (*qaṭʿ*), քանի որ «կտրում է» խոսքը: Արաբերենի արմատի ներսում նույնահունչ երկու հարֆեր, որոնցից մեկը կրում է sukūn, իսկ մյուսը՝ որևէ ձայնավոր, հանդես են գալիս որպես մեկ գրույթ՝ վրան **šadda** (◌◌) գրանշանով: Այդպիսով, արմատական երկրորդ հարֆն ունենում է *sukūn*, և կարծես «թաքնված է» *šadda*-ի տակ: Այս երևույթը հայտնի է որպես «*tašdid*»:

Այժմ կարելի է անդրադառնալ 'alif-ի և hamza-ի խնդրին՝ արդեն գրավոր խոսքի տեսանկյունից: 'Alif-ը բաղաձայն բաղադրիչ ունեցող հարֆերին հատուկ գրային պատկերում ունի, դրանով իսկ տեղ ունենալով այբուբենում, մինչդեռ բաղաձայն արտահայտող hamza-ն գրառվում է ձայնավորների գրությանը հատուկ լրացուցիչ գրանշանների տեսքով: Hamza-ն գրվում է առավել ուժեղ ձայնավորը պատկերող հարֆին՝ եթե «i», ապա՝ *yā'*, եթե «u», ապա՝ *wāw*, եթե «a», ապա՝ 'alif, իսկ եթե ձայնավորը չունեն թե՛ hamza-ն, թե՛ դրան նախորդող հարֆը, ապա hamza-ն գրվում է ուղղակի տողի վրա: 'Alif-ից են սկսում նաև սեմական այս լեզուների գրային համակարգերը՝ փյունիկերեն ('Ālep' Ⲙ, մ. թ. ա. 12-րդ դար), եբրայերեն ('Ālef' א, մ. թ. ա. 2-րդ դար), արամեերեն (Ālap' ܐ, մ. թ. ա. 8-րդ դար), դասական ասորերեն (Ālap' ܐ, մ. թ. ա. 2-րդ դար): Գրույթը հանդիպում է նաև հարավարաբական (ʾ) ու գեեզի (አ) գրային համակարգերում, սակայն դրանք 'alif-ով չեն սկսում [Watson 2002: 1-2]:

<sup>10</sup> tanwīn-ի մասին նկարագրությունը տրված է սույն աշխատանքի ձևաբանության բաժնում՝ 67-րդ էջում:

Ինչպես վերը նշվեց, յուրաքանչյուր հարֆ հանդես է գալիս երեք ձայնավորներից որևէ մեկով, սակայն 'alif հարֆը չի կարող կրել դրանցից և ոչ մեկը: Տաղաչափության կանոններից ելնելով՝ միմյանց հաջորդող հարֆերից առնվազն մեկը պետք է ձայնավոր ունենա: Հետևաբար, 'alif-ից հետո պետք է լիներ միմիայն ձայնավոր ունեցող հարֆ: Ենթակայական դերբայ կամ բայանուն կազմելիս 'alif-ին հաջորդում է սուբուն ունեցող հարֆ. սա հակասում է վերը նշված օրենքին<sup>11</sup>: Բացի այդ, արաբերենում բառը չի կարող սկսել սուբուն ունեցող հարֆով, այսինքն՝ 'alif-ով բառն սկսելը դառնում է անհնարին, և գրվում է hamza: Անվանական և բայական որոշակի բառաձևերում 'alif-ը բացարձակապես չի արտասանվում<sup>12</sup>:

Ինչպես տեսանք, **արաբերենում հնչույթաբանական նվազագույն միավորը, որն իր կազմում ունի մեկական բաղաձայն և ձայնավոր հնչյուն, կոչվում է «հարֆ» (ḥarf):** Այն իր ուրույն տեղն ունի տաղաչափության մեջ: Վերջինս հիմնված է հնչույթաբանական յուրահատկությունների վրա՝ պայմանավորված երկար ու կարճ ձայնավորների գոյությամբ: Բանաստեղծությունը կազմվում է տարբեր երկարություն ունեցող վանկաչափական մասնիկների որոշակի հերթականությամբ, որոնց հայտնի համակցությունները կոչվում են ոտք, երկու կամ երեք ոտքերը կազմում են կիսատող, իսկ երկու կիսատողերը՝ բեյթ [Фильштинский 1985: 52]: Արաբական տաղաչափությունն արմատներով հասնում է վաղ քաղաքակրթություններ: Սեմական ժողովուրդների գրականության գրավոր տարբերակը ձևավորվել է Միջագետքի հնագույն՝ շումերական գրական ավանդույթի սահմաններում: Աքքադական (ասորաբաբելոնական՝ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի ավարտ-մ. թ. ա. 1-ին հազարամյակի կեսեր), ինչպես նաև՝ ժամանակակից Սիրիայի ու Լիբանանի տարածքում գոյություն ունեցած ուգարիտյան (մ. թ. ա. 14-13-րդ դարեր), Իսրայելի ու Պաղեստինի

<sup>11</sup> Դիցուք՝ کتب (kataba) նշանակում է գրել, իսկ գործողություն կատարողը դառնում է كاتب (kātib): Արմատի կազմում եղան երեք տարբեր բաղաձայններ: خَصَّ (xaṣṣa) նշանակում է ինչ-որ բան հատուկ անել, և գործողություն կատարողը դառնում է ոչ թե خَاصِّ (xāṣṣ), այլ خَاصَّ (xāṣṣ): Երկրորդ ու երրորդ արմատական հարֆերը կրկնվում են, դրված է շադդա (ّ): Ստացվում է, որ սուբուն ունեցող շադդան և սուբուն ունեցող 'alif-ը հայտնվում են կողք կողքի, ինչն արաբերենում թույլատրելի չէ:

<sup>12</sup> Եթե عالجوا المريض ('ālijū almarīd) նշանակում է՝ նրանք բուժեցին հիվանդին, իսկ عالج المريض ('ālijū almarīd)՝ հիվանդին բուժողները: Օրինակները միմյանցից տարբերվում են միայն 'alif-ով, որը, սակայն, չի արտասանվում: Դա գրվում է դերբայի ու ձևաբայի տարբերությունը ցույց տալու համար: Նմանատիպ դեպքերն առկա են բայի հրամայական ձև, ներկա ժամանակի խոնարհված ձևեր կազմելիս:

տարածքում՝ հին եբրայական (մ. թ. ա. 12-2-րդ դարեր), Սիրիայում ու Իրաքում՝ դասական ասորական (մ. թ. 2-15-րդ դարեր), Եթովպիայում՝ եթովպական (մ. թ. 4-րդ դարից մինչ այժմ) գրական ավանդույթները սեմական տաղաչափության ձևավորման փուլերն են: Վերջին ձևը 6-րդ դարում առաջացած արաբական տաղաչափությունն է, որը հայտնի է *‘ilm al-‘arūd* անվամբ [Фролов 1991: 19]: Որոշ քերականագետներ կարծում են, որ այն կապված է վանկաչափության հետ, բառացի՝ *ya‘riḏu ‘aleyhi*: Մեկ այլ բացատրության համաձայն, եզրույթն ի հայտ է եկել այն ժամանակ, երբ ալ-Խալիլը մշակել է արաբական տաղաչափությունը Մեքքայում. քաղաքը հայտնի էր նաև որպես «*al-‘Arūd*»: Գերմանացի արևելագետ Գեորգ Յակոբը եզրույթի առաջացումը կապում է հուզելյացի բանաստեղծների հետ, որոնք համեմատում էին երկը կամակոր էգ ուղտի (արուդ) հետ: Բրիտանացի արևելագետ Էդվարդ Լեյնն արուդ եզրույթի ծագումը բնորոշել է իր սկզբնական իմաստով. այդպես է կոչվում վրանի կենտրոնում գտնվող հիմնասյունը [Фильштинский 1985: 51-52]: Այժմ այն հանդիպում է 2 նշանակություններով. լայն իմաստով՝ արաբական տաղաչափություն, և նեղ իմաստով՝ բանաստեղծական առաջին կիսատողի վերջին մասը:

Արուդի ուսումնասիրության եվրոպական քերականության մեջ առաջին հիշատակումը կատարել է Ֆիլիպո Գվադանյոլին արաբերենի քերականության «*Inftitutiones Arabicæ*» գրքում (Հռոմ, 1642): Վիլյամ Ջոունզի՝ իսլամադավան ժողովուրդների տաղաչափության և պոետիկայի վերաբերյալ աշխատությունում (1774) նկարագրվում էին արաբական բանաստեղծության 16 չափերը, կասիդան, հոետորական և ոճական հնարներն ու դարձվածքները և այլ հարցեր: Մինչև 1870-ական թվականները բոլոր հետազոտողների մոտ տիրապետում էր արաբական բանաստեղծության քանակական բնույթի մասին պատկերացումը, որն անմիջականորեն բխում էր արուդի համակարգում շեշտի, կամ այդ հասկացությանը մոտ կանգնած հասկացության բացակայությունից [Կարաբեկյան 2004: 3]: Արուդ եզրույթը երբեմն հասկացվում էր ամենալայն իմաստով՝ ընդհուպ մինչև *‘ilm al-ši‘r* արաբական բանաստեղծության մասին գիտություն: Դրանում առանձնացվում է հանգի մասին ուսմունքը՝ *‘ilm al-qawāfi* [Фильштинский 1985: 51]:



Արաբական տաղաչափական համակարգի հիմնադիրը համարվում է ալ-Խալիլ իբն Ահմադը: Այն հարՖը, որն ունի ձայնավոր հնչյուն (*ḥarf mutaḥarrik*), նա ներկայացրել է որպես գիծ՝ |, իսկ ձայնավոր չունեցող հարՖը (*ḥarf sākin*)՝ կլոր կետ՝ •: Այդ ժամանակ արաբական բանաստեղծությունն արդեն իսկ հաստատված գրական ավանդույթ ուներ, որի արմատները հասնում էին նախախլամական շրջան: Չափածո ստեղծագործությունները գրեթե առանց հիշողության վրա հենվելու փոխանցելիս կամ ստեղծելիս հեղինակն օգտվում էր ավանդական բանաձևերից, որոնց հերթականությամբ ստեղծում էր չափեր, դրանք շարահյուսում տաղաչափորեն կարգավորված բանաստեղծություններում:

Արաբական բանաստեղծական տողի՝ ավելի փոքր մասնիկների բաժանվելու հիմնական սկզբունքներից մեկն է արուդային գրառումը, որը հնարավորություն է տալիս ճիշտ մասնատել արաբական բանաստեղծական տողը: Եվ միայն արուդային բաժանումից հետո առանձնացվում են բաղաձայն և ձայնավոր հնչյունները [Կարաբեկյան 2002: 4-7]:

Կարելի է նկատել, որ արաբական, հայկական ու ռուսական, ինչպես նաև՝ եվրոպական որոշ արաբագիտության դպրոցների ներկայացուցիչներ կարևորում են հարՖի՝ բաղաձայն և ձայնավոր հնչյունների անբաժան միություն լինելու բացառիկությունը: Դրան հակառակ, հարՖը կարող է թարգմանվել նաև որպես հնչյուն-տառ որոշ ռուսական [Юрманов 1999: 6], ինչպես նաև եվրոպական ու ամերիկյան տարբեր դպրոցների ներկայացուցիչների [McCarthy and Prince 1990: 212] կողմից: Վերջիններս պարզաբանումներ են տալիս արաբերենի բեկյալ հոգնակիի վերաբերյալ՝ դիտարկելով հարՖն ու հարաքան միևնույն հարթության վրա: Արաբերենում բառը դիտարկվում է որպես վանկերի շարույթ՝ ինչպես հնդեվրոպական լեզուներում: Վանկերն արտասանական այնպիսի նվազագույն միավորներ են, որոնք հնչեղությամբ ավելի ուժեղ են իրեն սահմանազատող հնչյուններից և սերտ արտասանական ամբողջություն են կազմում իրենց բաղադրիչներով: Ստացվում է, որ եթե երկու՝ կողք կողքի գրվող բաղաձայններից մեկն ունի որևէ կամայական ձայնավոր, իսկ մյուսը՝ ոչ, ապա դրանք կազմում են մեկ վանկ՝ դրանում ընդգրկվելով երկու հարՖ:

Վանկաչափության վերաբերյալ մեկ այլ ուսումնասիրության մեջ [Watson 2002: 128-133] ներմուծված են համակարգի հիմնական բնութագրիչ մասնիկները՝ ամանակը՝ *mora* ( $\mu$ ), վանկը՝ *syllable* ( $\sigma$ ), բանաստեղծական ոտքը՝ *foot* (F), նվազագույն բառը՝ *phonological word* ( $\omega$ ): Նվազագույն բառ մաս կազմող ոտքերը ներկայացված են հնդեվրոպական լեզվաընտանիքին բնորոշ հունական տաղաչափության հանգավորման տեսակներով: Բառերի այսպիսի բաժանման արդյունքում ստացվեցին միավանկ, երկվանկ ու եռավանկ բառեր: Առանձնացվում են *պիրիքսիոս*, *քորեյ*, *յամբ*, *սպոնդեյ* երկվանկ միավորները:


Ըստ բառակազմական բուրգի՝ բառը գերակայում է մնացած անդամներին: Դա նշանակում է, որ նվազագույն բառը պետք է իրենից ներկայացնի գոնե մեկ ոտք: Որպես նվազագույն բառ՝ այն ներկայանում է երկու վանկով, քանի որ վերջին հարՖն ունի դադարային ձայնավոր: Հունական տաղաչափության չափսերով են ներկայացված նաև բանաստեղծական ոտքերը:

Գծագիր 1



Գծագիր 1-ում նվազագույն բառն է, որը կազմված է երկու ամանակից, ներկայացված է որպես միավանկ բառ: Ունենալով մեկ վանկ՝ այն չի կրում երկվանկ բառերի համար սահմանված հունական տաղաչափության չափերը:

Գծագիր 2



Վանկ հասկացությունը գծագիր 2-ում պայմանական է. բառավերջի դադարային ձայնավորը չի արտասանվել, ուստի վերջին հարՖը ներկայացվել է որպես նախորդ վանկի վերջավորություն, և ստացվել է քորեյան արտասանություն:

*Աղյուսակ 2*

$\sigma \ \sigma$ $\downarrow \ \downarrow$ $\mu \ \mu$	<p>Քորեյ. արաբերենի երկար ձայնավորների բացակայության ժամանակ շեշտադրվում է առաջին ամանակը, օր.՝ <i>asad</i>, <i>xašab</i> և այլն</p>
$\sigma \ \sigma$ $\downarrow \ \swarrow \searrow$ $\mu \ \mu \ \mu$	<p>Յամբ. երկրորդ ձայնավորը շեշտվում է երկար ձայնավոր լինելու պատճառով, օր.՝ <i>himār</i>, <i>kitāb</i> և այլն</p>
$F_{qu}$ $\sigma$ $\swarrow \searrow$ $\mu \ \mu$	<p>Սպոնդեյ. երկուք բառեր, օր.՝ <i>šābūn</i> և այլն</p>

Ստացվում են երկու՝ իրար հակասող տեսակետներ հարՖի ձևակերպման վերաբերյալ: Ինդիքը լիովին պատկերացնելու համար անհրաժեշտ է հետազոտել հարՖի կիրառություններն առաջին քերականների մոտ՝ եզրույթի մասին ամբողջական պատկերացում ստանալու նպատակով:

### 1.3. Հարֆի հնչույթաբանական և վանկաչափական բովանդակության մեկնաբանումն արաբ առաջին քերականների աշխատություններում

#### 1.3.1. Ալ-Խալիլ իբն Ահմադ

Ալ-Խալիլ իբն Ահմադ ալ-Ֆարահիդին (*al-Xalil ibn 'Aḥmad al-Farahīdī*, 718-791), արաբ բանասեր էր, Բասրայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ: Նա համարվում է արաբական ավանդական լեզվաբանության հիմնադիրներից մեկը: Ծնվել է ժամանակակից Օմանի տարածքում: Տեղափոխվել է Միջագետքի հարավում գտնվող Բասրա քաղաք, որտեղ սովորում է արաբական բանասիրությունը, ուսումնասիրել արաբական գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը: Սկսում է առաջին աշխատության՝ «*Kitāb al- 'Ayn*» բառարանի ստեղծման աշխատանքները: Ալ-Խալիլ իբն Ահմադին է վերագրվում նաև մեկ այլ՝ *Kitāb al- 'Arūḍ*» աշխատությունը, հանդիպում են լրացուցիչ բացատրություններ՝ վանկաչափության նվազագույն մասնիկի մասին: Քերականն ամբողջությամբ նվիրված էր գիտությանը. դա հաստատվում է նաև նրա՝ 791 թվականին Բասրայում վրա հասած մահվան զավեշտական հանգամանքներով՝ խոհերով տարված քայլելիս մզկիթի սյանը զարնվելով [Звегинцев 2007: 45]: Արաբական բանասիրության մեջ իր խոշորագույն ներդրումներն են համարվում արուդի՝ արաբական վանկաչափության համակարգի մշակումը, հարֆի՝ որպես եզրույթի ստեղծումն ու գործածումը, ձայնավոր հնչյունների՝ հարաքանների մշակումը, hamza-ի հայտնագործումը:

Ստորև ներկայացվել են ալ-Խալիլ իբն Ահմադի աշխատության մեջ հարֆ եզրույթի կիրառումները՝ համապատասխան մեկնաբանություններով: Ալ-Խալիլ իբն Ահմադը 'alif-ի խնդրահարույց լինելու պատճառով որոշել է այն ու մյուս երկու թույլ հարֆերը թողնել վերջում: Ընդ որում, բառարանի դասակարգումը չի սկսել նաև երկրորդ հարֆից՝ ب (*bā'*): Եվ քանի որ այբբենական դասավորությունը միևնույնն է, խախտվելու էր թե՛ *hijā'*-ի, թե՛ *'abjadiyya*-ի տեսանկյունից, հեղինակը հարֆերը դասակարգել է ըստ արտասանության տեղի՝ կոկորդից մինչև շուրթեր: Ըստ այդմ, նա բառարանը սկսել է կոկորդային ع (*'ayn*) հարֆից, ուստիև աշխատությունը կոչվում է «*Kitāb al- 'Ayn*»՝ «'Ayn-ի գիրք»:

Հեղինակը նախ քննում է դրա և մյուս բոլոր հարֆերի հնարավոր տարբերակները՝ դարձյալ կոկորդից մինչև լեզվի ծայր՝ մեկ արմատի կազմում, կաղապարի բոլոր հնարավոր տարբերակները քննելով արմատի տակ: Այսինքն՝ առանձին բաժնում ներկայացնում ‘ayn և qāf հարֆերը (զուգադրություն՝ ‘ayn+qāf, qāf+‘ayn), մեկ այլ բաժնում՝ ‘ayn և kāf հարֆերը (զուգադրություն՝ ‘ayn+kāf, kāf+‘ayn), և այսպես շարունակ: Ավարտելով երկու հարֆերի այսպիսի զուգակցությունները, ալ-Խալիլն անցնում է երեք հարֆի՝ ‘ayn, hā’ և qāf (կիրառելի զուգադրություն՝ ‘ayn+hā’+qāf, hā’+qāf+‘ayn, կիրառությունից դուրս մնացած՝ ‘ayn+qāf+hā’, qāf+‘ayn+hā’), այնուհետև՝ ‘ayn, hā’ և kāf (միակ կիրառելի զուգադրություն՝ hā’+kāf+‘ayn), և այսպես շարունակ: Ավարտելով երեք հարֆերի կազմած արմատների քննումը, հեղինակն անցնում է չորս, ապա՝ հինգ հարֆերից կազմված արմատներին: Հարկ է նշել, որ հեղինակը hamza-ն ու թույլ հարֆերը ներկայացրել է որպես մեկ հարֆի տարբեր տեսակներ:

Այդպես ալ-Խալիլը գլուխ առ գլուխ քննում է արաբերենի բոլոր հարֆերը և դրանց հետ կազմված արմատների բոլոր հնարավոր զուգադրությունները: Հաջորդ հարֆի գլուխը ստացվել է նույն համակարգը՝ մեկ մասնիկով պակաս, քանի որ ɛ (‘ayn) հարֆի հետ դեպքն արդեն քննվել է և այսպես շարունակ՝ մինչև վերջին հարֆ: Այդ է պատճառը, որ աշխատության վերահրատարակած 8 հատորներից երկուսը վերաբերում են միայն ɛ (‘ayn) հարֆին, իսկ վերջին՝ 8-րդ հատորում քննվում են ավելի քան տասը հարֆեր:

Նախքան մասնավոր օրինակների քննումը, թե երբ է ալ-Խալիլը գործածել հարֆ եզրույթը, անհրաժեշտ է ներկայացնել կարևոր մի հանգամանք: Հեղինակի ապրած ժամանակաշրջանում «հարֆ» բառը նշանակել է ինչ-որ բանի մաս, հատված: Դրա ապացույցն են հանդիսանում հետևյալ օրինակները.

- 1) Հատոր 3, էջ 210: Այստեղ հեղինակը բացատրում է հարֆ բառը՝ իր բառարանային նշանակությամբ, քննելով hā’+rā’+fā’ զուգադրությունը: Հանդիպում է հետևյալ բացատրությունը՝

حرف السفينة: جانب شقها .

*Նավի խել է [կոչվում, Հ.Հ.] դրա կողային ելունը*

- 2) Հատոր 3, էջ 210: Այստեղ շարունակվում է հարՖ բառի բացատրությունը:
- الحرف: حب كالخردل، والحببة منه حرفة
- ՀարՖ** է կոչվում այն սերմը, որը նման է մանանեխին, և դրա մեկ սերմը կոչվում է:
- 3) Հատոր 6, էջ 67: Այստեղ բացատրվում է jīm+bā'+nūn զուգադրությունը: Հանդիպում է հետևյալ բացատրությունը՝
- الجبين: حرف الجبهة ما بين الصّدين منفصلا عن الناحية، كلّ ذلك جبين واحد، وبعضهم يقول: هما جبينان
- jabīn'* ճակատի այն **մասը**, որն [ընկած է <.<.] ունքերի միջև է, բաժանված երկու կողմի, և այդ ամբողջը կոչվում է մեկ *jabīn*, իսկ ունքը ասում են՝ դրանք երկու *jabīn*-ներ են:
- 4) Հատոր 7, էջ 405: Քննվում է mīm+lām+tā' զուգադրությունը
- الملطاط: حرف من الجبل في أعلاه
- milṭāṭ* է [կոչվում, <.<.] լեռան վերևի **հատվածը**:
- ملطاط البعير: حرف في وسط رأسه
- Ուղղի *milṭāṭ'* գլխի մեջտեղում գտնվող **մասը**:
- 5) Հատոր 5, էջ 165: Այստեղ բացատրվում է dā'+nūn+bā' զուգադրությունը: Հանդիպում է հետևյալ բացատրությունը՝
- ظنب: حرف الساق اليباس من قدم
- Պոչ՝ առաջնորդող չորացած **մաս** [որն աճում է <.<.] ոտքերից:
- Նշված օրինակներում «մաս» կամ «հատված» բառը բնօրինակում հանդիպում է որպես «հարՖ»: Ինչպես նաև՝ նույնպիսի նշանակությամբ են գրված խել և սերմ բառերը: Հետևաբար, հարՖն իր սկզբնական նշանակությամբ եղել է «մաս, մասնիկ» և որպես այդպիսին մտել նաև քերականության գործածության ոլորտ:
- Այժմ կարելի է դիտարկել հարՖի գործածության դեպքերը՝ հնչյութաբանության տեսանկյունից:
- 6) Հատոր 1, էջ 58: Վերը նշվեց, որ ալ-Իսաիլն իր բառարանը գրել է ոչ այբբենական դասավորությամբ: Այստեղ արդեն հանդիպում է հնչյունական համարգի դասավորման իր տարբերակը: Մասնավորապես նշվում է՝

هذه صورة الحروف التي ألفت منها العربية على الولااء، وهي تسعة وعشرون حرفاً: ع ح ه خ غ، ق ك، ج ش ض، ص س ز، ط د ت، ظ ذ ث، ر ل ن، ف ب م، فهذه الحروف الصحاح، وإيها تسعة وعشرون حرفاً منها أبنية كلام العرب

Այսպիսին է այն հարֆերի պատկերը, որոնք հաջորդաբար կազմում են արաբերենի խոսքը. արաբերենի 29 հարֆերն են՝ ‘ayn ḥā’ hā’ xā’ ḡayn, qāf kāf, jīm šīn ḏād, ṣād sīn zāy, ṭā’ dāl tā’, ḏā’, ḏāl ṭā’, rā’ lām nūn, fā’ bā’ mīm, և դրանք ուժեղ հարֆեր են, wāw, ‘alif, yā’, hamza՝ սրանք էլ բոլոր 29 հարֆերը, որ կազմում են արաբերենի բառերը...

Կարելի է նկատել, որ հեղինակը հստակորեն «դասավորել է» արաբերենի հարֆերը կոկորդից մինչև շուրթեր, սակայն նման օրինաչափությունը պահպանվել է միայն 25 «ճիշտ» (կանոնավոր) հարֆի դեպքում: Վերը նշվեց թերի հարֆերի ձևակերպումը՝ այդ խմբում էին կիսաձայները և ‘alif-ը, հետևաբար մյուս հարֆերն արդեն համարվում էին «ճիշտ»: Այդպիսի հարֆերն իրար չեն փոխարինում, չեն սղվում, հազվադեպ ենթարկվում են հնչյունական փոփոխությունների (հիմնականում՝ էմֆատիկ հնչյունների ազդեցությամբ): Ստացվում է, որ նմանատիպ թերի հարֆ է համարվել նաև կոկորդային շփական hamza-ն, քանի որ դուրս է մնացել «ճիշտ» հարֆերի ցանկից: Թույլ հարֆերը դասավորված են պատահականորեն՝ շրթնային wāw, կոկորդային ‘alif, միջնալեզվային yā’, կոկորդային hamza:

7) Հատոր 3, 210 էջ: Այստեղ քննվում է ḥā’+rā’+fā’ զուգադրությունը, որտեղ բացատրվում է հարֆ բառն իր բառարանային նշանակությամբ: Հանդիպում է հետևյալ բացատրությունը՝

حرف: الحرف من حروف الهجاء .

Հարֆ՝ այբուբենի հարֆերից մեկը:

Եթե 6-րդ օրինակում հեղինակը հարֆը նշում էր որպես ձևաբանական մասնիկ, քանի որ դրանով էին կազմվում արաբերենի բառերը, ապա այստեղ հստակ երևում է հարֆի՝ որպես հնչյունի ձևակերպումը, քանի որ հարֆերից է բաղկացած այբուբենը:

8) Հատոր 8, էջ 51: Այստեղ տրված է jīm+rā’+sīn զուգադրության բացատրությունը, որտեղ տրվում է հնչողություն, ձայն նշանակությունը:

جرس الحرف: نغمة الصوت

Հարֆի հնչողությունը ձայնի երաժշտությունն է:

Ինչպես երևում է՝ հարՖն այստեղ հանդես է եկել որպես հնչյուն: Հնչյունները, ըստ հեղինակի, կարող են լինել ձայնավորներ և բաղաձայններ: Դրանց մասին հանդիպում է աշխատության տարբեր հատորներում:

9) Հատոր 3, 352 էջ: «Ձայնավոր» եզրույթը՝ որպես «փափուկ» հարՖ ( الحروف اللينة al-ḥurūf al-leyyina) հերթական անգամ հանդիպում է այստեղ: Բացի այդ, նույն պարբերությունում կա նաև الحروف الصّاح (al-ḥurūf al-ṣiḥāḥ) «ճիշտ հարՖեր»: Դրանք ունեն «ամբողջական» բաղաձայն: Ալ-Խալիլը տեսակավորել է նաև բաղաձայնները:

10) Հատոր 1, էջ 286: Այստեղ բացատրվում է dʿšq (دعشق) բայը, որտեղ հանդիպում են ḥurūf al-ḡalq («սահուն» բաղաձայններ կամ ձայնորդներ)՝ r, l, n և al-ḥurūf al-šafawiyya եզրույթները (շրթնային բաղաձայններ կամ պայթականներ)՝ m, f, b:

11) Հատոր 4, էջ 107: Այստեղ հանդիպում է այսպիսի ձևակերպում.

الحروف الصتم: التي ليست من الحلق

*Այն հարՖերը, որոնք կոկորդային չեն, կոչվում են «սաստկացող» հարՖեր:*

Վերը նշվել էր նաև hamza-ի և 'alif-ի՝ որպես ձևահնչյութային մասնիկներ լինելու խնդրահարույց հանգամանքը: Անհրաժեշտ է նմանատիպ մանրամասն քննության առնել այս դեպքը նաև ալ-Խալիլի աշխատությունում:

12) Հատոր 8, էջ 92: Հանդիպում է hā'+mīm+zay հարՖերի զուգակցությունը, որտեղ hamaza համազա բայի բնութագրվում է որպես *ծակել*, բառացի՝ *ծակ, օղակ անել*: Որպես շարունակություն հանդիպում է հետևյալը՝

الهمزة لانها أقوى من سائر الحروف الجوفية...

*...Hamza անունն է կրում կոկորդային հարՖերից ամենաուժեղը...*

13) Հատոր 1, էջ 17:

...الهمزة هي أول الحروف مخرجا...

*... Hamza-ն առաջին արտասանվող հարՖն է...*

14) Հատոր 1, էջ 58:

...الهمزة، وسميت جوفاً لانها تخرج من الجوف فلا تقع في مدرجة من مدارج اللسان ... hamza-ն կոչվում է կոկորդային, քանի որ դուրս է գալիս (արտասանվում է, <. <.) կոկորդից և չի դիպչում լեզվին...



Այս և վերևի օրինակները պահանջում են մեկ միասնական բացատրություն: Hamza-ն հնչում է կոկորդից, ընդ որում՝ առաջինը, ապա հնչում են արաբերենի մյուս բոլոր հարֆերը: Վերը նշվել էր, որ հեղինակն արաբերենի հարֆերի թիվը համարել է 29, սակայն այստեղ արդեն հստակ ցույց է տալիս hamza-ի դերն արաբերենի հնչյունական համակարգում: Անդրադառնանք 'alif-ին:

15) Հատոր 8, էջ 337: Hamza+lām+fā' երեք հարֆերի զուգակցությամբ հանդիպում է նաև 'alif-ի՝ որպես բառարանային բառի բացատրությունը: Ինչպես նշվել էր վերը, արաբերենում բառը պետք է սկսի բաղաձայնով, հակառակ դեպքում օգնության է գալիս hamza-ն: Ստացվում է, որ պարզապես 'alif-ով որևէ բառ չի կարող սկսել, այդ իսկ պատճառով ինքը՝ 'alif բառը ոչ թե 'alif+lām+fā' հարֆերի, այլ hamza+lām+fā' հարֆերի զուգադրության արդյունքն է:

الالف والاليف. كلاهما حرف

'alif և 'alif' սրանք երկուսն էլ հարֆ են:

Այստեղից կարելի է ստանալ երկու տեղեկություն. նախ՝ 'alif-ը դիտարկվում է հարֆ, և երկրորդ, այդ հարֆն ունի երկու գրելաձև:

16) Հատոր 1, էջ 48: Սկսելով իր բառարանի աշխատանքները՝ ալ-Խալիլը նշել էր, որ 'alif-ով չի կարող սկսել այն: Այժմ կարելի է կարդալ դրա ձևակերպումը՝  
 فلم يمكنه أن يبتدئ التاليف من أول ا، ب، ت، ث، وهو الالف، لان الالف حرف معتل  
 Անհնար է սկսել աշխատությունը 'alif, bā', tā', ṭā' հերթականությամբ, քանի որ 'alif-ը թույլ հարֆ է

17) Հատոր 1, էջ 50:

صارت الياء والواو والالف عن غير طريقة الحروف الصحاح

'alif-ը, yā'-ն և wāw-ն տարբերվում են ճիշտ (կանոնավոր, <. <.) հարֆերից

18) Հատոր 1, էջ 58:

وأربعة أحرف جوف وهي: الواو والياء والالف اللينة والهمزة فمخرجها من أقصى الحلق  
 Չորս հարֆեր դափարկ են՝ wāw, yā', 'alif, hamza, և դա արտասանվում են կոկորդի ամենախորքից:

الالف اللينة والواو والياء هوائية أي أنها في الهواء

Երկար 'alif-ը, wāw-ն և yā'-ն օդային են, քանի որ արտասանվում են օդում:

والحروف الثلاثة الجوف لا صوت لها ولا جرس، وهي الواو والياء والالف اللينة

Երեք հարֆեր, որոնք չունեն հնչողություն՝ wāw-ն, yā'-ն ու 'alif-ն են:

Այլ հատորներում հեղինակն առավել քիչ է գործածել 'alif-ի ու hamza-ի սահմանումները, երբեմն կրկնել այլ բառերով արդեն սահմանածը:

Ալ-Խալիլ իբն Ահմադին վերագրվող մեկ այլ աշխատությունում «*Kitāb al-'Arūd*», հանդիպում են լրացուցիչ բացատրություններ՝ վանկաչափության նվազագույն մասնիկի մասին: Քերականի կողմից համակարգի սկզբունքների և կառուցվածքի մշակման պահին (8-րդ դար) արաբական բանաստեղծությունը նախախլամական ժամանակներ հասնող գրական ավանդույթ ուներ: Այսպիսով, հեղինակի ձեռքի տակ կար մի գրականություն, որի հիմնական մեթոդները ձևավորվել էին իր զարգացման բեղմնավոր՝ բանավոր շրջանում: 5-6-րդ դարերի բանաստեղծներն իրենց ստեղծագործությունները գրում էին և կախում էին մարդաշատ հրապարակներում ու շուկաներում. այստեղից էլ ծագում է դրանք «կախված» (*mu'allaq*) կոչելը: Ըստ մեկ այլ բացատրության՝ դրանք կարծես մարգարիտների պես «կախված» էին մազի պես բարակ թելից (այստեղից էլ մազ՝ *šā'r* և բանաստեղծություն՝ *šī'r* բառերը): Հանպատրաստից և գրեթե առանց հիշողության վրա հենվելու կարգավորված բանաստեղծություններ ստեղծելիս օգտվում են տեխնիկական որոշակի հնարներից: Ստացվում է, որ հեղինակի տրամադրության տակ ավանդական բանաձևերի մի ամբողջություն կար, որոնք նա արագորեն միացնում էր իրար [Կարաբեկյան 2002: 5]:

Ալ-Խալիլը հարֆերը տեսակավորում է երկու խմբի՝ «լուռ» (*ḥarf sākin*), եթե զուրկ է ձայնավորից, և «շարժական» (*ḥarf mutaḥarrik*), եթե կրում է a, u, i ձայնավոր-հարաքաները: Հեղինակը հերթական անգամ հաստատում է արաբերենի խոսքի նվազագույն միավորը՝ հարֆ, որը բաղաձայնի ու ձայնավորի *անբաժան* միություն է: Հենց այստեղ է, որ տաղաչափական որոշակի ձևի կիրառումը հանգեցնում է այն եզրակացությանը, որ հարֆը նվազագույն վանկաչափական միավոր է, քանի որ փաստացի հարֆն է այս ամբողջ համակարգի հիմքում:

Հիմնական մեթոդը, որը հնարավորություն է տալիս ճիշտ մասնատել արաբական բանաստեղծական տողը, բանաստեղծական տողի (բայթի) գրառման հատուկ տեսակն է՝ այսպես կոչված արուդային գրառումը (*al-kitāba al-'arūdiyya*), որը տարբերվում է սովորական գրառումից: Սկզբունքը պարզ է՝ այն ամենն, ինչն արտասանվում է՝ գրվում

է, ինչը չի արտասանվում՝ չի գրվում: Արաբական բանաստեղծական տողն անսխալ կերպով բաժանվում է բաղկացուցիչ գծային միավորների: Դրանից հետո այն վերածվում է արուդային գրառման, այսինքն՝ խոսքը մասնատելով ու կանգ առնելով այնտեղ, որտեղ սուքուն է: Արդյունքում երկար ձայնավորները՝ *ā*, *ū*, *ī*, կմիանան նախորդ բառի վերջին հարֆին՝ որպես դրա երկրորդ մաս: Եթե բառամիջում կա շադդա՝ նույնահունչ երկու բաղաձայնների միություն, որից մեկն ունի սուքուն, մյուսը՝ ոչ, դա «կբացվի» երկու առանձին բաղաձայնների: Եթե բառն ավարտվում է կարճ ձայնավորով, և մյուս բառն սկսում է ձայնավոր ունեցող բաղաձայնով, ապա առաջին բառի՝ սուքուն ունեցող հարֆից հետո հնչող հատվածը կգրվի երկրորդ բառի՝ առաջին հարֆերի հետ՝ կազմավորելով վանկաչափական նոր «բառեր»: Ստացվում է, որ դրա հիմքում ընկած է հարֆը, և ոչ թե դրա կազմում առկա որևէ հնչյուն:

Արաբական տաղաչափական համակարգում նվազագույն մասնիկը ոչ թե առանձին բառն է, այլ բանաձևը: Գծիկների և կետերի (այսինքն՝ ձայնավորվածների և սուքուն կրողների ու այսպես կոչված «երկարների») պարզագույն համադրումներից ստեղծվում են հարֆերի չորս պարզագույն զուգակցությունները, երկուսը՝ երկհարֆ (*sabab*), երկուսը՝ եռահարֆ (*watad*): Սաբաբն իր հերթին լինում է երկու տեսակ՝ թեթև (*sabab xafif* ●|) և ծանր (*sabab taqīl* ||), ուաթադը՝ նույնպես (*watad xafif* ●|| և *watad taqīl* |||): Մնացած համակցությունները, օրինակ, մեծ և փոքր ֆասիլաները (*fāṣila kabīra* ●||| և *fāṣila ṣaġīra* ●|||), վերջին հաշվով բաժանվում են սաբաբների և ուաթադների:

Բոլոր տեսակի համակցություններն ալ-Խալիլ իբն Ահմադը անվանել է *taf'ila*, իսկ դրանցից կազմված ավելի մեծ միավորները կամ բանաձևերը՝ *juz'*: Վերջիններս ութն են, որոնք պայմանական անուններով են կոչվում՝ պահպանելով համակցության պարունակությունը՝ *fa'ūlun* (fa.εu.սø.lu.nø, ըստ արաբական՝ աջից ձախ գրության՝ ●|+●|), որտեղ հստակ երևում են թե՛ ձայնավոր ունեցող երեք, թե՛ սուքուն կրող երկու հարֆերը՝ ինչպես *fa'ūlun* պայմանական եզրույթում), *mafa'īlun* (ma.fa.aø.εi.iø.lu.nø ●|+●|+●|), *mafa'īlatun* (ma.fa.aø.εi.la.tunø ●|+||+●|), *maf'ūlātu* (ma.fø.εu.սø.la.aø.tu |●|+●|+●|), *fā'īlun* (fa.aø.εi.lu.nø ●||+●|=●|+|●|), *mustaf'īlun* (mu.sø.ta.fø.εi.lu.nø ●||+●|+●|=●|+|●|+●|), *mutafā'īlun* (mu.ta.fa.aø.εi.lu.nø ●||+●|+||=●|+|●|+||), *fā'īlātun* (fa.aø.εi.la.aø.tu.nø ●|+●||+●|=●|+●|+|●|):

Ալ-Խալիլը, կողք կողքի գրելով ուաթադներն ու սաբաբները, ստացել է 5 «շրջան»՝ *տարբեր, համընկնող, նմանվող, խառնահավաք, մոտավոր* (տե՛ս հավելված 1): Այսպես ստացվել են բանաստեղծական 16 չափեր, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված են «*Kitāb al-‘Arūḍ*» գրքում առանձին գլուխներով կամ մասերով՝

- **tawīl** (fa.εu.uø.lu.nø, ma.fa.aø.εi.iø.lu.nø, fa.εu.uø.lu.nø, ma.fa.aø.εi.iø.lu.nø ...)
- **madīd** (fa.aø.εi.la.aø.tu.nø, fa.aø.εi.lu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø, fa.aø.εi.lu.nø ...)
- **basīt** (mu.sø.ta.fø.εi.lu.nø, fa.aø.εi.lu.nø, mu.sø.ta.fø.εi.lu.nø, fa.aø.εi.lu.nø ...)
- **kāmīl** (mu.ta.fa.aø.εi.lu.nø, mu.ta.fa.aø.εi.lu.nø, mu.ta.fa.aø.εi.lu.nø ...)
- **wāfir** (ma.fa.aø.εi.la.tunø, ma.fa.aø.εi.la.tunø, ma.fa.aø.εi.la.tunø ...)
- **hazaj** (ma.fa.aø.εi.iø.lu.nø, ma.fa.aø.εi.iø.lu.nø, ma.fa.aø.εi.iø.lu.nø ...)
- **rajaz** (mu.sø.ta.fø.εi.lu.nø, mu.sø.ta.fø.εi.lu.nø, mu.sø.ta.fø.εi.lu.nø ...)
- **ramal** (fa.aø.εi.la.aø.tu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø ...)
- **sarī**՝ (mu.sø.ta.fø.εi.lu.nø, mu.sø.ta.fø.εi.lu.nø, ma.fø.εu.uø.la.aø.tu ...)
- **munsariḥ** (mu.sø.ta.fø.εi.lu.nø, ma.fø.εu.uø.la.aø.tu, mu.sø.ta.fø.εi.lu.nø ...)
- **xafīf** (fa.aø.εi.la.aø.tu.nø, mu.sø.ta.fø.εi.lu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø ...)
- **muḍari**՝ (ma.fa.aø.εi.iø.lu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø, ma.fa.aø.εi.iø.lu.nø ...)
- **muqtaḍab** (ma.fø.εu.uø.la.aø.tu, mu.sø.ta.fø.εi.lu.nø, mu.sø.ta.fø.εi.lu.nø ...)
- **mujtaṭ** (mu.sø.ta.fø.εi.lu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø, fa.aø.εi.la.aø.tu.nø ...)
- **mutaqārib** (fa.εu.uø.lu.nø, fa.εu.uø.lu.nø, fa.εu.uø.lu.nø, fa.εu.uø.lu.nø ...)
- **mutādarik** (fa.aø.εi.lu.nø, fa.aø.εi.lu.nø, fa.aø.εi.lu.nø, fa.aø.εi.lu.nø ...)

Այս չափերը սկսեցին կիրառվել ոչ միայն արաբերենում, այլև արաբական գրային համակարգ օգտագործող լեզուներում: Դրանցից որոշներում չկան էմֆատիկ հնչյուններ, ինչպիսին է, օրինակ, «ժ» լեզվաքմային ձայնեղ բաղաձայնը, ուստի այդ լեզուներում վանկաչափական համակարգը հնչում է որպես [aruz]:

Ամփոփելով այս երկու աշխատությունները՝ կարելի է եզրակացնել, որ ալ-Խալիլ իբն Ահմադը կիրառել է հարՖ եզրույթը որպես բառային կաղապարի բաղկացուցիչ նվազագույն, անբաժանելի մասնիկ, ինչով էլ հարՖը տեղ է գտել տաղաչափական համակարգի հիմքում:

### 1.3.2. Սիբավեյհի

Ալ-Խալիլ իբն Ահմադի աշակերտներից ազգությամբ պարսիկ Աբու Բիշր Ամր իբն Օսման իբն Կանբարը (*'Abū Biṣr 'Amr ibn 'uṭmān ibn Qanbar 760-797*), ով հայտնի է Սիբավեյհի (*sībawayhi*) անունով [Hoyland 2001: 247]: Երբ Սիբավեյհին պատանի էր, նրա ընտանիքն Իրանից տեղափոխվում է Բասրա: Այդ ժամանակաշրջանում Արաբական խալիֆայության կենտրոնական նահանգներում (Սիրիա-Պաղեստին, Միջագետք, Արաբական թերակղզի) կրթությունն ու գիտությունը կապված էին նոր կրոնի լեզվի՝ արաբերենի յուրացման աստիճանի հետ: Դեռ 750 թվականին տեղի էր ունեցել դինաստիական փոփոխություն. Օմայաններին (661-750) փոխարինելու էին եկել Աբբասյանները (750-1258): Խալիֆայության քաղաքական, մշակութային և տնտեսական կենտրոնը դառնում է Եփրատ և Տիգրիս գետերի Միջագետքը, որտեղ զգացվում էր նաև իրանական մշակույթի ազդեցությունը: 762 թվականին հիմնադրվում է նորակառույց մայրաքաղաք Բաղդադը [Фильштинский 2006: 31]:

Սիբավեյհին նախընտրությունը տալիս էր ավելի շատ իր քերականագիտական աշխատության շարադրմանը, քան ղուրանական գիտությունների և արաբերենի դասավանդմանը: Հարուն ալ-Ռաշիդ խալիֆի օրոք (786-809) Սիբավեյհին մեկնում է Բաղդադ, որտեղ տեղի է ունենում իր և Քուֆայի դպրոցի հիմնադիր ներկայացուցիչ ալ-Քիսայիի բանավեճը: Պարտվելով դրանում՝ Սիբավեյհին հեռանում է Պարսկաստան, որտեղ կնքում է իր մահկանացուն [Звегинцев 2007: 47]:

Զվեգինցևն ալ-Խալիլի աշակերտներ Իսա ալ-Սակաֆիին, Յունուս իբն Հաբիբին և Սիբավեյհիին համարում է արաբական լեզվաբանության երեք առաջնորդներ [Звегинцев 2007: 43]: Սիբավեյհին հեղինակել է առաջին քերականագիտական աշխատությունը՝ «*al-Kitāb*» [Versteegh 1997: 4], որի վերահրատարակված օրինակը բաղկացած է տասը հատորից: Ժամանակակիցները դա բնութագրել են որպես քերականության ուսումնասիրության ու կանոնակարգման գազաթնակետ [Рыбалкин 2005: 161]:

Ինչպես հայտնի դարձավ, հարՖ հասկացության հետ պետք է կապվի հիմնականում տարբերակիչ գործառույթների իրականացումը, իսկ հարաքա

(ձայնավոր) հասկացության հետ՝ այն գործառույթները, որոնք թույլ կտան ապահովել այդ միավորի շարժումը և անցումը հաջորդ միավորին: Այսպիսով, որ հարաքա հասկացությունը չունի հնչույթային բովանդակություն, այն հանդես է գալիս հարՖի ներսում՝ ընդգծելով տվյալ հարՖի սահմանը: ՀարՖը դառնում է խոսքի նվազագույն հատույթ՝ վանկաչափական հատկանիշների հարաբերությունների մի ամբողջություն: ՀարՖի և արաբերենի այլ եզրույթների առաջին սահմանումները զետեղվեցին Սիբավեյհիի «Գրքում» [Baalbaki 2004: 128]: Փաստորեն, դա ոչ միայն Սիբավեյհիի, այլև իր ուսուցիչ ալ-Խալիլի գաղափարների գիտական աշխատանքի արդյունքը [Рыбалкин 2005: 105]:

«*Al-Kitāb*» աշխատությունը հետազոտելիս պարզ է դառնում, որ հարՖեր են կոչվում բառի այն մասերը, որոնք ունեն որևէ ձայնավոր: Որոշյալ հոդի մասին հատվածում<sup>13</sup> գրված է.

أنهم أدخلوا الألف واللام في هذا الحرف

... Ավելացնում են 'alif-ը և lām-ը գոյականի առաջին հարՖի վրա... 'alif՝ «a» հարՖի անվանումն է, lām՝ «l» հարՖի: Որոշյալ հոդը գրվում է բառի սկզբում՝ կցվելով նրա առաջին հարՖին: Այսպիսով, Սիբավեյհին հարՖ անվանեց ոչ միայն այբուբենի այդ երկու գրույթները, այլև անուն խոսքի մաս հանդիսացող բառի առաջին վանկաչափական մասնիկը: Ինքնին պարզ է դառնում, որ այստեղ նույնպես խոսքը գնում է ոչ միայն զուտ բաղաձայնի, այլև նրա հետ միասին հանդես եկող ձայնավորի մասին՝ որպես մեկ ամբողջության:

وقد قُرئ هذا الحرف على وجهين

... Այս հարՖը կարդացվում է երկու եղանակով... այստեղ արդեն հեղինակն ի նկատի ունի հարՖի միայն բաղաձայն հատվածը:

Չորրորդ հատորում ևս, ինչպես և երրորդում, հաճախ հանդիպում է հարՖ եզրույթը՝ որպես վանկաչափական միավոր: Առանձին գլխում քննության է առնվել սղված հարՖի ու հարաքայի հարցը:

لا يلتقي ساكنان وجُعِل حركته كحركة أقرب المتحركات منه

<sup>13</sup> haḏa bāb mā yaj‘alu min al-‘asmā’ maṣḏaran ka-l-maṣḏar alladī fihi al-‘alif wa-l-lām ( هذا باب ما يجعل من (الأسماء مصدرًا كالمصدر الذي فيه الألف واللام *սա այն գլուխն է, որ անունը դարձնում է աղբյուր, որ ունեն 'alif և lām (որոշյալ հոդ Հ.Հ.)*

... Երկու սուբուններ չեն հանդիպում, և դրա (հարֆի, Հ. Հ.) հարաքան դառնում է նույնը, ինչ առավել մոտ կանգնած հարաքա ունեցող հարֆինն է<sup>14</sup>...

Որպես այդպիսին՝ սղվելու գործառույթ ունեն հիմնականում այսպես կոչված թույլ, թերի հարֆերը՝ 'alif, wāw, yā' (hamza-ի մասին ոչինչ գրված չէ): Դրանց փոխարինելու կգան համապատասխանաբար a, u, i հարաքանները<sup>15</sup>: Նմանատիպ բացատրություններ են տրվում նաև աշխատության վեցերորդ հատորում, որտեղ թույլ հարֆերի քննման դեպքերի բազմաթիվ գլուխներ կան. դրանք վերաբերում են հիմնականում yā' և wāw հարֆերին<sup>16</sup>, խիստ հազվադեպ՝ 'alif-ին: Կարող է սղվել նաև բաղաձայն «ուժեղ» հնչյունը<sup>17</sup>:

Յոթերորդ հատորում առանձին գլուխ նվիրված է hamza-ին<sup>18</sup>:

اعلم أن الهمزة تكون فيها ثلاثة أشياء: التحقيق والتخفيف والبدل

... Հայտնի է, որ hamza-ն ունի երեք գործառույթ (լինում է երեք տեսակի Հ. Հ.)՝ կանոնավոր, թեթև, փոխարինող... Կանոնավոր hamza-ն, ըստ այդմ, այստեղ կոչվում է հարֆ, և իսկապես, կարող է կրել կամայական ձայնավոր կամ սուբուն: Hamza-ի գրության օրենքը ևս բացատրվում է այստեղ, այն է՝ hamza-ն գրվում է առավել ուժգին ձայնավորը պատկերող հարֆին:

Տասներորդ հատորում հանդիպում է հարֆերի քանակի մասին հատուկ գլուխ<sup>19</sup>:

<sup>14</sup> bāb yuharrīku fīhi al-ḥarf alladī yalīhi al-mahḍūf (باب يحرك فيه الحرف الذي يليه المحذوف)՝ գլուխ, որում հարֆի վրա ձայնավոր են դնում, եթե նրան հաջորդում է մեկ այլ՝ սղված հարֆ

<sup>15</sup> Դիցուք որևէ բայ դրված է վերը քննված հատյալ դիրքով. եթե բառավերջի բաղաձայնը հատյալ դիրքում է, այսինքն՝ ունի սուբուն, ապա դրան նախորդող երկար ձայնավորները՝ 'alif, yā', wāw, կսղվեն, քանի որ իրենք նույնպես սուբուն են կրում, իսկ արաբերենում երկու սուբունները կողք կողքի չեն գրվում: Հետևաբար՝ այդ երկար ձայնավորներից առաջ գրվող հարֆը կպահպանի իր a, u, i հարաքանները: Բացի այդ, արաբերենում կա նաև անունների մի խումբ, որտեղ բառավերջի թույլ հարֆը սղվում է անորոշ վիճակում (երբ չունի 'alif-lām բառասկզբում կամ չի հանդիսանում հատկացուցիչ), և որոշյալ վիճակում (միայն այն դեպքում, երբ ունի 'alif-lām, խոսքը չի վերաբերում հատկացուցչին): Այդ բառերը կոչվում են al-'asma' al-xamsa՝ հինգ անուններ: Մանրամասն կքննվի ձևաբանության մասին գլխում:

<sup>16</sup> bāb mā ḥadfa al-yā' wa-l-wāw fīhi al-qiyās (باب ما حذف الياء والواو فيه القياس)՝ գլուխ, որտեղ սղվում են yā' և wāw (հարֆերը՝ Հ.Հ.) զուգահրոջան ժամանակ

<sup>17</sup> Երկակի կամ հոգնակի թիվ կազմելիս՝ երկրորդ և երրորդ դեմքի բայերի վերջում ավելանում է nūn հարֆը, որը տարբեր բայաձևերի պարագայում կարող է կրել տարբեր ձայնավորներ: jazm և nasb դիրքերում այդ հարֆը սղվում է, եթե դրան նախորդում է որևէ թույլ հարֆ. այս բայերը հայտնի են որպես al-af' al al-xamsa՝ հինգ բայեր: Սղման է ենթակա նաև անվան վերջում գրվող երկակիի ցուցիչ nūn հարֆը, եթե այն հանդես է գալիս հատկացուցչի դերում:

<sup>18</sup> haḍa bāb al-hamaz (هذا باب الهمز)՝ uww hamza-ների գլուխն է:

حروف العربية تسعة وعشرون حرفاً: الهمزة والألف والهاء والعين والحاء والغين والخاء والكاف  
والقاف والضاد والجيم والشين والياء واللام والراء والنون والطاء والداد والتاء والصاد والزاي والسين  
والطاء والذال والثاء والفاء والباء والميم والواو

Արաբերենի հարֆերը 29-ն են՝ *al-hamza, al-'alif* (թվարկումը շարունակվում է  
ինչպես ալ-խալիլի մոտ՝ կոկորդից լեզվի ծայր, սույն աշխատանքի 21-րդ էջում,  
աղյուսակ 1, Հ. Հ.), *al-wāw*: Կարելի է նկատել, որ Սիբավեյհիի աշխատությունում ևս  
հարֆերն այբուբենի 'abjadiyya հերթականության չեն (սույն աշխատանքի 23-րդ էջ):

Հաջորդ իսկ նախադասությունում Սիբավեյհին նշել է.

وتكون خمسةً وثلاثين حرفاً بحروف هن فروغٌ وأصلها من التسعة والعشرين وهي كثيرةٌ يؤخذ  
بها وتستحسن في قراءة القرآن والأشعار وهي: النون الخفيفة والهمزة التي بين بين والألف التي  
تمال إمالة شديدة والشين التي كالجيم والصاد التي تكون كالزاي وألف التفخيم

... Հարֆերի թիվը կարող է լինել երեսունհինգ, (ավելացնելով) այնպիսի  
հարֆերով, որոնք նախկին 29 հարֆերի տեսակներն են, և մեծամասամբ վերցված են,  
ավելացնում են Ղուրանի ու բանաստեղծությունների ընթերցանությունը: Դրանք են՝  
թեթև *nūn*-ը, միջանկյալ *hamza*-ն, սաստկություն ունեցող *'alif*-ը, *jim* և *ṣād* հարֆերի  
միջակայքում գտնվող *ṣīn*-ը, որ նմանվում է *zay*-ին, և շեշտված<sup>20</sup> *'alif*-ը...

Հաջորդիվ Սիբավեյհին հնարավոր և անհնարին հարֆերի թիվը հասցնում է 42:

وتكون اثنين وأربعين حرفاً بحروف غير مستحسنة ولا كثيرة في لغة من ترتضى عربيته ولا  
تستحسن في قراءة القرآن ولا في الشعر وهي: الكاف التي بين الجيم والكاف والجيم التي كالکاف  
والجيم التي كالشين والضاد الضعيفة والصاد التي كالسين والطاء التي كالتاء والطاء التي كالثاء والياء  
التي كالفاء

<sup>19</sup> haḍa bāb 'adad al-ḥurūf al-'arabiya wa maxārijuha wa mahmūsiha wa majhūriha wa 'ahwāl mahmūsiha wa majhūriha wa-xtilāfiha ( هذا باب عدد الحروف العربية ومخارجها ومهموسها ومجهورها وأحوال مجهورها ومهموسها ) (واختلافها) *սա գլուխ է արաբերենի հարֆերի քանակի, դրանց արտասանության, խլության ու հնչեղության մասին, խլության ու հնչեղության վիճակների ու դրանց փարբերության մասին*

<sup>20</sup> Արաբերենում իզական սեռի ցուցիչ է հանդիսանում բառավերջի tā' marbūṭa (ة) ձևայթը, որը հնչում է որպես «a», իսկ ամբողջությամբ՝ «atun» («atin» կամ «atan»)՝ համապատասխանաբար jarr և naṣb դիրքերի ժամանակ): Նշենք, որ դրանից առաջ գրվող հարֆը մշտապես կրում է «a» հարաբան: Գիտենք նաև, որ 'alif հարֆը կրում է սուբուն, քանի որ որևէ այլ ձայնավոր կրելիս կվերածվեր hamza-ի: Ստացվում է, որ tā' marbūṭa-ից առաջ գրվող 'alif-ը (օրինակ՝ ṣalāt صلاة աղոթք), ունի յուրահատուկ ընթերցելաձև, որի հետևանքով tā' marbūṭa-ն արտասանվում է ոչ թե «a», այլ «at»: Սիբավեյհին այդ 'alif-ն անվանեց 'alif al-tafxīm (ألف التفخيم), այսինքն՝ շեշտված 'alif: Այդպիսի (tafxīm) եզրույթ է գործածվում նաև էմֆատիկ 4 հնչյունները բնութագրելիս:



... Լինում է և քառասուներկու հարֆ, (ավելացնելով) այնպիսի հարֆերով, որոնք այդքան էլ չեն բարելավում անհարի լեզուն ու շատ չեն համարվում դրանում, չեն բարձրացնում իր ընթերցանության որակը Ղուրանի կամ բանաստեղծություններ կարդալու ժամանակ, դրանք են՝ այն **kāf**-ը, որ *jīm* և *kāf* հարֆերի միջև է, **jīm**-ը, որ նմանեցնում են *kāf*-ին և *jīm*-ին, **jīm**-ը, որ նմանեցնում են *šīn*-ին ու թույլ *ḍād*-ին, **ṣād**-ը, որ նմանեցնում են *sīn*-ին, **ṭā**'-ն, որ նմանեցնում են *tā*'-ին, **ḍā**'-ն, որ նմանեցնում են *tā*'-ին, **bā**'-ն որ նմանեցնում են *fā*'-ին...

Հետագայում հեղինակը նշում է, որ 42 հնարավոր և անհնարին բոլոր հարֆերի հիմքում ընկած է 29 հարֆը: Ապա մանրամասն նկարագրում է՝ թե կոնկրետ որ մասից են այս կամ այն հարֆերը «դուրս գալիս» (հնչում):

Հարֆերի՝ այսպիսի նկարագրությունը հնչյունաբանության տեսանկյունից կարևոր արժեք ունի: Հեղինակն ի նկատի ուներ հարֆն ընդհանրապես՝ որպես վանկաչափական մասնիկ, և մասնավորապես՝ որևէ բաղաձայնի հնչողությունը: Հակառակ դեպքում հեղինակը կնշեր ոչ թե հարֆի ամբողջական անվանումը, այլ սոսկ իր բաղաձայնը:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ Սիբավեյհին հիմնականում տալիս էր ձևակերպումներ, իսկ մնացած դեպքերում պարզապես կիրառում էր այն՝ արդեն առանց բացատրության: Հաճախ եզրույթն օգտագործվում էր ամեն հարֆից առաջ՝ ցույց տալու համար, որ արաբերենի հնչույթաբանական նվազագույն միավորները կոչվում են հարֆեր: Կարելի է եզրակացնել, որ հարֆը կողավորման միավոր է, որը չի կարող հանդես գալ միայն որպես բաղաձայն:

### 1.3.3. Ալ-Մուբառռադ

Բասրայի քերականական դպրոցի հայտնի ներկայացուցիչներից էր նաև արաբ լեզվաբան ալ-Մուբառռադը (*'Abū-l-'Abbās Muḥammad ibn Yazīd al-'Azdī*, 826-898): Նա ծնվել է Միջագետքի Բասրա քաղաքում, կրթվել ժամանակի քերականական դպրոցներում՝ Բասրայում և Քուֆայում: Խալիֆ ալ-Մուֆավաքիլը հրավիրել է իրեն Սամառա՝ աշխատել արքունի դատարանում: Խալիֆի մահից հետո նա տեղափոխվում է Բաղդադ, որտեղ ավելի քան 35 տարի՝ մինչ իր մահը (898) աշխատում է որպես քերականության ուսուցիչ:

Ալ-Մուբառռադի աշխատությունների մեծ մասը հիմնված է Սիբավեյհիի գաղափարների վրա [Baalbaki 2004: 131]: Նա հեղինակել է նաև այլ աշխատություններ քերականության, մասնավորապես՝ ձևաբանության վերաբերյալ: Զբաղվել է նաև պատմագրությամբ: Իր գրքերից կարելի է տեղեկանալ նաև այն մասին, որ Սասանյան վերջին շահ Հազկերտ III-ի դուստրը՝ Շահր Բանու անունով, դարձել է Իմամ Ալիի որդիներից մեկի՝ Հուսեյնի կինը, և չորրորդ իմամի՝ Ալի իբն Հուսեյնի մայրը [Звегинцев 2007:51]: 10-րդ դարի սկզբին քերականագիտական դպրոցների միավորումով առաջացել էր Բաղդադի դպրոցը [Звегинцев 2007: 57]:

Ալ-Մուբառռադը հայտնի է «*al-Kāmil*» աշխատությամբ, որն արաբերենի քերականության լավագույն աղբյուրներից է [Fisher 1989: 135]: Այն հետագայում վերամշակվել է արևելագետ Վիլյամ Ռայթի կողմից (Լայպցիգ, 1864) և հրատարակվել երկու անգամ՝ Ստամբուլում (1869) և Կահիրեում (1891) Այնտեղ կարելի է հանդիպել արաբական հնչյունաբանության (*tajwīd*, التجويد), ձևաբանության (*taṣrīf*, التصريف) և շարահյության (*naḥw*, النحو) կանոնների մանրամասն բացատրության՝ մեջբերելով այս կամ այն հեղինակի խոսքերը, բանաստեղծություններ, պատմվածքներ, Ղուրանից հատվածներ: Իր գլուխներից մեկի սկզբում հեղինակը հատուկ նշել էր, որ ցանկանում է հետաքրքրական դարձնել իր նյութն ընթերցողին՝ կիրառելով այդ մեթոդը: Նման երևույթը շատ է հանդիպում միջնադարյան արաբ քերականների մոտ: Շարունակելով իր ուսուցիչների աշխատանքը՝ ալ-Մուբառռադը հարձերը գործածել է որպես վանկաչափական մասնիկ:

Ալ-Մուբառադն իր աշխատության առաջին հատորի առաջին մասում բացատրում է հետևյալը.

... "كل" ما كان فيه من الحروف التقاء ساكنين لا يقع في وزن إلا في ضرب "منه"...

...«Քուլլ» (արաբերեն՝ յուրաքանչյուր Հ. Հ.) բառում չկան երկու սուբուն ունեցող հարֆեր, և դրա համար արտահայտությունը կազմվում է այսպես՝ «քուլլ մինհու» (թարգմ.՝ նրանցից յուրաքանչյուրը Հ. Հ.)...

Ինչպես վերը նշվել էր, արաբերենում կողք կողքի չեն կարող հաջորդել ձայնավոր չունեցող հարֆեր: Այսինքն՝ երեք հարևան բաղաձայններից առավելագույնը մեկը կարող է ունենալ սուբուն:

Նույն մասում հանդիպում է հետևյալ ձևակերպումը՝

...يتقدم حروف الاسم بعضها على بعض...

...Անուններում<sup>21</sup> հարֆերը ներկայացված են իրարից հետո ...

Հետևաբար, հարֆն այստեղ դարձյալ հանդես է գալիս որպես վանկաչափական նվազագույն մասնիկ, որն ունի ձայնավոր ու բաղաձայն հնչյուններ, և այստեղ խոսքը չի գնում դրանցից որևէ մեկի մասին:

Նմանատիպ մեկ այլ բացատրություն կա առաջին գլխում, որտեղ նշվում է, որ եռահարֆ կապակցության միջանկյալ հարֆի՝ «թուլլ» լինելու դեպքում, կարող են դրանից կազմված անունների մեջ ավելանալ հավելյալ հարֆեր՝

فإن زالت الكسرة وانفصل أحد الحرفين من الآخر رجعت التضعيف فقلت: دانير وقراريط ودواوين، وكذلك إن صغرت قلت قريريظ ودينير

Եթե ավելանում է *kasra* (ī ձայնավոր, սույն աշխատանքի էջ 22 Հ. Հ.), ապա հարֆերից մեկը բաժանվում է մյուսից՝ *danānīr*, *qarārīṭ*, *dawāwīn*<sup>22</sup>, ինչպես նաև դրանց

<sup>21</sup> Վերը նշվել էր, որ արաբերենում «անուններ» խոսքի մասի կազմում են ներառված գոյականները, ածականները, թվականները, մակբայերը:

<sup>22</sup> Երկու ձայնավոր-հարաքա ունեցող քառահարֆ անունները հոգնակի կազմելիս ունեն մինույն ձևը. **maktab** – **makātib**, **majlis** – **majālis**, **xanjar** – **xanājir**: Օրինակներից հետևում է, որ երկու հարֆերի միջև ավելացել է 'alif-ը (ā), ինչպես նաև՝ երկրորդ հարաքան մշտապես դառնում է «i»: Արևմտյան դպրոցների ներկայացուցիչներն այսպիսի ձևն անվանել էին «երկվանկ բառեր», ինչն արաբերենի պարագայում ռելևանտ չէ, քանի որ դրանք քառահարֆ են: **dīnār** – **danānīr**, **qīrāṭ** – **qarārīṭ**, **diwān** – **dawāwīn** օրինակներում տեսնում ենք, որ երկու երկար ձայնավորի առկայության պատճառով արմատական երկրորդ հարֆը կրկնվում է, երկար ī ձայնավորին փոխարինում է կարճ a-ն, դարձյալ ավելանում է կենտրոնական դիրք զբաղեցնող 'alif-ը (ā): Այս փոփոխությունը բխում է 2 սուբունի՝ միմյանց չհանիպելու կանոնից:

փաղաքշականները կկոչվեն *qureyrīṭ, duneynīr*<sup>23</sup>: Սա բացատրելով՝ ալ-Մուբառոադը որպես հարՖ ճանաչեց բառում առկա վանկաչափական բոլոր միավորները (և ոչ՝ առանձին բաղաձայնները կամ ձայնավորները):

ՀարՖերի՝ ըստ հնչողության դասակարգումը հանդիպում է միջնադարյան հեղինակներից շատերի մոտ: Մասնավորապես ալ-Մուբառոադի աշխատության առաջին հատորում, ապա՝ ճիշտ նույնությամբ երկրորդ հատորում, բերվում են կոկորդային հարՖերի օրինակները՝

...وَحُرُوفُ الْحَلْقِ سِتَّةٌ: الْهَمْزَةُ، وَالْهَاءُ وَالْعَيْنُ، وَالغَيْنُ، وَالْحَاءُ، وَالْخَاءُ...

...կոկորդային հարՖերը վեցն են՝ *hamza, hā'*, *'ayn, ġeyn, ḥā'* և *xā'*...

Համեմատելով նախորդ հեղինակների հետ՝ կարելի է նշել, որ Սիբավեյհին այս ցուցակին ավելացնում էր նաև *'alif*-ը, որը, ինչպես և այս օրինակում, այդպես էլ նախորդում, ալ-Մուբառոադը հարՖ չանվանեց:

Վերլուծելով նախախլամական արաբ բանաստեղծ Հասան իբն Սաբիթի ստեղծագործությունները՝ ալ-Մուբառոադը 133-րդ էջում բացատրում է, որ տարբեր դիրքերում բայերի վերջավորությունների հարՖերը կարող են սղվել՝

يحذف من الحرف لالتقاء الساكنين حروف المد واللين، وهي الألف، والياء المكسور ما قبلها، والواو المضموم ما قبلها... والنون تدغم في الياء والواو، وتزاد كما تزداد حروف المد واللين

...երկու հարևան հարՖերի սուբունների պատճառով երկար և փափուկ հարՖերը (ձայնավորներ, <. <.) կարող են սղվել, և այդպիսին են՝ *'alif, yā'* եթե նախորդն ունի *i* ձայնավոր, և *wāw*, եթե նախորդն ունի *u* ձայնավոր: ... և բառավերջի *nūn*-ը սղվում է (հրամայական եղանակում կամ խոնարհման ժամանակ <. <.), և ավելանում է երկար և փափուկ հարՖերը (*'alif*-ը, տվյալ դեպքում <. <.)...

ولكن الشاعر إذا احتاج إلى الحركة اتبع الحرف المتحرك الذي يليه الساكن ما يشاكله، فحرك ... الساكن بتلك الحركة

<sup>23</sup> Փաղաքշական ձևն արաբերենում կազմվում է հետևյալ կերպ. **kalb – kuleyb, fajr – fujeyr** և այլն: Այսինքն՝ առաջին հարաբան դառնում է *u*, բացի այդ՝ ավելանում է *yā'* հարՖը, որից առաջ գրվում է *a* ձայնավորը (միասին արտասանվում է ոչ թե *ay*, այլ *ey*): Դարձյալ, արևմտյան դպրոցների ներկայացուցիչներն այսպիսի ձևն անվանել էին «միավանկ բառեր», ինչն արաբերենի պարագայում կրկին ռելևանտ չէ, քանի որ դրանք եռահարՖ են: Անցնենք ալ-Մուբառոադի օրինակներին՝ **qirāṭ – qureyrīṭ, dīnār – duneynīr**: Տեսնում ենք, որ փաղաքշական ձև կազմող կանոնն այստեղ նույնպես գործում է ինչպես վերևի օրինակում, սակայն սուբունների չհանդիպելու՝ նշած սկզբունքով:

...սակայն բանաստեղծը, եթե ցանկացել է, որ սուքուն ունեցող հաջորդող հարՖը ստանա ձայնավոր, ապա նրա վրա դնում է այն...

Ակնհայտ է, որ այստեղ բացատրությունն արաբական տաղաչափության մասին է, տողում գտնվող բառերն ընդհանուր կանոններին համապատասխանեցնելը: Այստեղ, փաստորեն, հեղինակը հարաքա չհամարեց սուքունը: Այսինքն՝ նա ձայնավոր համարեց գոյություն ունեցող երեքը՝ a, u, i:

إذا حيس اللسان عن الاستعمال اشتدت عليه مخارج الحروف

... եթե լեզուն կապ է ընկնում, սաստկանում է *maxārij al-ḥurūf*-ը (հարՖերի արտասանությունը, < <.)...

Maxārij al-ḥurūf է կոչվում հարՖերի արտասանության տեղը բերանի խոռոչում, որը՝ որպես եզրույթ, ներմուծվել էր շատ ավելի վաղ և հանդիպել Սիբավեյհիի «Գրքում», ապա զարգացել էր հետագա հեղինակների մոտ՝ սերտորեն կապ ունենալով նաև արաբական տաղաչափության հետ: Աշխատության մյուս հատորներում նույնպես հանդիպում են եզրույթի գործածության մի քանի դեպքեր, սակայն դրանք հիմնականում կրկնում էին վերը նշված օրինակները:

Ամփոփելով ալ-Մուբառռադի աշխատության մեջ տեղ գտած խնդրո առարկա եզրույթի ուսումնասիրության դեպքերը, կարելի է արձանագրել, որ հեղինակը, լինելով Բասրայի քերականական դպրոցի վերջին ներկայացուցիչներից, հավատարիմ էր մնացել նախորդների՝ հարՖ եզրույթի կիրառման սկզբունքին՝ այն սահմանելով որպես վանկաչափական նվազագույն միավոր: Նորույթ էր նրա մոտեցումը՝ 'alif-ին, ինչը ցույց է տալիս, որ իր ժամանակ արդեն դա սկսում էր չդիտարկվել որպես առանձին հարՖ: Անհրաժեշտ է ավելացնել, որ հեղինակն 'alif-ը և hamza-ն դիտարկում էր որպես մեկ հարՖ. եթե 'alif-ը ստանում է որևէ ձայնավոր, ապա կոչվում է hamza, իսկ եթե զուրկ է հարաքայից (ունի սուքուն), չի փոփոխվում և մնում է 'alif: Այլ կերպ ասած՝ 'alif-ը hamza-ի «երկար» տեսակն է, ինչպես wāw-ն ū ձայնավորի, իսկ yā'-ն՝ ī ձայնավորի: Նման ձևակերպումը հետագայում ավելի մշակվեց: 'alif-ի՝ առանձին հարՖ համարողների թիվը նույնպես չպակասեց, և արդյունքում շրջանառությունից դուրս չեկավ 29 հարՖի գաղափարը: 'alif-ի համար իբն Զիննին (920-1002) նույնիսկ սահմանվեց այբբենական անուն՝ lā': Արաբերենի այբուբենում այդ հարՖը զբաղեցրեց նախավերջին տեղը՝ yā' հարՖից առաջ, առաջին հորիզոնականը զիջելով կոկորդային շփական hamza-ին:

#### 1.4. ՀարՖ հասկացույթի բովանդակությունն արաբերենի և այլ լեզուների տեսական հնչույթաբանության հասկացակազմի համատեքստում. տիպաբանական վերլուծություն

Հայտնի է, որ արաբերենի գրային հակակարգն իսլամի տարածման արդյունքում այժմ գործածական է մի շարք ասիական և աֆրիկյան երկրներում: Արաբատառ գրային համակարգ ունեցող իսլամադավան ժողովուրդներն, ընդ որում, խոսում են տարբեր լեզվաընտանիքների լեզուներով, այդ թվում՝ *հնդեվրոպական լեզուներ* պարսկերեն (Իրան), քրդերեն<sup>24</sup> (Իրան, Իրաք և Սիրիա), փաշթո (Աֆղանստան և մասամբ՝ Պակիստան), դարի (Աֆղանստան, մասամբ՝ Իրան և Պակիստան), ուրդու (Պակիստան և Հնդկաստան), սինդի (Պակիստան), *այթայան լեզուներ*<sup>25</sup> ույղուրերեն (Չինաստան), մեռած լեզու օսմաներեն (Օսմանյան կայսրություն), *ավստրոնեզիական լեզուներ*՝ մալայերեն և ինդոնեզերեն (Բրունեյ, Մալայզիա, Ինդոնեզիա, Սինգապուր, մասամբ՝ Թայլանդ և Ֆիլիպիններ) և այլն [Աղայան 1987: 673-684]: Արաբական գրային համակարգը հարմարեցվել է այդ լեզուների հնչյունական համակարգին, ավելացվել են որոշ հարՖեր (օրինակ ուրդու լեզուն ունի 58 հարՖ), սակայն պահպանվել է հարՖի բովանդակությունը: Հարկ է ավելացնել, որ հարՖերն այդ լեզուներում չեն պակասել. նույնիսկ hamza-ն, լինելով կոկորդային շփական հնչյուն, գոյություն չունի բազմաթիվ լեզուներում, սակայն արաբական ներմուծված բառերի շնորհիվ այն թափանցել է իսլամադավան ժողովուրդների լեզուներ: Երբեմն այդ

<sup>24</sup> **Հյուսիսային** (քուրմանջի) բարբառը գործածական է Հարավարևելյան Թուրքիայում (պատմական Արևմտյան Հայաստան և Հյուսիսային Միջագետք), Հյուսիսային Իրաքում (պատմական Ասորեստան), Հյուսիսային Սիրիայում (պատմական Ասորիք), Իրանի հյուսիս-արևելքում (Խորասան) և հյուսիս-արևելքում (պատմական Մեծ Հայքի Պարսկահայք նահանգ և Վասպուրական նահանգի արևելյան գավառներ), ընդհանուր առմամբ՝ ավելի քան 15 միլիոն լեզվակիր: **Կենտրոնական** (սորանի) բարբառը (7 միլիոն մարդ) գործածական է Իրանի արևմուտքում (Քուրդիստան և Արևմտյան Ադրբեջան նահանգներ) և Իրաքի հյուսիս-արևելքում (Քրդստան), ընդամենը՝ 7 միլիոն լեզվակիր: **Հարավային** (փալևանի) բարբառն ունի է 3 միլիոն լեզվակիր (Իրանի արևմուտք և Իրաքի արևելք): Թուրքիայում բնակվող քրդերը գործածում են լատինական, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի ու Թուրքմենստանի տարածքում բնակեցված քրդերն ու եզդիները՝ սլավոնական, իսկ արաբական երկրներում և Իրանում բնակվող քրդերը՝ արաբական գրային համակարգը:

<sup>25</sup> Ադրբեջանում և Միջին Ասիայի երկրներում արաբական գրային համակարգն օգտագործել են մինչև 1920-ական թվականների վերջ: Այժմ Իրանում և Աֆղանստանում բնակվող ազարիները, ուզբեկները, տաջիկներն ու թուրքմենները շարունակում են գործածել արաբերենի այբուբենը:

ներմուծումը սահմանափակվում է ուայալ խավի բառապաշարով, ովքեր իսլամական կրթությունը ստացել են արաբերենով [Поливанов 1928: 87]:

Ալ-Խալիլ իբն Ահմադի աշխատություններին վերաբերող մասում քննվեց արաբական տաղաչափության հարցը: Դա վերաբերում էր հարֆին՝ որպես հնչույթաբանական նվազագույն մասնիկի: Եթե հարֆն ուներ ձայնավոր, կոչվում էր «*ḥarf mutaḥarrik*» և արուդային գրությամբ պատկերվում էր որպես գիծ՝ |, իսկ եթե զուրկ էր ձայնավորից՝ «*ḥarf sākin*» և պատկերվում էր որպես կլորակ՝ ●: Փորձենք դիտարկել արաբերենի այբուբենը գործածող երեք տարբեր լեզուների հնչույթային համակարգը՝ արուդի միջոցով:

Սիրիայի ազգային օրհներգի օրինակով առանձնացնել դրա կառուցվածքային բաղադրատարրերը: Դրա անհրաժեշտությունն այն է, որ հարֆը պետք է ցույց տրվի որպես ինքնուրույն և անբաժան միավոր: Բանաստեղծությունն ունի այսպիսի տեսք՝

*Աղյուսակ 3*

ḥumāt ad-diyāri ‘aleykum salam	حُمَاةَ الدِّيَارِ عَلَيْكُمْ سَلَامٌ
‘abat ‘an taḍilla an-nufūsu l-kiram	أَبَتْ أَنْ تَذِلَّ النُّفُوسُ الْكِرَامَ
‘arīnu-l-‘urūbati beytun ḥaram	عَرِينُ الْعَرُوبَةِ بَيْتٌ حَرَامٌ
wa ‘arš uš-šumusi ḥiman lā yuḍam	وَعَرْشُ الشُّمُوسِ حِمَىً لَا يُضَامُ

Այժմ փորձենք վերածել արուդային գրառման, այսինքն՝ գրենք այնպես, ինչպես լսում ենք՝ խոսքը մասնատելով ու կանգ առնելով այնտեղ, որտեղ սուբուն է<sup>26</sup>: Արդյունքում երկար ձայնավորները՝ ā, ā, ī, կհայտնվեն նոր միավորների վերջում, քանի որ դրանք սուբուն են կրում: Եթե բառամիջում կա նույնահունչ երկու բաղաձայնների միություն, որոնցից մեկն ունի սուբուն, մյուսը՝ ոչ, դրանց միավորող շադհան «կբացվի» երկու առանձին բաղաձայնների: Եվ երրորդ, եթե բառն ավարտվում է որևէ երկար ձայնավորով և մյուս բառը սկսում է բաղաձայնով, ապա կգրվի այդ երկար ձայնավորի բաղաձայն տարբերակը՝ սուբուն ձայնավորով: Ստացվում է հետևյալը՝

<sup>26</sup> Արուդային գրառման համար արաբերենում կիրառվում է պարզ սկզբունք՝ كل ما يلفظ يكتب وكل ما لا يلفظ لا يكتب (kull mā yulfaz yuktab, wa kull mā lā yulfaz, lā yuktab), այն, ինչ լսվում է՝ գրվում է, այն ինչ չի լսվում՝ չի գրվում:

hu.ma.aø ta.dø di.ya.aø ri.iø. ea.le.yø ku.mø sa.la.mø	حُمَا تَدِ دِيَا رِي عَلَي كُمْ سَلَم
'a.ba.tø 'a.nø ta.ḍi.lø la.nø nu.fu.uø su.lø ki.ra.mø	أَبْت أَنْ تَذِل لَنْ تُقُو سُلْ كِرَم
ea.ri.iø nu.lø eu.ru.uø. ba.aø ti.be.yø tu.nø ḥa.ra.mø	عَرِي نُلْ عَرُو بَتِ بَي تَنْ حَرَم
wa. 'a.rø šu.šø šu.mu.uø si.iø ḥi.ma.nø la.aø yu.ḍa.mø	وَعَر شُسْ شُمُو سِيَمَنْ لَا يُضَم

Այժմ անցնենք արուդային գրառման հաջորդ փուլին: Գծերով նշում ենք ձայնավոր ունեցող (|), իսկ կետերով՝ ձայնավորներից զուրկ բաղաձայնները (●)<sup>27</sup>:

hu.ma.aø ta.dø di.ya.aø ri.iø. ea.le.yø ku.mø sa.la.mø	● ●  ● ●  ● ●  ●
'a.ba.tø 'a.nø ta.ḍi.lø la.nø nu.fu.uø su.lø ki.ra.mø	● ●  ● ●  ● ●  ●
ea.ri.iø nu.lø eu.ru.uø. ba.aø ti.be.yø tu.nø ḥa.ra.mø	● ●  ● ●  ● ●  ●
wa. 'a.rø šu.šø šu.mu.uø si.iø ḥi.ma.nø la.aø yu.ḍa.mø	● ●  ● ●  ● ●  ●

Ստացվեց միանգամայն նույն պատկեր ունեցող չորս տող: Տեսնում ենք, որ արուդային տեքստը բաղկացած է թեթև սաբաբներից ու թեթև ուաթաղներից միայն: Դրանց կազմած *juz* 'երը բոլորը սկսում են ուաթաղներով: Եթե հաշվի առնենք, որ ուաթաղով սկսում են միայն երեք այդպիսի *juz* ' , այն է՝ *fa 'ulun* (fa.eu.uø lu.nø ●|+●||), *mafa' ilun* (ma.fa.aø ei.iø lu.nø ●|+●|+●||), *mafa' ilatun* (ma.fa.aø ei.la.tu.nø ●|+||+●||): Դրանցից երկրորդն ու երրորդը չունեն այն հերթականությունը, որը տվյալ բանաստեղծությունում է:

Ինչպես և միջնադարյան բանաստեղծություններում, այստեղ ևս կա փոքրիկ շեղում: Կարելի է նայել հավելված 1-ի հինգերորդ շրջանին, որտեղ կա *mutaqarib* չափը:

I տող - ||●|●||●|●||●|●||●\_||●|●||●|●||●|●||●

II տող - ||●|●||●|●||●|●||●|●||●|●||●|●||●|●||●|●

<sup>27</sup> Աղյուսակում կետերն ու գծերը դրվել են հակառակ՝ լատիներենի այբուբենին համապատասխան, իրականում, իհարկե, հակառակ հերթականությունն է՝ արաբերենի այբուբենի՝ աջից ձախ գրելու պատճառով:



Արուդային գրության երկու տողերից առաջինում բանաստեղծության երկու տողերն են, իսկ երկրորդում *mutaqārib* չափը: Վերևի տողում ընդգծվել են շեղումները՝ երկու տեղ բացակայում է երկու միավոր՝ |●: Այսպիսով, ալ-Խալիլի ստացած բանաստեղծական 16 չափերից Սիրիայի օրհներգը գրված է *mutaqārib* չափով, այն է՝ fa.εu.uø lu.nø, fa.εu.uø lu.nø, fa.εu.uø lu.nø , fa.εu.uø lu.nø:

Պարսկերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդ-իրանական ճյուղի իրանական ենթաճյուղի արևմտյան ենթախմբին: Այն իրավամբ համարվում է աշխարհի այն ամենահին լեզուներից մեկը, որն անընդմեջ գրային ավանդույթ է ունեցել (սկսած Աքեմենյանների ժամանակաշրջանից՝ մ. թ. ա. 6-րդ դար): Հին պարսկերեն սեպագիր արձանագրություններին փոխարինելու է եկել պահլավական գրային համակարգը (պարթև Արշակունիներ և Սասանյաններ): Բացի այդ, թեքականից անցում է կատարվել վերլուծական լեզվին:

Պարսկերենի ժամանակակից այբուբենը փոխարինել է պահլավերենի գրային համակարգին Թահիրիների իշխանության շրջանում (821-873): Ունի 32 հարֆ, արաբերենի հարֆերին ավելացվել են չորսը՝ pe (پ), çe (چ), že (ژ), gāf (گ), ուստի կոչվում է նաև *pažgač*: Որոշ հարֆեր պարսկերենում նույնահունչ են, օրինակ՝ h և h, t և t, ġ և q, կամ՝ ʔ, s և s, իսկ [z] հնչյունն արտասանելու համար կարելի է գործածել մինչև չորս հարֆ՝ d, z, d և d<sup>28</sup>: Այսպիսով՝ 23 բաղաձայն հնչյունին համապատասխանում է 30 տառ: Ձայնավոր-հարաքաները պահպանվել են, սակայն հնչում են այլ կերպ. արաբերենի «կարճ» ձայնավորները՝ a (*fatha*), u (*damma*), i (*kasra*), պարսկերենում հնչում են որպես [æ] (*zebar*), [o] (*zīr*), [e] (*pīs*): Արաբերենի «երկար» ձայնավորները՝ ā, ū, ī, պարսկերենում պարզապես արտասանվում են [a], [u], [i] ու գրվում են 'alif, wāw yā' հարֆերով [Ասատրյան 2011]:

Նոր պարսկերենով (մ. թ. 9-րդ դարից մեր օրեր) ստեղծվել է գրական բոլոր ժանրերն ընդգրկող գրականություն, որը համաշխարհային կարևորություն ունի: Չափածո ստեղծագործությունները՝ հեղինակած Ռուդաքիի (858-941), Ֆիրդուսիի (940-1020), Օմար Խայամի (1048-1131), Ռումիի (1207-1273), Սաադիի (1210-1291), Հաֆեզի

<sup>28</sup> Այս պարագայում արաբական ծագում ունեցող բառերը գրվում են տարբեր հարֆերով, իսկ բուն պարսկական բառերում գործածվում են h, t, ġ, s կամ z հարֆերը (տե՛ս հավելված 3):

(1315-1390) և այլոց կողմից, հիմնականում ներկայացված են արուդով: Հայտնի են ոչ միայն ամբողջական պոեմներ ու բանաստեղծություններ, այլև քառյակներ:

Փորձենք արուդային գրությամբ վերլուծել բանաստեղծ Օմար Խայամի հեղինակած մի քառյակ [Ասատրյան 2011: 116]՝

*Աղյուսակ 6*

Ruzi ke gozašte ast az u yad makon	رُوزِي كِهْ كُذْشْتِهٖ آسْتْ آزْ أَوْ يَادْ مَكُونْ
Farda ke nayamade ast faryad makon	فَرْدَا كِهْ نِيَامِدِهٖ آسْتْ، فَرِيَادْ مَكُونْ
Bar namade o gozašte buniad makon	بَرْ نَامِدِهٖ وَكُذْشْتِهٖ بُنِيَادْ مَكُونْ
ħali xoš baš va omr bar bad makon	حَالِي خُوشْ بَاشْ وَعُمْرْ بَرْ بَادْ مَكُونْ

Այժմ փորձենք վերածել արուդային գրառման, ինչպես կատարել ենք վերը՝ արաբերենի օրինակով: Ստացվում է հետևյալը՝

*Աղյուսակ 7*

Ru.zi.iø ke.hø go.za.šø te.hø 'a.sø ta.zu.ya.dø ma.ko.nø	رُزِي كِهْ كُذْشْتِهٖ تَهٗ آسْ تَزُو يَدْ مَكُونْ
Fa.rø da.ke.hø na.ya. ma.de.hø 'a. sø tø fa.rø ya.dø ma.ko.nø	فَرْ دَا كِهْ نِيَامِدِهٖ آسْ تَفَرْ يَدْ مَكُونْ
Ba.rø na.ma.de.hø 'o go. za.šø te. bu. nø ya.dø ma.ko.nø	بَرْ نَامِدِهٖ وَكُذْشْتِهٖ تَهٗ بُنْ يَدْ مَكُونْ
ħa.li.iø xo.šø ba.šø va 'o.mø rø ba.rø ba.dø ma.ko.nø	حَالِي خُوشْ بَاشْ وَعُمْرْ بَرْ بَدْ مَكُونْ

Անցնենք արուդային գրառման հաջորդ փուլին: Գծերով նշում ենք ձայնավոր ունեցող (|), իսկ կետերով՝ ձայնավորներից զուրկ բաղաձայնները (●):

*Աղյուսակ 8*

Ru.zi.iø ke.hø go.za.šø te.hø 'a.sø ta.zu.ya.dø ma.ko.nø	●  ●   ●  ●  ●   ●  ●   ●
Fa.rø da.ke.hø na.ya. ma.de.hø 'a. sø tø fa.rø ya.dø ma.ko.nø	●   ●  ●    ●  ● ●●  ●   ●
Ba.rø na.ma.de.hø 'o go. za.šø te. bu. nø ya.dø ma.ko.nø	●  ●   ●    ● ●  ●  ●   ●
ħa.li.iø xo.šø ba.šø va 'o.mø rø ba.rø ba.dø ma.ko.nø	●  ●  ●   ●●  ● ●   ●

Ինչպես և արաբական միջնադարյան բանաստեղծություններում, այստեղ ևս կա փոքրիկ շեղում: Կարելի է նայել հավելված 1-ի առաջին շրջանին, որտեղ կա *tawil* չափը:

Գծագիր 4

I տող - ||●|● ||●|●● ||●|● ||●|●◌◌ ||●|● ||◌|●|● ◌|●|● ||●

II տող - ||●|● ||●|●● ||●|● ||●|●● ||●|● ||●|●|● ||●|● ||●|●|●

Գծագիր 4-ում արուդային գրության երկու տողերից առաջինում բանաստեղծության երկու տողերն են, իսկ երկրորդում *tawil* չափը: Վերևի տողում ընդգծվել են շեղումները՝ մեկ տեղ բացակայում է երկու միավոր՝ |◌, մեկ այլ տեղ՝ մեկ միավոր՝ ◌, և երրորդ տեղում կլոր է՝ ●, գծիկի փոխարեն:

Գծագիր 5

I տող - |●|●||● |●||●● |●|◌|● ||◌|●|● ◌||●|● |●||●

II տող - |●|●||● |●||●● |●||●● |●|●||● |●||●|● |●||●|●

Գծագիր 5-ի առաջին տողում բանաստեղծության երրորդ և չորրորդ տողերն են, իսկ երկրորդում *mujtat* չափը: Վերևի տողում ընդգծվել են շեղումները՝ երկու տեղ | և ● միավորները հակառակ են, մեկ տեղ բացակայում է երկու միավոր՝ |◌:

Այսպիսով, ալ-Խալիլի ստացած բանաստեղծական 16 չափերից Օմար Խայամի այս քառատողը գրված է 2 չափով՝ *tawil* (fa.εu.սօ lu.nօ, ma.fa.aօ ei.iօ lu.nօ, fa.εu.սօ lu.nօ, ma.fa.aօ ei.iօ.lu.nօ) և *mujtat* (mu.sօ ta.fօ ei.lu.nօ, fa.aօ ei.la.aօ tu.nօ, fa.aօ.ei.la.aօ tu.nօ):

Արուդը հիմնականն է նաև օսմաներենի չափածո ստեղծագործություններում: Հարկ է նշել, որ լեզուն անցել է զարգացման երեք փուլ՝ հին (13-15-րդ դարեր), միջին (15-19-րդ դարեր) և նոր (19-20-րդ դարեր): Օսմանյան պետությունը հիմնադրվել է 1299 թվականին՝ Փոքր Ասիայի արևմտյան հատվածում, և գոյատևել ավելի քան 6 դար: Կայսրության հզորության գագաթնակետին հասավ 15-16-րդ դարերում: Օսմաներենը թյուրքական լեզուների պատմության հիմնահարցերի ուսումնասիրողների կարծիքով արաբերենի, պարսկերենի ու թուրքերենի համակեցություն էր: Լեզվաբան Զիյա Գյոքալփը (1876-1924) տարանջատում է պաշտոնական օսմաներենը և ժողովրդախոսակցական թուրքերենը: Օսմաներենը որակվում էր սեմա-թեքական-կցական լեզու՝ ի տարբերություն կցական թուրքերենի [Սաֆարյան 2012: 54-56]:

Մասնագետների գերակա մեծամասնությունն օսմաներենը բնութագրում է որպես թուրքերենի՝ օսմանյան դարաշրջանում քաղաքական վերնախավի և մտավորականության՝ «որպես գրավոր լեզու»: Հետազոտողների մի խումբ գտնում է, որ գրական թուրքերենի պատմության մեջ 15-րդ դարից 19-րդ դարի կեսերն առանձնացվում է «օսմաներեն» անվանումով, իսկ մյուսները կարծում են, որ այդ դարաշրջանի գրական լեզվի գրավոր տարատեսակը յուրահատուկ էր՝ ժանրային-ոճական տարբերակման տեսանկյունից [Սարգսյան Ա. և ուրիշներ 2016: 7]: Օսմաներենի բառապաշարի 80-90 %-ը վերցված է պարսկերենից և արաբերենից: Ժամանակակից թուրքերենը սկզբնավորվել է 20-րդ դարի առաջին քառորդում՝ Թուրքիայի տարբեր ժողովրդական բարբառների հիման վրա: Թուրքերենում լայնորեն կիրառվում են թյուրքական նոր ներմուծված բառերը, արաբա-պարսկական փոխառությունների կազմում են 30 %, իսկ օսմաներենում դրանք 80 % էին: Ուստի, թուրքերենը օսմաներենի ուղղակի հաջորդը չէ, թեկուզև դարեր շարունակ գործածվող օսմանյան գրավոր ավանդույթը մեծ ազդեցություն է թողել դրա զարգացման վրա:

Օսմաներենի արաբատառ այբուբենը գործածության մեջ է մտել արաբական երկրների նվաճումից հետո (16-րդ դարի սկիզբ): Այն բաղկացած է 34 հարֆից՝ արաբերենի 28 հարֆերին և hamza-ին (ء) ավելացվել են ևս հինգը՝ pe (پ), čim (چ), že (ج), gef (گ), ñef (ئ): Որոշ հարֆեր օսմաներենում նույնահունչ են, օրինակ՝ ħ և h, ṭ և t, k և q, կամ՝ ṭ, ṣ և s, իսկ [z] հնչյունն արտասանելու համար կարելի է գործածել մինչև չորս հարֆ՝ d, z, ǰ և ǰ<sup>29</sup>: Միևնույն հարֆերը բառի տարբեր դիրքերում գտնվելիս կարող են հնչել տարբեր կերպ<sup>30</sup>:

Ձայնավոր-հարաքաները պահպանվել են, սակայն հնչում են այլ կերպ. արաբերենի «կարճ» ձայնավորները՝ a (*fatha*), u (*ḍamma*), i (*kasra*)՝ համապատասխանաբար որպես [e] կամ [a] (*ustun*), [i] կամ [u] (*esre*), [œ], [y] կամ [o], [u] (*ötre*): Արուղը խորթ է թուրքերենի համար, որը զգալիորեն տարբերվում է արաբերենից: Այն կիրառելի է եղել օսմաներենում [Սարգսյան Ա. և ուրիշներ 2016: 8]:

<sup>29</sup> Այս պարագայում արաբական ծագում ունեցող բառերը գրվում են տարբեր հարֆերով, իսկ բուն օսմանական բառերում գործածվում են h, t, k, s կամ z հարֆերը (տե՛ս հավելված 3):

<sup>30</sup> Օսմաներենի հնչյունային համակարգի ուսումնասիրությունն Օսմաներենի դասագրքում, էջ 24

Օսմաներենով է ստեղծագործել 16-րդ դարի բանաստեղծ Մահմուդ Աբդուլ Բաքին (1526-1600, *Mahmud Abdülbâkî*, محمود عبدالباقى), ով հայտնի է գազելներով [Mirzaoglu 2012: 128]: Դրանցից մեկն ունի 7 բեյթ: Փորձենք արուղային գրությամբ վերլուծել դրա առաջին երկու բեյթերը (ընդամենը՝ չորս կիսատող)՝

Աղյուսակ 9

Hiç makdem-i dilberden yollarda eser yok mu	هَيْجُ مَقْدَمِ دِلْبَرَدَنْ يُولَلَرْدَهْ اِثْرُ يُوقْمِي
Ey bād-i sabā sende bir taze haber yok mu	اَي بَادِ صَبَا سَنَدَهْ بَرِ تَازَهْ خَبَرُ يُوقْمِي
Yūsuf-la o mehrûnun farki kati zahirdir	يُوسُفْلَهْ اَوْ مَهْرُونُكَ قَرَقِي قَتِي ظَاهِرْدِر
Erbāb-i mahabbetde bir ehl-i nazar yok mu	اَرْبَابِ مَحَبَّتِهْ بَرِ اَهْلِ نَظَرُ يُوقْمِي

Այժմ փորձենք վերածել արուղային գրառման, ինչպես կատարել ենք վերը՝ արաբերենի ու պարսկերենի օրինակներով: Ստացվում է հետևյալը՝

Աղյուսակ 10

Hi.çø ma.kø de.mi.di.lø be.rø de.nø yo.lø la.rø da.aø 'e.se.rø yo.kø mu.uø	هَيْجُ مَقْدَمِ دِلْبَرَدَنْ يُولَلَرْدَهْ اِثْرُ يُوقْمِي
'e. yø ba.aø di.sa.ba.aø se.nø de.bi.rø ta.ze.hø ha.be.rø yo.kø mu.uø	اَي بَادِ صَبَا سَنَدَهْ بَرِ تَازَهْ خَبَرُ يُوقْمِي
Yu.uø su.fø la.ho.me.hø ru.uø nu.nø fa.rø ki.iø ka.aø ti.za.aø hi.rø di.rø	يُوسُفْلَهْ اَوْ مَهْرُونُكَ قَرَقِي قَتِي ظَاهِرْدِر
'e.rø ba.aø bi.ma.ha.bø be.tø de.bi.re.hø li.na.za.rø yo.kø mu.uø	اَرْبَابِ مَحَبَّتِهْ بَرِ اَهْلِ نَظَرُ يُوقْمِي

Անցնենք արուղային գրառման հաջորդ փուլին: Գծերով նշում ենք ձայնավոր ունեցող (|), իսկ կետերով՝ ձայնավորներից զուրկ բաղաձայնները (●):

Աղյուսակ 11

Hi.čø ma.kø de.mi.di.lø be.rø de.nø yo.lø la.rø da.aø 'e.se.rø yo.kø mu.uø	● ●   ● ● ● ● ● ● ● ● ●
'e. yø ba.aø di.sa.ba.aø se.nø de.bi.rø ta.ze.hø ha.be.rø yo.kø mu.uø	● ●   ● ● ● ● ● ●
Yu.uø su.fø la.ho.me.hø ru.uø nu.nø fa.rø ki.iø ka.aø ti.za.aø hi.rø di.rø	● ●   ● ● ● ● ● ● ● ● ●
'e.rø ba.aø bi.ma.ha.bø be.tø de.bi.re.hø li.na.za.rø yo.kø mu.uø	● ●   ● ● ● ● ● ● ● ● ●

Ինչպես և արաբական միջնադարյան բանաստեղծություններում, այստեղ ևս կա փոքրիկ շեղում: Կարելի է նայել հավելված 1-ի երրորդ շրջանին, որտեղ կա rajaz չափը:

*Գծագիր 6*

I տող - |●|●|||● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●

II տող - |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|●

Գծագիր 6-ում արուդային գրության երկու տողերից առաջինում բանաստեղծության երկու տողերն են, իսկ երկրորդում rajaz չափը: Վերևի տողում ընդգծվել են շեղումները՝ մեկ տեղ հավելյալ է մեկ միավոր՝ |, բայց հաջորդ իսկ արուդային բառում այդպիսի միավոր պակասում է՝ |, ապապակասում են ևս երկու միավորներ՝ | և ◦:

*Գծագիր 7*

I տող - |●|●|||◦ |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|||● |●|●|● |||●|●|●

II տող - |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|● |●|●|●

Գծագիր 7-ի առաջին տողում բանաստեղծության երրորդ և չորրորդ տողերն են, իսկ երկրորդում դարձյալ rajaz չափը: Վերևի տողում ընդգծվել են շեղումները՝ մեկական | և ◦ միավորներ բացակայում են, ապա պակասում է մեկ միավոր՝ |, բայց հաջորդ իսկ արուդային բառում այդպիսի միավոր հավելյալ է՝ |, և վերջին արուդային բառում մեկական նշաններ հակառակ դիրքով են՝ | և ●:

Այսպիսով, ալ-Խալիլի ստացած բանաստեղծական 16 չափերից Մահմուդ Աբդուլ Բաքիի գազելի այս չորս տողերը գրված են միևնույն՝ *rajaz* չափով (mu.sø ta.fø ei.lu.nø, mu.sø ta.fø ei.lu.nø, mu.sø ta.fø ei.lu.nø):

Ամփոփելով, կարող ենք գալ այն եզրակացության, որ թե՛ արաբական (*mutaqārib*), թե՛ պարսկական (*tawil*, *mujtat*), թե՛ օսմանական (*rajaz*) բանաստեղծությունները կազմվել են ալ-Խալիլ իբն Ահմադի՝ դեռևս 7-րդ դարում առաջարկած 16 չափերով: Վերը նշվեց, որ եթե հունական տաղաչափական համակարգը կարող է հիմնված լինել ձևույթը հնչույթների բաժանելու երևույթի վրա, ապա արաբական և չինական տաղաչափական համակարգերում պատկերն այլ է: Ինչպես չին-տիբեթական վանկային, այնպես էլ սեմական լեզուներում նվազագույն մասնիկը մեկ հնչյուն լինել չի կարող: Ինչպես նշում էր Վադիմ Կասևիչը, միավորի սահմաններում ձայնավորի բացակայությունը հիմք չէ այդ միավորը կցել նախորդ՝ ձայնավոր ունեցող միավորին [Касевич 1983: 306]: Հետևաբար, այստեղ հստակորեն երևում է հարֆի՝ մեկ անբաժանելի հատույթ լինելը:

Հարֆն արաբական գրային համակարգ օգտագործող լեզուներում նվազագույն վանկաչափական միավոր է, որը բաղկացած է բաղաձայն և ձայնավոր հնչյուններից, սակայն չի բաժանվում հնչույթների: Դա վերաբերում է ոչ միայն արաբերենին, այլև այդ գրային համակարգն օգտագործող այլ լեզուների: Եթե նույնիսկ հարֆերը առանձնացվում են միմյանցից՝ արուդային արտասանության ժամանակ, ապա դարձյալ կազմում են պայմանական հատույթներ, որտեղ նրանք ևս չեն բաժանվում ձայնավորի ու բաղաձայնի:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1. Ձևույթի լեզվաբանական ընկալումների համառոտ ներածական ակնարկ

Լեզվի բաժիններից քերականությունը, տալիս է բառերի ձևափոխությունների ու նրանց կապակցման կանոնները: Այն ունի երկու բաժին՝ ձևաբանություն (հին հունարեն՝ *μορφολογία*, որտեղ *μορφο*-ձև և *λογοσ*-ուսմունք) և շարահյուսություն (հին հունարեն՝ *σύνταξις*, որտեղ *σύν*-միասին և *τάξις*-կառուցվածք), որոնք համապատասխանաբար տալիս են բառերի փոփոխությունների և նախադասության մեջ բառերի կապակցության կանոնները [Աղայան 1987: 451]: Նախքան նշելը, թե ինչն է ձևաբանության ուսումնասիրման առարկան, անհրաժեշտ է նշել, որ ձևաբանությունը բառի, իսկ շարահյուսությունը՝ բառակապակցության և նախադասության քերականությունն է: Ստացվում է, որ բոլոր կատեգորիաները, որոնք արտահայտվում են բառի ներսում, պատկանում են ձևաբանությանը, իսկ որոնք արտահայտված են բառի սահմաններից դուրս՝ շարահյուսությանը [Касевич 1977: 49]:

Ձևաբանությունը զբաղվում է բառերի ձևաբանական կառուցվածքի, նրանց ձևական փոփոխությունների ուսումնասիրությամբ և դասակարգում բառերն ըստ ընդհանուր իմաստի և ձևական հատկանիշների [Աղայան 1987: 144]: Այն վերլուծում և բացատրում է խոսքի մասերի և նրանց հատուկ բառակազմական օրինաչափությունները: Ավանդական ձևաբանությունը հետազոտում է ինչպես բառերի, այնպես էլ ձևույթների մակարդակները: Հայտնի է, որ ձևույթներն իմաստային տեսակետից բառի անբաժանելի, տրոհվող ոչ ենթակա մասերն են, իմաստի ու ձևի տեսակետից լեզվի նվազագույն միավորները: Առանձին դեպքերում այն ձևույթը կարող է արտահայտության պլանում նույնանալ հնչույթի, բացառիկ դեպքերում՝ նաև նախադասության հետ [Պետրոսյան 2002: 98]: Ձևույթները կազմվում են ավելի ստորին մակարդակում գտնվող հնչույթաբանական մասնիկների միջոցով:

«Ձևույթ» եզրույթը՝ որպես «մորֆեմա» (հին հունարեն՝ *μόρφημα*) ներմուծել է Կազանի լեզվաբանական դպրոցի հիմնադիր Իվան Բոդուեն դը Կուրտենեն (1845-



1929): Ամերիկյան նկարագրական լեզվաբանության հիմնադիրներից Լեոնարդ Բլումֆիլդը (1887-1949) նշում էր, որ ձևային լեզվի՝ իմաստ արտահայտող նվազագույն միավորն է: Կոպենհագենի դպրոցի հիմնադիր Լուի Ելմսլը (1899-1965) ցույց է տվել, որ ցանկացած ձևային նշանակությունը բաղկացած է իմաստային բաղադրամասերից: Պրահայի լեզվաբանները հենց հնչյութաբանական մասնիկին են վերագրել ձևային բառից տարբերակելու կարևոր նշանակությունը:

Բառը կարող է արտահայտվել նաև մեկ ձևայինով: Ձևայինները, ի տարբերություն բառերի, ունեն ընդհանուր իմաստ, քերականական ձևավորվածությամբ օժտված չեն, ինքնուրույնությունից զուրկ են՝ կազմելով բառի մաս: Հետևաբար, ձևայինները լինում են հիմնական (արմատներ) և երկրորդական (քերականական և ածանցային): Արմատները բառի կազմում կարող են հնչյունափոխվել. դրա արդյունքում կարող են ստեղծվել ձևային տարբերակներ, որոնք հնչյունափոխված ձևի հետ կոչվում են լծորդական ձևայիններ: Ինչ վերաբերում է բառերին, ապա դրանք լինում են իմաստով ու գործածությամբ օժտված հնչյուն կամ հնչյունախումբ: Բառը չունի կառուցվածքային և շարահյուսական անբաժանելիության նախանշաններ. կան բառեր, որոնք չեն բաժանվում առավել փոքր մասնիկների, քանի որ ունեն միայն մեկ ձևային, և կան այնպիսիք, որոնք բաժանելի են մասնիկների, քանի որ ունեն մեկից ավելի ձևայիններից [Маслов 1987: 80]: Ֆերդինանդ դը Սոսյուրը ցույց է տվել, որ շարույթը (*σύνταγμα*) լեզվական առնվազն երկու միավորների գծային հաջորդականություն ունեցող լրացական կապակցությունն է խոսքի շղթայում: Այն կարող է լինել ներքին (երկու ձևայինների կապակցություն, բառ) կամ արտաքին (բառակապակցություն և նախադասություն): Շարույթը կ'է բառ է, կ'է բառակապակցություն, կ'է նախադասություն: Սակայն եթե Սոսյուրը շարույթի նվազագույն սահմանը համարում էր բաղադրյալ բառը, ապա Իվան Բոդուեն դը Կուրտենեն՝ նաև պարզ բառը [Պետրոսյան 2004: 79]: Եզրափակելով, կարելի է նշել, որ բառն ու ձևային նման են նրանով, որ լեզվի իմաստային (իմաստակիր) միավորներն են, ունեն որոշակի հնչյունական կազմ:

Ձևաբանության մեջ հանդիպում են *ենթաձևային (այլաձևային)*, *ձևակ* և *ձևահնչյութ* եզրույթները: Միևնույն քերականական իմաստը կարող է դրսևորվել տարբեր ձևայինների միջոցով, որոնք մեկ ձևային ենթաձևայիններն են [Պետրոսյան

1975: 203] կամ այլաձևույթները [Նազարյան 1993: 55], հայտնի որպես «αλλόμορφα»: Ձևային կոնկրետ կիրառումը կոչվում է ձևակ (*μόρφ*): Ձևահնչոյթաբանության առավելագույն միավորը ենթաձևույթն է, իսկ նվազագույնը՝ ձևահնչոյթը (մորֆոֆոնեմա) [Касевич 1986: 578]: Եզրույթը 1927 թվականին ներմուծել է լեզվաբան Հենրիկ Ուլաշինը (1874-1956), և նրանից անկախ՝ 1929 թվականին, Նիկոլայ Տրուբեցկոյը (1890-1938): Ըստ Ուլաշինի՝ ձևահնչոյթն իմաստային-ձևաբանական գործառույթով հնչոյթն է, իսկ ըստ Տրուբեցկոյի՝ հերթագայության մեջ մասնակցող հնչոյթների ամբողջություն [Պետրոսյան 2002: 97]: Ձևահնչոյթաբանությունը զբաղվում է նրանով, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվում ձևույթները բառի կազմում: Ըստ այդմ, ձևահնչունաբանությունը մի կողմից ձևույթների հնչունաբանությունն է, մյուս կողմից՝ ձևաբանության, բառակազմության և շարահյուսության «հնչունավորումը» [Касевич, 1986: 4].

Պրահայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչներից Վլադիմիր Սկալիչկան (1909-1991) ներմուծել է *sema* եզրույթը, որը ևս լեզվի՝ իմաստ արտահայտող նվազագույն միավորն է. սեման կարող էր համապատասխանել հիմնական ձևային, իսկ երկրորդական ձևային՝ ոչ: Բողուեն դը Կուրտենեն երկրորդական ձևույթներն անվանել է *affixum*, և առանձնացրել *prefixum* (արմատի սկզբում, նախածանց) և *postfixum* (արմատի վերջում՝ վերջավորություններ ու վերջածանցներ): Առանձնացվում են նաև *interfixum* (հոդակապ), *circumfixum* կամ *confixum* (միաժամանակ արմատից առաջ ու հետո դրվող ձևույթներ, որոնք առանձին գործածություն չունեն), *infixum* (հնչոյթաբանական մեկ միավորից բաղկացած միջածանց, որը հայտնվում է հիմնական ձևային ներսում), *transfixus* (մեկից ավելի հնչոյթաբանական միավորներից բաղկացած միջածանց հիմնական ձևային ներսում) [Реформатский 1967: 263-268]:

Բառում կարող է հանդիպել նաև արմատի կրկնություն (*reduplicatio* կամ *duplifix*), փոփոխվել իրար հաջորդող ձայնավոր հնչյունը կամ հնչյունները (*simulfix*), անհետանալ դրա մի մասը (*disfix*): Որոշ լեզվաբաններ առանձնացնում են *suprafix*-ը կամ *superfix*՝ հիմնված տոնային արտասանության վրա: Առանձնացվում է նաև «զրոյական *affix*» հասկացությունը՝ նշանակալի բացակայություն ցույց տվող վերջածանց, գրավոր չի արտահայտվում, բայց փոխանցում է որոշակի քերականական իմաստ:

## 2.2. Արաբերենի ձևաբանական համակարգի առանձնահատկությունները

Ինչպես վերը նշվեց, հարՖի սահմանի ու դիտարկման մակարդակի նշիչը ծայնավոր հնչյունն է՝ *ḥaraka*-ն: Դրա գլխավոր առանձնահատկություններից մեկը վանկաչափական հայեցակարգն է. *ḥaraka*-ն «ձևաբանականացնում է» այն: Արդի լեզվաբանության մակարդակային տեսության մեջ վանկաչափական պրոբլեմատիկան, հազվադեպ բացառություններով, չի հատվում ձևաբանականի հետ, իսկ ձևային և վանկային անդամատումները դիտարկվում են որպես տարբեր բնույթի երևույթներ: Այս տեսանկյունից ակնհայտ է դառնում, որ հարՖը ձեռք է բերում եռակի բովանդակություն՝ գործառելով որպես հնչույթաբանական, վանկաչափական և ձևաբանական միավոր: Ձևաբանության մակարդակում արդեն հարՖը, լինելով այս կամ այն ձևույթի մասը, ձեռք է բերում հիմքի դիրքերի տարբերակման գործառույթ, իսկ *ḥaraka*-ի փոփոխությունը հանգեցնում է հիմքի կաղապարի ինքնության կորստին:

ՀարՖը լեզվական ձևի հատույթի վերջնական կազմավորման միավոր է: Վերլուծության ձևաբանական մակարդակում սկզբունքային է դառնում արդեն դիրքի հասկացությունը, քանի որ ձևաբանական միավորների արտաքին տեսքը ներկայանում է դիրքային կառուցվածքի ձևով: Արմատը բաղկացած է հիմնականում երեք հարՖերից (ընդունված են *fā'* + *'ayn*+*lām* հարՖերը, քանի որ դրանք միասին նշանակում են «անել, կատարել»), ընդ որում հարՖն ինքնին դիտվում է որպես ամբողջական, բաղադրիչների չբաժանվող միավորում, որպես նկարագրման տվյալ մակարդակի նվազագույն հատույթ (միավոր): ՀարՖերի միջև սահմանները խիստ անորոշ են՝ դրանց ապահնչյունավորման միջոցով: Ահա այսպիսի արմատական երեք հարՖերի (*al-fi 'l al-mujarrad al-tulātī*) և բառային կաղապարի (*al-wazn*) համադրման արդյունք են բառերը: Դրանցից առաջինի սահմաններում ամփոփված լեզվական նյութն ապահովում է բառի ինքնությունը բառային միավորների շարքում, երկրորդի սահմաններում ամփոփված քերականական նշանակությունների որոշակի ամբողջությունն ապահովում է միևնույն արմատական հիմքին պատկանող միավորների զանազանումը [Karabekyan 1996: 4]:

Արմատական երեք հարֆերից կազմված է պարզագույն կաղապարը՝ անցյալ ժամանակով դրված բայի ներգործական սեռի երրորդ դեմքի եզակի թիվը: Այն հանդես էր գալիս առաջին և վերջին հարֆերի անփոփոխ a հարաքայով, իսկ երկրորդ հարֆը կարող էր կրել կամայական ձայնավոր: Գոյություն ունի «բայանուն» (արաբերեն՝ *maṣdar*՝ «աղբյուր») հասկացությունը, որտեղ կարող են լինել ոչ միայն արմատական երեք հարֆերը՝ ձևափոխված հարաքաներով, այլև հավելյալ հարֆեր<sup>31</sup>:

Բացի արմատական «հիմնական» հարֆերից (*al-ḥurūf al-aṣliya*), արաբերենում կարող են լինել նաև «հավելյալ» հարֆեր (*al-ḥurūf az-zā'ida*): Դրանք ի հայտ են գալիս ինչպես անուններ, այնպես էլ բայեր կազմելիս: Այդ հարֆերը լինում են ոչ միայն բառակազմում ու բառավերջում, այլև բառամիջում՝ կաղապարի ներսում [Karabekyan 2014: 512]: Այդպիսի հարֆերի հավելումն, անշուշտ, փոփոխության է ենթարկում արմատական հարֆերի հարաքա-ձայնավորները:

Կաղապարի հավելյալ հարֆեն արաբագիտության արևմտյան դպրոցում հայտնի են որպես ածանցներ: Դիցուք *kataba* (գրել) բային ավելացվում է նախաձանց, որը կարող է կազմված լինել ինչպես մեկ հարֆից (*'aktaba*՝ թելադրել), այնպես էլ մեկից ավելի (*'istaktaba*՝ արտագրել): Վերը նշվեց, որ ածանցը երկրորդական ձևույթ է, որը պետք է ունենա իմաստ: Եթե կցական լեզուներում ածանցներով է կատարվում բառակազմությունը, յուրաքանչյուր ածանց իմաստ է ունենում, ապա արաբերենի պարագայում պատկերն այլ է: Ինչպես նշել է եգիպտացի լեզվաբան Թամամ Հասսան իր «*Manāḥij al-Baḥt al-Luġa*» աշխատությունում, այսպիսի ձևակերպումով «ձևույթ» (մորֆեմա՝ *مورفيم*) հասկացությունը ռելևանտ չէ: Մեկ այլ օրինակում՝ *mata'a* (երկար լինել) - *'istamta'a* (հաճույք ստանալ), պատկերն այլ է, և *'ista* հատույթը չի համապատասխանում հայերենի *արդա-* նախաձանցին: Անհրաժեշտ է հավելել, որ մասնավորապես այս բայի դեպքում իմաստը լիովին համընկնում է մեկ այլ կաղապարի հետ՝ *matta'a* - *'istamta'a*: Հաճախ այդպիսի համընկնումները կարող են լինել ոչ միայն հավելյալ հարֆ ունեցող կաղապարների, այլև պարզագույն հիմքի հետ: Հետևաբար,

<sup>31</sup> «Maṣdar» հասկացույթը նույնպես ներմուծվել է արաբական լեզվաբանական ավանդույթ դրա ձևավորման արշալույսին. Բասրայի քերականական դպրոցի ներկայացուցիչները հենց *maṣdar*-ն էին համարում բառի արմատ, մինչդեռ քուֆացիները գտնում էին, որ արմատը վերոնշյալ բայն է, քանի որ այն զուրկ է որևէ այլ հարֆից:

դրանք ածանց դրանք դիտվել չեն կարող, քանի որ առանձին իմաստ չեն կրում և կաղապարի մաս են կազմում:

Լեզվաբանների կարծիքը համընկնում է որոշյալ հոդի հարցում, որը սահմանվում է որպես նախաձանց: Արաբերենում կա հստակ արտահայտված վերջաձանց, որն ավելացվում է կաղապարի վերջում և կարող է ներկայացված լինել մեկ հարֆով՝ *tā'*-ով (**katabta**՝ դու գրեցիր), երկու հարֆով՝ *tā'* և *mīm* (**katabtum**՝ դուք գրեցիք) կամ երեք հարֆով՝ *tā'*, *mīm* և *'alif* (**katabtumā**՝ դուք երկուսով գրեցիք)<sup>32</sup>:

Արաբագիտության մեջ եղել են տարբեր տերմիններ մուտքագրելու փորձեր: Այդպիսին է, օրինակ, Ռեֆորմատսկու ներմուծած *transfixus* (տարածանց) հասկացությունը՝ մեկից ավելի հնչույթներից բաղկացած միջաձանց, որ հայտնվում է հիմնական ձևույթի ներսում: Անհրաժեշտ է հավելել, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե հարֆերին, այլ հարաքաներին, որոնց փոփոխությունը հանգեցնում է հիմքի կաղապարի ինքնության կորստին: Վերը բերված օրինակներում, որտեղ քննվում էին ներգործական սեռի բայեր, ակնհայտ էր, որ դրանք մեկ կաղապարի ենթաձևույթներ են: Սակայն Ռեֆորմատսկին նշում է, որ այստեղ կա հիմնական ձևույթ՝ *katab*, իսկ *ktab*-ը և *kataba*-ն՝ դրա ձևակներն են: Մեկ այլ ձևակ էլ համարվել է կրավորական սեռի բայը (**kutiba**՝ գրվել), որտեղ *transfixus* է *u-i-a* հաջորդականությունը:

Մինչդեռ հարֆի մասին պատկերացումները առաջացել են հենց ի հակադրություն այդ մոտեցման: Ալժիրցի լեզվաբան ալ-Տեյիբ Ատավին հարաքաների մասին իր հոդվածում նշել է, որ ձայնավորների փոփոխությունը հանգեցնում է կաղապարի իմաստային փոփոխությանը, սակայն ինքնին ձայնավորը հնչույթի գործառույթ չունի: Դեռ հնչույթաբանության մասին բաժնում նշվել էր, որ ձևույթ կազմող նվազագույն մասնիկն հարֆն է ամբողջությամբ: Որպես օրինակներ՝ հեղինակը բերում է նաև *janna*, *junna* և *jinna* բառերը (համապատասխանաբար՝ այգի, պաշտպանություն և սատանա): Հարֆի ներսում հարաքան կարող է ունենալ հնչույթաբանական մասնիկի գործառույթ՝ միմիայն բաղաձայն հնչյունի հետ [Al-‘Aṭāwi 2013: 12]: Հարաքային ձևույթի հատկություն չի վերագրել նաև լիբանանցի լեզվաբան Էմիլ Յակուբը [Ya‘qūb 1982: 234]:

<sup>32</sup> Այլ օրինակներ բերվում են սույն աշխատության 74-75-րդ էջում՝ բայերին վերաբերող ենթաբաժնում:

Արմատական հիմքի կազմում որոշակի առանձնահատկություններ են ունեն նախորդ բաժնում քննված թույլ հարֆերը՝ 'alif, wāw, yā', ինչպես նաև կոկորդային շփականը՝ *hamza*-ն ('): Թույլ հարֆերը և համզան կարող են ենթարկվել փոփոխությունների, փոխադարձաբար փոխակերպվել կամ սղվել: Անհրաժեշտ է ավելացնել, որ թույլ հարֆերը ևս Ռեֆորմատսկին համարել է *transfixus* (օրինակ՝ *kitāb*, *maktūb*, *katīb*): Եթե պարզագույն հիմքի a-a-a հաջորդականությունը բայի ներգործական սեռ է ցույց տալիս, իսկ u-i-a հաջորդականությունը՝ կրավորական, ապա i-ā հերթականությունը որևէ իմաստի չի հանգեցնում: Այն կարող է այդպիսով լինել գոյականի կամ՝ բայանվան հատված: Հիմքի կազմում կարող են հայտնվել նաև նույնական հնչում ունեցող հարֆեր, երբեմն նաև քառահարֆ և հնգահարֆ հիմքեր:

Այսպիսով, բառերը հիմնականում արմատական երեք հարֆերի և բառային կաղապարի վերադրման արդյունք են: Սակայն ձևաբանությունը զբաղվում է ոչ միայն ձևաբանական կառուցվածքի ու ձևական փոփոխությունների ուսումնասիրությամբ, այլև դասակարգում բառերն ըստ ընդհանուր իմաստի և ձևական հատկանիշների: Այդ տեսանկյունից հարկ է նշել, որ արաբերենում խոսքի մասերը երեքն են՝ անուն ('ism՝ գոյական, ածական, թվական, դերանուն), բայ (fi՛l), մասնիկներ (ḥarf՝ մակբայ, նախդիր, կապ, ձայնարկություն) [Юшманов 1999: 19]: Արաբերենում խոսքի նման բաժանումը հանդիպում է լեզվաբանական ավանդույթի վաղագույն աղբյուրներում, ինչը հունական լեզվաբանական ավանդույթի ազդեցության դրսևորումներից է. նման բաժանում կատարել էր դեռ Արիստոտելը՝ իր «Օրգանոն»<sup>33</sup> աշխատության մեջ, և դրա առաջին մեկնաբանության փորձը վերագրվել էր Ալի խալիֆին [Fischer 1983: 135]:

Անհրաժեշտ է առանձին-առանձին դիտարկել խոսքի մասերը՝ բեկյալ հոգնակին (անուններ), քերականական դիրքերի անվանումների համընկնումը (բայեր և անուններ) և այլ խնդիրներ տեսնելու համար: Մասնիկների հարցում խուսափելով բառերի շարահյուսական հարաբերություններից, կբերվեն միայն այն մասնիկների օրինակները, որոնք ստացել են «հարֆ» անունը:

<sup>33</sup> Արիստոտելի աշխատության հատորներն են՝ «Կատեգորիաներ» (Κατηγορίαι) «Բացատրությունների մասին» (Περὶ Ἑρμηνείας) «Առաջին վերլուծություն» (Ἀναλυτικὰ Πρώτερα) «Երկրորդ վերլուծություն» (Ἀναλυτικὰ Ὑστερα) «Տոպիկա» (Τοπικά) «Սոփիստական հերքումների մասին» (Σοφιστικοὶ Ἐλεγχοί)

### 2.2.1. Անուններ

Անուն, արաբերեն՝ *'ism*, բառի ծագումը քուֆացիները կապում էին *wsm* արմատի հետ, անունը ներկայացնելով որպես «նշան», իսկ բասրացիները՝ *smw* արմատի հետ՝ դա ներկայացնելով որպես «գնահատում, որոշյալ» [Weil 1913]: Դրա առավել հստակ սահմանումները տվել են Բադդադի լեզվաբանական դպրոցի քերականները՝ անունը բնորոշելով որպես անջատ մաս խոսքում, որն ունի նշանակություն՝ առանց ցույց տալու ժամանակ կամ տեղ:

Անուններն ունեն դիրք, առում, սեռ, թիվ: Այն ունի երեք դիրք՝ *ինքնառական* (*al-raf'* الرفع), *հարակցական* (*al-jarr* الجر) և *խնդրական* (*al-nasb* النصب), որտեղ բառավերջի հարֆը եզակի և հոգնակի թվի անունների դեպքում կրում է համապատասխանաբար *u* (*damma*), *i* (*kasra*) կամ *a* (*fatha*) ձայնավորները: Այդ դիրքերը հայերենում մոտ են համապատասխանաբար *ուղղական*, *սեռական* և *տրական-հայցական* հոլովների: Եթե գոյականները, ածականները, թվականները և մակբայերը<sup>34</sup> անորոշ են, ապա բառավերջում դրվում է *tanwīn*. Եզրույթը ծագում է արաբերենի *nūn* հարֆի անունից, նշանակում է «նունացում»: Երևույթի ժամանակ գրվում է երկու ձայնավոր, սակայն արտասանվում է դրանցից մեկը և թերևս ոնգային «ն» հնչյունը: Կախված անվան դիրքից՝ այն կարող է լինել *tanwīn damma'* երկու «u» ձայնավոր, որ հնչում է որպես «սո» (*ինքնառական*), *tanwīn kasra'* երկու «i» ձայնավոր, որ հնչում է որպես «սո» (*հարակցական*) *tanwīn fatha'* երկու «a» ձայնավոր, որ հնչում է որպես «ան» (*խնդրական*): *Tanwīn fatha'*-ն այդպես գրվում է, եթե բառավերջի հարֆը կա՛մ 'alif է, կա՛մ hamza, կա՛մ *tā' marbūṭa*, որի մասին կխոսվի ստորև: Եթե նշվածներից ոչ մեկը չկա, ապա բառավերջում գրվում է գրաֆիկական 'alif, որը չի կարդացվում՝ սոսկ հենարան ծառայելով *tanwīn fatha'*-ի համար: Արաբական ծագում ունեցող հատուկ անունները կարող են կրել *tanwīn*:

Որոշյալ առման ժամանակ (հատկացուցիչ, 'alif-lām որոշյալ հոդ) բառավերջի հարֆի *tanwīn*-ն անհետանում է: Բառասկզբում գրվող 28 հարֆերից 14-ը «արևային»

<sup>34</sup> Դերանունները չունեն *tanwīn*, հետևաբար չունեն դիրքեր: Առկա են միայն կցական և անջատ ձևերը:

են, 14-ը՝ «լուսնային»: Արևային հարՖերն ըստ արտասանության տեղի կա՛մ շրթնային են, կա՛մ առաջնալեզվային t, ʔ, d, ɗ, r, z, s, ʃ, ʂ, ɗ, ʔ, ɗ, l, n (տե՛ս սույն աշխատանքի 21-րդ էջը): Դրանցից առաջ գրվող որոշյալ հոդն արտասանվում է ոչ թե «al», այլ համապատասխանաբար at, aʔ, ad, aɗ, ar, az, as, aʃ, aʂ, aɗ, aʔ, aɗ, al<sup>35</sup>, an: Ստացվում է բաղաձայնի կրկնություն, ուստի «al» որոշյալ հոդի երկրորդ բաղադրիչի վրա գրվում է šadda գրանշանը: Լիբանանցի լեզվաբան Էմիլ Յակուբը սրանք անվանել է «ենթաձևություններ» (այլաձևություններ): Լուսնային հարՖերը կարող են արտասանվել ցանկացած մասից՝ b, j, h, x, ʿ, ġ, f, q, k, m, h, w, y, ʾ: Դրանցից առաջ գրվող որոշյալ հոդն արտասանվում է միայն «al»: «Արևային և լուսնային հարՖեր» եզրույթները ծագում են արաբերենում այդ գոյականների անվանումներից՝ *al-ḥurūf aš-šamsiya* և *al-ḥurūf al-qamariya*:

Ձևաբանորեն սահմանափակված անուններն ընդգրկում են այն կարգի անվանական ձևերը, որոնց ձևաբանական կառուցվածքում բացակայում է *tanwīn*-ի իրացման դիրքը: Այդ միավորները կառուցվում են՝ a.fø ea.lu (|●|), fa.εø la.aø nu (|●|●), ma.fa.aø ei.iø lu (|●|●|), ma.fa.aøei.lu (|●|) կաղապարներով, ինչպես նաև դրանց թվին են պատկանում ոչ արաբական հատուկ անունները և իգական սեռի այն անունները, որոնց վերջածանցը ներկայացված է 'alif և hamza հարՖերով:

Միջնադարյան քերականագիտական աշխատություններն ուսումնասիրելիս՝ Քուլոֆին եկել է այն եզրահանգման, որ *tanwīn*-ի հստակ ձևակերպում չի եղել: Սկզբում այն բնութագրվում էր որպես միջանկյալ օղակ՝ հիմնականի ('ašil) և երկրորդականի (ġeyr 'ašil) միջև: Կա *tanwīn*-ի չորս կատեգորիա, բոլորն էր «հիմնական»:

- Հաստատուն *tanwīn* (*al-tanwīn tamakkun*), որն ընդգծում է անունը
- Անորոշության *tanwīn* (*al-tanwīn tankīr*), որը հատուկ անունների համար է
- Կոմպենսացնող *tanwīn* (*al-tanwīn 'iwād*), որը թույլ հարՖով ավարտվող արմատների համար է
- Համապատասխանող *tanwīn* (*al-tanwīn muqābala*), որը ցույց է տալիս իգական անուններ [Kuloghli 2001: 21]

<sup>35</sup> Հետաքրքիր զուգահեռությամբ այստեղ է հայտնվել նաև «lām» հարՖը. այսպես թե այնպես՝ որոշյալ հոդն այստեղ որևէ փոփոխություն չէր կրելու: Բանն այն է, որ այս դեպքում դարձյալ ավելացվում է šadda-ն՝ բաղաձայնի կրկնությունն արտահայտող գրանշանը, ինչը հատուկ է միայն «արևային հարՖերին»:



Անունները բաղկացած են երեք արմատային հարֆերից, սակայն կան հինգ բառեր ('ax՝ եղբայր, 'ab՝ հայր, ham՝ աներ, fam՝ բերան, du՝ «ունեցող»), որոնք գրվում են որպես երկու հարֆ ('a. xu<sup>օն</sup>, 'a. bu<sup>օն</sup>, ha.mu<sup>օն</sup>, fa.mu<sup>օն</sup>, du.u<sup>օն</sup>), թեև նույնպես բաղկացած են երեք արմատային հարֆերից (երրորդը թույլ հարֆ wāw-ն է): Երբ այս բառերը հայտնվում են լծորդական կապակցության մեջ՝ որպես դրա առաջին անդամ, ապա չգրվող թույլ հարֆը կրկին «հայտնվում է»՝ դիրքին համապատասխանող ձայնավորով, ոչ միայն ինքնառական (օրինակ՝ 'a.xu.uø mu.ha.mø.ma.di.nø՝ Մուհամմադի եղբայրը), այլև հարակցական (օրինակ՝ 'a.xi.iø mu.ha.mø.ma.di.nø՝ Մուհամմադի եղբոր) և խնդրառական (օրինակ՝ 'a.xa.aø mu.ha.mø.ma.di.nø՝ Մուհամմադի եղբոր) դիրքերում: Ուշագրավ է fam բառը, որը վերոնշյալ դիրքերում կորցնում է իր բաղադրիչ m (mīm) հարֆը և դարձյալ հանդես է գալիս 2 հարֆով՝ fu.uø, fa.aø, fi.iø:

Անուններն ունեն երկու սեռ՝ արական և իգական: Բազմաթիվ են դեպքերը, երբ սեռերի տարբերությունն ակնհայտ է բառի ձևաբանական կառուցվածքից. արական սեռի բառին ավելացվում է «tā՝ marbūta» («փակված թ»): Բառավերջի հարֆի ձայնավորը դառնում է «a», և բառի ուղիղ դիրքի «սո» վերջավորությունը փոխանցվում է tā՝ marbūta-ին<sup>36</sup> ka.aø.ti.bu<sup>n</sup> – ka.aø.ti.ba.tu<sup>n</sup>: Հանդիպում են նաև դեպքեր, երբ իգական սեռի անունը կազմվել է արականից անկախ (fahl՝ նժույգ, սակայն faras՝ զամբիկ, 'abd՝ ստրուկ, սակայն 'amma՝ ստրկուհի և այլն): Որոշ բառեր, ինքնին արդեն վերաբերում են իգական սեռին (hamil՝ հղի, murdi՝ ստնտու)<sup>37</sup>: Իգական սեռ կազմելու՝ ոչ մեծ կիրառությամբ այլ կաղապարներ էլ կան [Гранде 2001: 105]:

Արաբերենի անուններն ունենում են ինչպես եզակի և հոգնակի, այնպես էլ՝ երկակի թիվ: Սեռերի մասին բերված օրինակներում բոլոր անունները եզակի թվի էին: Երկակի թվի կազմությունն անշափ պարզ է արաբերենում՝ raf՝ դիրքում պարզապես բառավերջում ավելանում է երկու հարֆ՝ 'alif և nūn, կարդացվում որպես āni, իսկ jarr և naṣb դիրքերում՝ yā՝ և nūn (eyni): Այլ է հոգնակի թվի խնդիրը. այն կարող է լինել «ամբողջական» (jam՝ sālim) և «բեկյալ» (jam՝ mukassar): Հայտնի է, որ յուրաքանչյուր քերականական նշանակություն ունի նյութական արտահայտում՝ քերականական ձև:

<sup>36</sup> Մի քանի անուններ ավարտվում են tā՝ marbūta-ով, սակայն արական սեռի անուններ են՝ xalifa, mu՝ āwiya, 'usāma և այլն:

<sup>37</sup> Որոշ իգական անուններ չունեն tā՝ marbūta վերջավորություն, ինչպիսիք են՝ 'ard, kā's, nār և այլն:

Այս դերում հանդես է գալիս բառաձևը: Բառաձևերի համակարգը կոչվում է հարացույց [Мечковская Н. Б. и другие 1983: 241]: Նախքան անցնելը հոգնակի թվի առանձնահատկություններին, անհրաժեշտ է ներկայացնել պարզագույն բայի հարացույցը՝

Աղյուսակ 12

Անցյալ (ներգործական սեռ)	ka.ta.ba	գրեց
Ներկա (ներգործական սեռ)	ya.kø.tu.bu	գրում է
Անցյալ (կրավորական սեռ)	ku.ti.ba	գրվեց
Ներկա (կրավորական սեռ)	yu.kø.ta.bu	գրվում է
Բայանուն	ki.ta.aø.ba.tu <sup>n</sup>	գրելը
Հրամայական եղանակ	'u.kø.tu.bø	գրի՛ր
Ենթակայական դերբայ	ka.aø.ti.bu <sup>n</sup>	գրող
Հարակալար դերբայ	ma.kø.tu.uø.bu <sup>n</sup>	գրվածք

Այսպիսի հարացույցի ներսում բոլոր բառերն անվանվեցին «շղթայական» անուններ (*'asmā' muštaqqā*), իսկ դրանից դուրս՝ «սառեցված» անուններ (*'asmā' jāmida*): Նման հարացույց կարող է ունենալ ոչ միայն պարզագույն կառուցվածքի բայը, այլև 15 հնարավոր կաղապարներից ցանկացած այլ բայ: Կարելի է նկատել, որ բայանունը և դերբայները (արաբերենում դրանք երկուսն են, քանի որ անորոշ դերբայն ամբողջովին համընկնում է երրորդ դեմքի եզակի թվի ներգործական սեռի անցյալ ժամանակաձևի բային) իրենց կառուցվածքով անուններ են: Բայանվանը և «սառեցված» անուններին հատուկ է հիմնականում «բեկյալ» հոգնակին, իսկ դերբայները դեպքերի մեծամասնության ժամանակ ստանում են արական և իգական սեռի «ամբողջական», հազվադեպ՝ «բեկյալ» հոգնակիի վերջավորություններ: Ամբողջական հոգնակին raf<sup>6</sup> դիրքում արական սեռի համար ունի wāw և nūn (ūna), իսկ իգականի համար՝ 'alif և tā' (atun) [Карабекян 1996: 225]:

Ինչ վերաբերում է «բեկյալ» հոգնակիին, ապա պատկերը միանգամայն այլ է: Նախորդ գլխում քննվել է արաբերենի տաղաչափության համակարգը, որտեղ ցույց է

տրվել, որ «շարժական» և «անշարժ» հարՖերը (ձայնավոր ունեցող և չունեցող հարՖերը) նշանակվում են համապատասխանաբար | և •: Նշվել է, որ բառը չի կարող սկսել ձայնավոր չունեցող հարՖով, խոսքի հոսքում (ոչ միայն բառի կազմում) չեն կարող լինել երկու՝ ձայնավորից զուրկ ամանակներ, ցանկալի չէ երեքից ավելի ձայնավորների հարևանությունը: Ըստ այդմ, օրինակ fa.εø.lu<sup>n</sup> բայանունն ունի |•|• տեսքը: Եթե այս կառույցին ավելացվեն հարՖեր՝ բեկյալ հոգնակին ստանալու համար, ապա դրա համար կարելի է ստանալ ոչ ավելին, քան 3 տարբերակ՝ ||•|•, |•||• կամ |•|•|•: Արուդային համակարգից վերադառնալով սովորականին՝ դա հնարավոր է պատկերել որպես fi.εa.aø.lu<sup>n</sup> կամ fu.εu.uø.lu<sup>n</sup> (||•|•), 'a.fø.εu.lu<sup>n</sup> (|•||•) կամ 'a.fø.εa.aø.lu<sup>n</sup> (|•|•|•) [Karabekyan 2003: 116]: Այլ անունների բեկյալ հոգնակիները նույնպես ունեն արուդային այս տեսքը՝ դրանց հնարավոր մեկ կամ մի քանի տարբերակ՝ թեև տարբեր հնչողությամբ: Այս երեք տարբերակին ավելանում է միայն մեկ արուդային գրելաձև՝ ||•||•: Վերջին՝ բաց օղակը ցույց է տալիս tanwīn-ի բացակայությունը:

Բեկյալ հոգնակիի մեկ այլ բացատրություն հանդիպում է Ջոն ՄակՔարթիի և Ալան Փրինսի հոդվածում [McCarthy and Prince 1990]: Այստեղ բաղաձայնները նշվում են որպես C (*consonant*), ձայնավորները՝ V (*vowel*): Ընդ որում, 'alif հարՖը մշտապես ներկայացվում է որպես ձայնավոր, իսկ wāw և yā' կիսաձայն հարՖերը՝ մե'րթ որպես բաղաձայն (եթե դրանք կրում են ձայնավոր), մե'րթ որպես ձայնավոր (եթե զուրկ են ձայնավորից), մինչդեռ բառասկզբի hamza-ն, որ դրվում է 'alif-ի վրա, դիտարկվում է որպես բաղաձայն: Նույն՝ ||•|• կառույցը ստանում է այսպիսի տեսք՝ CVCVVCVC, |•||• պատկերվում է որպես CVCCVCVC, իսկ |•|•|• նկարագրված է CVCCVVCVC: Անտեսելով արաբական տաղաչափությունը, այս կառույցը ներկայացվում է հունական տաղաչափությանը հատուկ եզրույթներով՝ *քորեյ*, *յամբ*, *սպոնդեյ*՝ դասակարգելով ըստ շեշտադրվող ձայնավորի: Բանն այն է, որ արաբերենում շեշտը կրում է կա'մ երկար ձայնավորը, կա'մ՝ դրա բացակայության դեպքում, բառավերջից հաշված երրորդ հարՖի կարճ ձայնավորը: Ըստ այդմ, այս տեսության շրջանակներում նրանք դնում են հավասարության նշան բոլոր շեշտվող ձայնավորների՝ թե' հարՖի, թե' հարաքայի միջև:

Նախադասության մեջ որոշյալության նշանակություն են արտահայտում անվանական կարգի հետևյալ միավորները՝ անձնական դերանունները, հատուկ անունները, ցուցական անունները, որոշյալ հոդով անունները, ինչպես նաև այն անվանական բառերը, որոնք որոշյալության նշանակություն են արտահայտում լծորդական կառույց կազմելու միջոցով [Գաբուլյան, Կարաբեկյան 2002: 88]:

Անուններին հատուկ է բառակապակցություններ կազմելը և որպես ավելի բարդ մակարդակի շարույթ հանդես գալ նախադասության մեջ: Բառակապակցության տեսակներն են՝ նկարագրական (*al-ṣifa* և *al-mawṣūf* որոշիչ-որոշյալ), փոխարինական (*al-badal* և *al-mubdal 'ileyh*) փոխարինող և փոխարինված միավորներ), սաստկական (*al-mu'akkad* և *al-tawkīd* սաստկացնող և սաստկացված), լծորդական (*al-'iḏāfa* լծորդում, *al-muḏāf* և *al-muḏāf 'ileyh* լծորդող և լծորդված միավորներ), նախդրավոր (*ḥarf al-jarr* և *'ism al-majrūr* նախդիր և հարակցական դիրքով դրված բառ), առանձնացնող (*al-tamīz*՝ եզրույթի անվանումը, *al-mumeyyiz* և *al-mumeyyaz*՝ առանձնացող և առանձնացված անուններ), բացահայտող (*al-'ixtiṣāṣ*՝ անվանում, երկու բաղադրիչներն էլ կոչվում են *al-muxtaṣṣ*), հարադրական (*al-mazjī*) [Գաբուլյան, Կարաբեկյան 2002: 40]:

Արաբերենում լծորդական կապակցությունը կազմված է փոփոխական դիրքով դրված առաջին բաղադրիչից և հարակցական դիրքով դրված երկրորդ բաղադրիչից: Ընդ որում, ստանալով որոշյալ առում, լծորդական կառույցի առաջին անդամը զրկվում է *tanwīn*-ից (եթե եզակի թվով է դրված), և *nūn* հարֆից (եթե դրված է երկակի թվով կամ արական սեռի ամբողջական հոգնակի թվով):

## 2.2.2. Բայեր

Արաբերենում բայը կոչվում է *fi'ī* (*fi.εø.lu<sup>n</sup>*): Բառարմատի հիմքի կազմում կա երեք գործառական դիրք՝ *fai* (*fā'*, 'ayn և *lām*)<sup>38</sup> հարՖերը: Քերականական ավանդույթում այդ երեք արմատականներն ընդունված է խորհրդանշել որպես *fā'* *al-fi'ī*, 'ayn *al-fi'ī* և *lām al-fi'ī* [Гранде 2001: 19]: Պետք է նշել, որ բայի անցյալ ժամանակի երրորդ դեմքի եզակի թիվը հնչում է որպես *fa.εa.la*, և կա նաև «բայանուն» կամ «աղբյուր» հասկացությունը (*masdar*), որը *fa.εa.la* բայի դեպքում կլինել *fa.εø.la.tu<sup>n</sup>*: Բառի արմատի հարցում տարակարծիք են եղել դեռևս Քուֆայի և Բասրայի լեզվաբանական դպրոցների քերականները: Քուֆացիները նշում էին, որ *fa.εa.la*-ն, զուրկ լինելով որևէ այլ հարՖից, պետք է համարվի բառի արմատը, մինչդեռ բասրացիները, կարևորելով «բայանվան» դիրքը, ցույց էին տալիս, որ հենց դա է բառի արմատը, իսկ նշած բայաձևը ծագում է այդ արմատից:

Բայերն ունեն կաղապար, դեմք, թիվ, սեռ, ժամանակ, եղանակ, դիրք: ԵռահարՖ բառարմատից առաջ, դրա մեջտեղում կամ դրանից հետո կարող են ավելանալ հարՖեր, ինչից երբեմն կտրուկ փոխվում է նախնական իմաստը: Բայի կաղապարների թիվը 15 է՝ *fa.εa.la* (I), *fa.εø.εa.la* (II), *fa.aø.εa.la* (III), 'a.fø.εa.la (IV), *ta.fa.εø.εa.la* (V), *ta.fa.aø.εa.la* (VI), 'i.fø.ta.εa.la (VII), 'i.nø.fa.εa.la (VIII), 'i.fa.εa.lø.la (IX), 'i.sø.ta.fø.εa.la (X), 'i.fa.εa.aø.la (XI), 'i.fø.εa.uø.εa.la (XII), 'i.fø.εa.wø.wa.la (XIII), 'i.fø.εa.nø.la.la (XIV), 'i.fø.εa.nø.la.aø (XV) [Юшманов 1999: 23]: Ինչպես երևում է՝ սուբուն ունեցող հարՖով (այստեղ՝ *'alif*-ով) ավարտվել է միայն մեկ կաղապար: Այս կաղապարները կարող են կոչվել քառահարՖ, հնգահարՖ և վեցահարՖ՝ կախված նրանից, թե քանի երկրորդական հարՖ է միացել հիմնական երեք դիրքերին (*f*, *ε*, *l*): Վերոնշյալ կաղապարներից առավել գործածական են առաջին տասը [Гранде 2001: 122]: Ընդ որում, ոչ արաբական լեզվաբանական դպրոցներում այս կաղապարներն անվանում են

<sup>38</sup> Արաբերենի *fā'*, 'ayn և *lām* հարՖերի փոխարեն կարող են լինել 29 հարՖերից յուրաքանչյուրը, այսինքն, ապա տեսականորեն կարող է լինել  $29 \cdot 29 \cdot 29 = 24389$  արմատ: Հավելենք նաև, որ պետք է բացառել միևնույն հարՖերի եռակի կրկնությունը, ինչպես նաև *'alif*-ով որևէ արմատ չսկսելու պայմանը (այն կարող է լինել կա՛մ երկրորդ կա՛մ երրորդ դիրքում): Ստացվում է, որ արմատների թիվը տեսականորեն դառնում է  $(28 \cdot 29 \cdot 28) - 28 = 22708$ :

թվերով, իսկ արաբական դպրոցներում՝ արտասանում են կաղապարը: Հանդիպում են նաև քառահարֆ բայեր, որոնց հատույթները տարբեր հարֆեր են և չեն համընկնում վերը թվարկածների հետ [Watson 2001: 141]:

Եվրոպական և ամերիկյան դպրոցներում, որտեղ հարֆին և հարաքային առանձին-առանձին տրվում է ձևույթ կազմելու գործառույթ, կաղապարները արմատի և ածանցի միություն են: Ընդ որում, հարֆ-ածանցները կարող են զբաղեցնել ինչպես նախնական, այնպես էլ՝ միջանկյալ դիրք: Եթե դիտարկվում են այս բառերի միայն երկրորդական ձևույթները, ապա նախաածանցներ են նշում հետևյալ բայերում՝ **'a.fø.ɛa.la** (IV), **'i.nø.fa.ɛa.la** (VIII), **'i.sø.ta.fø.ɛa.la** (X), միջածանցներ՝ մնացածում **fa.ɛø.ɛa.la** (II), **fa.aø.ɛa.la** (III): Սակայն նույն տեսակետը պաշտպանող լեզվաբանները ոչինչ չեն նշում այնպիսի ածանցների մասին, որոնք կարծես «բեկվել են» արմատային հարֆերով, և չեն կարող առանձնացվել միմյանցից որպես ինքնուրույն նախաածանցներ ու միջածանցներ՝ **ta.fa.ɛø.ɛa.la** (V), **ta.fa.aø.ɛa.la** (VI), **'i.fø.ta.ɛa.la** (VII), **'i.fa.ɛa.lø.la** (IX), **'i.fa.ɛa.aø.la** (XI), **'i.fø.ɛa.uø.ɛa.la** (XII), **'i.fø.ɛa.wø.wa.la** (XIII), **'i.fø.ɛa.nø.la.la** (XIV), **'i.fø.ɛa.nø.la.aø** (XV): Ըստ այդմ, կարելի էր ներմուծել *contritumfix* եզրույթը՝ որպես առանձին ինքնուրույն ածանց՝ *բեկածանց*: Սակայն նախաածանց, միջածանց և բեկածանց հասկացությունները չեն կարող իրենց տեղը գտնել լեզվական այնպիսի կառուցվածքի պարագայում, որպիսին ունի արաբերենը՝ որպես թեքական լեզու, քանի որ առանձին վերցրած՝ դրանք իմաստ չեն արտահայտում:

Կաղապարներ կազմելիս՝ արմատական հարֆերը հնչյունական փոփոխության հիմնականում չեն ենթարկվում, օրինակ՝ **kataba** – **istaktaba** (գրել – արտագրել), **kalama** – **takallama** (վիրավորել – խոսել), **fataḥa** – **infataḥa** (բացել – զարգանալ) և այլն: Կարող է տեղի ունենալ նաև հակառակը. եթե առաջին արմատականն էմֆատիկ հնչյուն է՝ **ص** (ص), **ذ** (ذ), **ط** (ط), **ظ** (ظ), կամ «թույլ» հարֆ, ապա այն կարող է ազդել այն հարֆի վրա, որն անմիջականորեն հայտնվում է այդպիսի հարֆից հետո, օրինակ՝ **bakara** – **ibtakara** (զարթնել – հայտնագործել) **ṣadama** – **iṣṭadama** (հարվածել – բախվել): Տվյալ դեպքում **ت** էմֆատիկ հարֆը **ط** հարֆի հնչյունափոխված ձևն է: Նույն երևույթը կարող է լինել նաև այն դեպքում, երբ առաջին արմատական հարֆը «d» է (د):

Արաբերենում նույնպես կան առաջին, երկրորդ և երրորդ դեմքի բայեր, որոնք ունեն ոչ միայն եզակի ու հոգնակի, այլև երկակի թիվ: Ինչ վերաբերում է սեռին, ապա արական ու իգական սեռ ունեն և՛ երկրորդ, և՛ երրորդ դեմքի բայերը: Ժամանակաձևերն արաբերենում երեքն են՝ անցյալ, ներկա և ապառնի: Անհրաժեշտ է հավելել, որ ապառնի ժամանակի բայաձևն իրենից ներկայացնում է նույն ներկայի բայաձևը՝ ավելացնելով *sīn* հարֆը (*sa.*) կամ առանձին գրվող եռահարֆ *sawfa* մասնիկը (*sa.wø.fa.*): Երբեմն անցյալ և ներկա ժամանակները ներկայացվում է պարզապես կատարյալի և անկատարի ձևեր (*perfect* և *imperfect*) [Гранде 2001: 121]: Մեկ այլ ձևակերպմամբ, տարբերում են երկու բայական հիմք՝ կատարյալ և անկատար, որոնց այս կամ այն գործառությունը ստորոգյալի դիրքում արտահայտում է անցյալ, ներկա և ապառնի ժամանակի նշանակությունները, ինչպես նաև հրամայական նշանակությամբ բայահիմք, որն ածանցվում է անկատար հիմքից [Գաբույան, Կարաբեկյան 2002: 57]:

*Աղյուսակ 13*

	Եզակի թիվ	Երկակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին դեմք	ka.ta.bø.tu	ka.ta.bø.na.aø	ka.ta.bø.na.aø
Երկրորդ դեմք	ka.ta.bø.ta	ka.ta.bø.tu.ma.aø	ka.ta.bø.tu.mø
	ka.ta.bø.ti	ka.ta.bø.tu.ma.aø	ka.ta.bø.tu.nø.na
Երրորդ դեմք	ka.ta.ba	ka.ta.ba.aø	ka.ta.bu.uø
	ka.ta.ba.tø	ka.ta.ba.ta.aø	ka.ta.bø.na

Աղյուսակ 13-ում *ka.ta.ba* (գրել) պարզագույն բայն է անցյալ ժամանակում: Ինչպես երևում է՝ *ka.ta.bø* կադապարին ավելացել են տարբեր վերջավորություններ: Հաշվի առնելով արուդային գրության՝ վերը նշված կանոնները՝ երեքից ավելի ձայնավոր ունեցող հարֆեր չեն կարող գրվել կողք կողքի: Հետևաբար, եթե ավելացվում է որևէ ձևույթ, ապա արմատային վերջին հարֆը զրկվում է ձայնավորից: Երկակի և հոգնակի ձևերը բխում են եզակի թվի ձևից: Նույնը կատարվում է նաև մյուս բայերի խոնարհման ժամանակ: Անցյալ ժամանակի բայերի համար գոյություն ունի միայն մեկ՝ ինքնառական դիրք:

Ներկա ժամանակի խոնարհման պատկերն այլ է. վերոնշյալ կաղապարների բայերը կարող են տարբերվել երկրորդական հարֆերով:

Աղյուսակ 14

	Եզակի թիվ	Երկակի թիվ	Հոգնակի թիվ
Առաջին դեմք	'a.kø.tu.bu	na.kø.tu.bu	na.kø.tu.bu
Երկրորդ դեմք	ta.kø.tu.bu	ta.kø.tu.ba.aø.ni	ta.kø.tu.bu.uø.na
	ta.kø.tu.bi.iø.na	ta.kø.tu.ba.aø.ni	ta.kø.tu.bø.na
Երրորդ դեմք	ya.kø.tu.bu	ya.kø.tu.ba.aø.ni	ya.kø.tu.bu.uø.na
	ta.kø.tu.bu	ta.kø.tu.ba.aø.ni	ya.kø.tu.bø.na

Աղյուսակ 14-ում դարձյալ պարզագույն եռահարֆ բայն է: Ներկա ժամանակի ձև ունեցող բայերն են, որ ունեն երեք դիրք՝ ինքնատական, խնդրատական և հատյալ, որոնցից առաջինը կարող է լինել, ինչպես աղյուսակում է նշված, u (*çamma*), i (*kasra*) կամ a (*fatha*) ձայնավորները: Հստակ երևում են բայի վերջածանցները, որոնք ավելացվում են արմատական վերջին հարֆին:

Բայը կարող է դրվել թեքական ձևերով՝ թեքական մասնիկների ազդեցության պատճառով, քանի որ ոչ թեքական մասնիկները դրվում են անցյալ ժամանակաձևի բայերի հետ: Այսպես, թեքական մասնիկները, որոնք բայը դնում են խնդրատական կամ հատյալ դիրքերում, այդպես էլ կոչվում են՝ համապատասխանաբար խնդրատական կամ հատյալ մասնիկներ: Հատյալ դիրքը (արաբերեն՝ *jazm*), գործածական է միայն բայի դեպքում և արտահայտվում է հիմնականում վերջին հարֆի սուքունով՝ ձայնավորի բացակայությամբ: Եթե նախավերջին հարֆը նույնպես սուքուն ունի, ապա վերջին հարֆը պարզապես սղվում է: Աղյուսակին նայելով՝ պարզ է դառնում, որ դա կարող է վերաբերել ta.kø.tu.bi.iø.na, ta.kø.tu.ba.aø.ni, ta.kø.tu.ba.aø.ni, ya.kø.tu.ba.aø.ni, ta.kø.tu.ba.aø.ni, ta.kø.tu.bu.uø.na, ya.kø.tu.bu.uø.na բայերին (թվով 7 բայ), բայց քանի որ այս ցուցակում երեք անգամ կրկնվում է ta.kø.tu.ba.aø.ni բայաձևը,



այսպիսի բայաձևերի թիվը հաշվվում է որպես «հինգ բայեր» (*al-'af' āl al-xamsa*)<sup>39</sup>: Բացառություն են կազմում իգական սեռի հոգնակի բայաձևերը, որոնք որևէ փոփոխություն չեն կրում: Նույնը տեղի է ունենում է նաև խնդրառական դիրքում. բացի այս «5 բայերից» և չփոփոխվող երկու բայաձևերից մյուս բոլոր բայերի վերջին հարՖը կրում է a ձայնավորը:

Բայի հիմնական հարՖերից երկրորդը կարող է ունենալ «միջին արմատականի» յուրահատուկ ձայնավոր. տարբեր բայերի դեպքում այն կարող է լինել a, u, i ձայնավորներից որևէ մեկը, սակայն դա որևէ ազդեցություն չի թողնում բայի վերջին հարՖի ձայնավորի վրա, և վերաբերում է միայն պարզագույն հիմքի բայերին: Մյուս 14 կաղապարները նման խնդիր չունեն: Երկրորդ և երրորդ հարՖերը կարող են կրկնվել կամ լինել մեզ հայտնի երեք թույլ հարՖերից որևէ մեկը: Ուստի, հայտնվելով այս կամ այն դիրքում, առաջնորդվելով «միջին արմատական» հարՖի ձայնավորով, բայի գրության և արտասանության մեջ դարձյալ առաջնությունը տրվում է տաղաչափության կանոններին՝ երկու հարևան հարՖերից թույլը կարող է սղվել, եթե երկու սուքում հանդիպում են իրար, իսկ կրկնվող հարՖերը, որոնք ներկայացված են մեկ գրույթով ու շաղհա գրանշանով, «բացվում են»՝ վերածվելով երկու՝ ձայնավոր ունեցող հարՖերի:

Պարզագույն բայահիմքի՝ ներկա ժամանակի բայաձևերը խոնարհելիս երևում է, որ առաջին արմատական հարՖին ավելացվում է մեկ հարՖ՝ **'a.kø.tu.bø**, **ta.kø.tu.bø**, **ya.kø.tu.bø**, **na.kø.tu.bø**: Մյուս կաղապարների դեպքում դրանք պահպանվում են, սակայն որոշակի փոփոխությունների կարող են ենթարկել բայահիմքը: Վերը նշվեց *transfixus*-ի մասին, որը դարձյալ ներառում է ձայնավոր հնչյունները՝ որպես հնչույթներ: Ինչպես նաև, ևս մեկ ածանցի փորձի՝ բեկածանցի, նույնպիսին ոչ ռելևանտ արաբերենի դեպքում: Այսպիսով, նախածանց են համարվել ոչ միայն վերը նշված չորս հարՖերը, որոնք բայի դեմք են ցույց տալիս, այլև հետևյալ բայերի կաղապարները՝ **yu.fø.ei.lø** (IV), **ya.nø.fa.ei.lø** (VIII), **ya.sø.ta.fø.ei.lø** (X), իսկ միջածանցները երկուսն են, որոնց հիմքին ավելացվել է ներկա ժամանակը ցույց տվող հարՖը՝ **yu.fa.εø.ei.lø** (II),

<sup>39</sup> Հարկ է նշել, որ այս պարագայում՝ միայն երկրորդ դեմքի հոգնակի թիվ կազմելիս, wāw հարՖին հաջորդում է գրաֆիկական 'alif: Վերջինս չի ընթերցվում, այլ զուտ կիրառվում է ամբողջական հոգնակի թվից տարբերվելու համար, որը նույնպես կարող է վերջանալ wāw հարՖով, եթե դարձյալ սղվում է nūn հարՖը՝ լծորդական կապակցություն կազմելիս (սույն աշխատանքի 71-րդ էջ):

**yu.fa.aø.ei.iø** (III): Այս պարագայում բեկաձանց կարող էին լինել հետևյալ բայերի՝ թավատառ նշված հատվածները՝ **ya.ta.fa.εø.εa.iø** (V), **ya.ta.fa.aø.εa.iø** (VI), **ya.fø.ta.εi.iø** (VII), **ya.fa.εa.iø.iø** (IX), **ya.fa.εa.aø.iø** (XI), **yu.fø.εa.uø.εi.iø** (XII), **yu.fø.εa.wø.wi.iø** (XIII), **ya.fø.εa.nø.li.iø** (XIV), **ya.fø.εa.nø.la.yø** (XV), քանի որ դրանք չեն կարող առանձնացվել միմյանցից որպես ինքնուրույն նախաձանցներ ու միջաձանցներ: Սակայն դարձյալ, թե՛ *transfixus*-ը, թե՛ *contritumfix*-ը իմաստ չեն կրում, ինչը կարևոր և հիմնական պայմանն է՝ ձևույթ համարվելու համար:

Արաբերենում բայն ունի նաև սեռ՝ ներգործական, որի օրինակները քննվեցին վերը, և կրավորական, որի դեպքում հիմնական ձևույթի ներսում փոխվում են հնչյունները կամ թույլ հարձերը, ինչը Ռեֆորմատսկին անվանել էր «*transfixus*»:

Սահմանական եղանակի այս երկու ժամանակաձևերի բայերը ձևով արտահայտում են նաև այլ եղանակներ. մասնավորապես՝ անցյալ ժամանակի բայաձևն ամբողջությամբ համընկնում է ըղձական եղանակին, ներկա ժամանակի բայաձևն իր թեքական դիրքերով՝ ենթադրական ու հարկադրական եղանակներին:

Սահմանականից զատ՝ միակ ինքնուրույն բայաձևը հրամայական եղանակի բայաձևն է, որն ունի միայն երկրորդ դեմք: Այն, նույնպես չունի թեքական դիրքեր, սակայն ինքնառական դիրքը կարող է ունենալ բոլոր երեք ձայնավորները:

*Աղյուսակ 15*

	Եզակի թիվ	Երկակի թիվ	Հոգնակի թիվ
Դրական	'u.kø.tu.bø	'u.kø.tu.ba.aø	'u.kø.tu.bu.uø
խոնարհում	'u.kø.tu.bi.iø	'u.kø.tu.ba.aø	'u.kø.tu.bø.na
Ժխտական	la.aø+ta.kø.tu.bø	la.aø+ta.kø.tu.ba.aø	la.aø+ta.kø.tu.bu.uø
խոնարհում	la.aø+ta.kø.tu.bi.iø	la.aø+ta.kø.tu.ba.aø	la.aø+ta.kø.tu.bø.na

Աղյուսակ 15-ից երևում է, որ հրամայական եղանակի բայը դրվում է հատյալ դիրքով: Վերը քննվեց, որ այդ դիրքում պետք է գործի «հինգ բայերի» կանոնը, որի հետևանքով սղվում է ուն հարձեր: Դրական խոնարհման ժամանակ բային կցվում է համզա՝ «ս» ձայնավորով, ինչը բխում է դարձյալ «միջին արմատականի» կանոնից, և կիրառական է միայն պարզագույն հիմք ունեցող առաջին կաղապարի բայի դեպքում:

### 2.2.3. Մասնիկներ

Արաբերենում յուրահատուկ խումբ են կազմում մասնիկները, որոնք, լինելով տարբեր խոսքի մասեր, ունեն մի շարք ընդհանրություններ: Մասնիկները նույնպես կոչվում են «հարֆ»: Անվանումը ծագում է դասական ասորերենի *ḥarpā* բառից, որ նշանակում է սահման, վերջին կետ: Հին եբրայերենում *ḥerpā* նշանակում է վիրավորանք՝ արտահայտված վերջին կծու խոսքերով: Հայտնի է, որ խոսքի երեք մասերի բաժանելու սկզբունքն արաբ քերականները վերցրել են Արիստոտելից, որտեղ որպես «մասնիկներ» հանդես է գալիս *ho'ros* եզրույթը՝ դարձյալ նշանակելով եզր, սահման: Սահմանի հարցում համամիտ են նաև ժամանակակից լեզվաբանները [Owens 1991: 52]: Միջնադարյան եգիպտացի արաբ լեզվաբան ալ-Սույուտին (1445-1505) հաշվել էր 70 այդպիսի հարֆ, որոնք կարող են բաղկացած լինել մեկից մինչև 4 հնչույթաբանական մասնիկ-հարֆերից<sup>40</sup> [Рыбалкин 2003: 229]:

«Մասնիկներ» հասկացության տակ համախմբված են՝ նախդիրները, կապերը, շաղկապները, վերաբերականները, ձայնարկությունները, ինչպես նաև՝ որոշ դերանուններ (ձև չունեցող դերանունները կոչվում են հարֆ, իսկ նրանք, որոնք ունեն սեռ կամ դիրք՝ համարվում են անուն) [Гранде 2001: 393]:

Հնչույթաբանական մեկ մասնիկից բաղկացած հարֆերը գրվում են հաջորդ բառին կից, քանի որ հակառակը կհակադարձեր արաբական տաղաչափությանը: Դրանք են (անվանումները՝ ինչպես այբուբենում) [Юшманов 1999: 90]՝

1. **'alif**, որ մշտապես կրում է a ձայնավորը (իրականում ստացվում է hamza, քանի որ ալիֆը չի կարող որևէ ձայնավոր ունենալ), գործածվում է որպես հարցական մասնիկ կամ կոչական
2. **bā'**, որ մշտապես կրում է i ձայնավորը, գործածվում է որպես նախածանց, ունի մոտ լինելու իմաստ, պատճառ, կապ, հազվադեպ՝ երդման մասնիկ

<sup>40</sup> Նույն աղբյուրում նշվում է, որ Սույուտին առանձնացրել է միայն մեկ հարֆ, որն ունի հինգ հատույթ՝ la.ki.nø.na: Տեսնում ենք, որ այն բաղկացած է 4 հարֆից: Բանն այն է, որ ալ-Սույուտին համարում էր, որ առաջին հարֆից հետո գոյություն ունի նաև ևս մեկ հարֆ՝ 'alif-ը: Այսինքն, բառն ուներ հետևյալ տեսքը՝ la.aø.ki.nø.na

3. **tā'**, որ մշտապես կրում է a ձայնավորը, գործածվում է միայն որպես երդման մասնիկ
4. **sā'**, որ մշտապես կրում է a ձայնավորը, ծառայում է որպես ապառնի ժամանակի ցուցիչ
5. **fā'**, որ մշտապես կրում է a ձայնավորը, համադասական շաղկապ, նաև՝ նպատակ ցույց տվող կապ
6. **kāf**, որ մշտապես կրում է a ձայնավորը, գործածվում է որպես համեմատության մասնիկ
7. **lām**, որ կարող է կրել a ձայնավոր (հաստատունության մասնիկ, դերանունների դեպքում՝ նպատակի մասնիկ) կամ i ձայնավոր (հիմնականում՝ նպատակի, հորդորի, պատճառի մասնիկ): Եթե միանում է որոշյալ հոդին ('alif- lām), սղում է 'alif-ը
8. **wāw**, որ մշտապես կրում է a ձայնավորը, գործածվում է որպես համադասական շաղկապ (և, սակայն)՝ չազդելով հաջորդ բառի վերջավորության վրա, երդման մասնիկ, որից հետո բառը պետք է գրվի հարակցական դիրքով, ուղեկցող խնդիր ստեղծող մասնիկ, որից հետո բառը գրվում է խնդրառական դիրքով<sup>41</sup>:

Այս ցուցակին ալ-Սուլյուտին ավելացրել էր ևս հինգը՝ առանձին **hamza**-ն, **mīm**-ը, **nūn**-ը, **hā'**-ն և **yā'**-ն, բոլորը՝ a ձայնավորով [Рыбалкин 2003: 231]: Մասնիկները կարող են բաղկացած լինել նաև երկու (mi.nø, fi.iø), երեք ('i.la.aø, ba.eø.da), չորս (գրեթե բոլորը շաղկայով, օրինակ՝ 'a.mø.ma.aø, ինչպես նաև առանց շաղկա, օրինակ՝ ḥa.aø.ša.aø) հարֆերից: Եթե մասնիկները կազմվում են եռանդամ հարացույցից, ապա կարող են ունենալ դիրքեր (*ḍarf*): Որոշ լեզվաբաններ այն համարում են հարֆեր, մյուսները՝ անուններ [Фролов 1977: 30]: Հարֆերը կարող են լինել չեզոք՝ ազդեցություն չունենալով թե՛ անունների վրա, թե՛ բայերի (որոշները կարող են օգտագործվել երկուսի հետ էլ), որոշները կարող են ազդել անկատար բայի վրա, որը կդրվի հատյալ դիրքում, որոշները կարող են ազդել անվան վրա (հարակցական դիրք), իսկ մի խումբ էլ կարող է խնդրառական դիրքում ապահովել թե՛ անվան, թե՛ անկատար բայի համար:

<sup>41</sup> Վերոհիշյալ միահատույթ մասնիկներն առավել մանրամասն քննել է Գրանդեն [Гранде 2003: 394]

## 2.3. Հարֆի ձևաբանական բովանդակության մեկնաբանումն արաբ առաջին քերականների աշխատություններում

### 2.3.1. Ալ-Խալիլ իբն Ահմադ

Աշխատանքի առաջին գլխում խոսվել էր Բասրայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչ ալ-Խալիլ իբն Ահմադի մասին: Նրա «*Kitāb al-‘Ayn*» բացատրական բառարանը մեծարժեք է նաև հարֆի՝ որպես ձևաբանական մասնիկի և խոսքի մասի մեկնաբանության տեսանկյունից: Ինչպես հայտնի դարձավ, արաբերենում բառերը կազմվում են երեք հիմնական հարֆերի շնորհիվ, որոնք կազմում են արմատը: Դրանց բոլոր հնարավոր դեպքերը քննված են բառարանում ոչ թե ըստ այբբենական հերթականության, այլ արտասանության՝ կոկորդից մինչև շուրթեր (աղյուսակ 1, սույն աշխատանքի էջ 21):

Նախքան հարֆերի՝ որպես կաղապար կազմող նվազագույն մասնիկների և ձևաբանության տեսանկյունից հետազոտվող խոսքի մասերին անդրադառնալը, պետք է նշել, որ հեղինակը բազմիցս գործածում է այդ եզրույթը ոչ միայն քերականական, այլև կենցաղային նշանակությամբ՝ որպես «մաս»: Դրա առավել մանրամասն հետազոտումը ներկայացվել է սույն աշխատանքի 32-33 էջերում:

Արմատային հարֆի բացատրությունը և եզրույթի կիրառումն առկա է բոլոր հատորներում. սկսելով որևէ գլուխ, օրինակ՝ *tā*-ի և դրա՝ մյուս բոլոր հարֆերի հետ ունեցած հնարավոր բոլոր միությունների մասին, ալ-Խալիլն այն վերնագրում է հենց այդպես՝ *ḥarf tā*:

Հեղինակը նախ ցույց է տալիս երկու հարֆերի համադրությունը, որի ավարտից հետո՝ երեք, և երկու առանձին գլուխներով՝ չորս և հինգ: Հարկ է ավելացնել, որ անունների և բայերի արմատները բաղկացած են նվազագույնը երեք հարֆից: Եթե երկրորդ և երրորդ հարֆերը կրկնվեն՝ լինեն նույնահունչ, ապա կգործի *tašdīd*-ը: Չնայած դրան, այսպիսի կառույցներն ալ-Խալիլն անվանել է «երկհարֆ»:

- 1) Հատոր 1, էջ 199: Այստեղ քննվում են ‘ayn+rā’+kāf հնչույթաբանական մասնիկների կազմած հնարավոր տարբերակները: Հեղինակը ներկայացնում է عركك (‘arkarka) բայը.

أصله من الثلاثي ولفظه خماسي، إنما هو من العرك فأردف بحرفين  
 Արմատը եռահարֆ է, իսկ հնչողությամբ՝ հնգահարֆ, քանի որ նրան  
 ավելացել են երկու հարֆեր: Նույն բացատրությունը հանդիպում է 310 էջում,  
 որտեղ բացատրվում է عصبب ‘aṣbaṣba բայը, և երկրորդ հատորի 15-րդ  
 էջում, որտեղ քննվում է عنطنط ‘inṭanṭ: «Ավելացել են հարֆեր». ասելով,  
 ամենայն հավանականությամբ, հեղինակն ի նկատի ունի ոչ միայն այդ  
 հարֆերի սուկ բաղաձայն հնչյունները, այլև դրանց հետ կապված  
 ձայնավորները: Այս կոնտեքստում ‘aṣbaṣba-ն և ‘aṣaba-ն ենթաձևային  
 (այլաձևային) են: Նույնը վերաբերում է ‘anṭanṭa բային:

- 2) Հատոր 1, էջ 345: Այստեղ է, որ հեղինակը քննության է առնում արդեն  
 հնգահարֆ (xumāsi) արմատները՝ առանձին գլխով:

باب الخماسي من العين: الخماسي من الكلمة على خمسة أحرف، ولا بد أن يكون من  
 تلك الخمسة واحد أو اثنان من الحروف الذلق: ر، ل، ن، ف، ب، م، فإذا جاءت كلمة رباعية  
 أو خماسية لا يكون فيها واحد من هذه الستة، فاعلم أنها ليست بعربية  
 «‘ayn» հարֆի և հնգահարֆ բայերի գլուխ: xumāsi են կոչվում այն բառերը,  
 որոնք ունեն հինգ հարֆ, և դրանցից մեկը կամ երկուսը պետք է լինեն այս  
 «սահուն» հարֆերից մեկը՝ n (rā’), l (lām), ū (nūn), ṣ (fā’), p (bā’), m (mīm), և  
 եթե բառը [հնգահարֆ կամ քառահարֆ] չունի այս վեց հարֆերից և ոչ մեկը,  
 ուրեմն իմացեք, որ դա արաբերեն չէ:

Այստեղ կարելի է միայն ավելացնել, որ հնգահարֆ կամ քառահարֆ են  
 կոչվում ոչ միայն հինգ կամ չորս արմատական հարֆ ունեցող բառերը, այլև  
 այն եռահարֆ արմատները, որոնց ավելացել են համապատասխանաբար  
 երկու կամ մեկ հարֆ (քառահարֆ՝ fa.əṭ.əa.la (II), fa.aṭ.əa.la (III), ‘a.fə.əa.la  
 (IV), հնգահարֆ՝ ta.fa.əṭ.əa.la (V), ta.fa.aṭ.əa.la (VI), ‘i.fə.ta.əa.la (VII),  
 ‘i.nə.fa.əa.la (VIII), ‘i.fa.əa.lə.la (IX), ‘i.fa.əa.aṭ.la (XI)): Առավելագույն հարֆերի  
 քանակը, որ եռահարֆ բայը կարող է ունենալ, 6-ն է: Ընդ որում, եթե կան 4

կամ 5 արմատական հարֆեր ունեցող բայեր, ապա վեց արմատական հարֆ ունեցող բայեր չկան:

- 3) Հատոր 2, էջ 210: Ներկայացվում է  $\text{tā'}$ ,  $\text{wāw}$  և  $\text{'ayn}$  հարֆերի կազմած արմատը: Ընդ որում, վերջին հարֆը՝  $\text{wāw}$ , ցույց է տրված որպես թույլ հարֆերի ( $\text{'alif}$ ,  $\text{wāw}$ ,  $\text{yā'}$ ) հնարավոր տարբերակներից մեկը:

المطوعة بكسر الواو وتثقيل الحرفين .

*Al-muṭawwi' atun (المطوعة)* բառում  $\text{wāw}$  հարֆը կրում է քասրա (*i ḍajjā* վոր)՝ այդ երկու հարֆերի «ծանրացմամբ» (*taṭqīl al-ḥarfeyn*): Վերը նշվեց, որ արաբերենում կա *tašdid* երևույթը, որն արտահայտվում է երկու նույնահունչ հարֆերի փոխարեն *šadda* (◌◌) ունեցող մեկ հարֆ-գրանշանով: Այս երևույթը հայտնի է նաև որպես «*taṭqīl al-ḥarfeyn*» :

- 4) Հատոր 2, էջ 259: Այստեղ տրվում են  $\text{'ayn}$ ,  $\text{fā'}$  և  $\text{wāw}$  արմատային հարֆերով կազմված բառերի բացատրությունները, հանդիպում է *ḥarf mutaḥarrrik* արտահայտությունը՝

والأشئ عِفْوَةٌ ولا أعلم واوًا مُتَحَرِّكَةً بعد حرف متحرك في آخر البناء غير هذا  
*Իզական ձևը՝ 'ifawatun, և հայտնի չէ այլ  $\text{wāw}$  mutaḥarrrik (ծայնավոր ունեցող  $\text{wāw}$ , Հ. Հ.), մեկ այլ  $\text{ḥarf}$  mutaḥarrrik-ից հետո՝ բառավերջի դիրքում՝ այս մեկ դեպքից բացի: Հայտնի է, որ խոսքը կազմված է ծայնավոր ունեցող ( $\text{ḥarf}$  mutaḥarrrik, արուդային |) և չունեցող ( $\text{ḥarf}$  sākin, արուդային ●) հարֆերից: Նշվեց, որ ցանկալի չէ երեք  $\text{ḥarf}$  mutaḥarrrik միավորների՝ իրար կողք կողքի հայտնվելը: Դրա պատճառը բառավերջում գրվող իզականի ցուցիչ  $\text{tā' marbūṭa}$ -ն է, որից առաջ մշտապես պետք է գրվի  $\text{a}$  ծայնավորը: Սույն աշխատանքի 38-րդ էջում նշվել է  $\text{fāṣila kabīra}$  (●|||) և  $\text{fāṣila ṣaḡīra}$  (●||) միավորների մասին՝ կազմված  $\text{sabab}$  (●| կամ ||) և  $\text{watad}$  (●|| կամ |||) վանկաչափական պարզագույն միավորներից: Ըստ այդմ, քննվող բառը՝ 'ifawatun, խիստ հազվադեպ միավոր է՝  $\text{fāṣila kabīra}$  (●|||):*

- 5) Հատոր 3, էջ 312: «Հինգ անունների» (մանրամասն՝ սույն աշխատանքի 68-րդ էջ) պարագայում արմատի հնչույթաբանական մասնիկը դիտարկվել է որպես հարֆ.

ثلاثة أشياء: الحرف والصرف والصوت. وربما ألقوا الحرف وأبقوا الصرف والصوت، وربما ألقوا الحرف بصرفها وأبقوا الصوت

Գոյություն ունի երեք հասկացություն՝ *ḥarf*, *ṣarf* (ձևաբանական դիրք, Հ. Հ.)  
և *ṣawt* (ձայն կամ հնչյուն Հ. Հ.): Միգուցե հեռացվի *ḥarf*-ը և կմնա *ṣarf* և  
*ṣawt*, և հնարավոր է նաև հեռացնել *ḥarf*-ը *ṣarf*-ի հետ ու կմնա *ṣawt*-ը:

Օրինակ՝ 'axu (եղբայր) բառից եթե հեռացվում է wāw հարֆը ('ax<sup>u</sup>)՝ մնում է  
ինքնառական դիրքում գրվող x հարֆը, իսկ եթե հեռացվում է wāw հարֆը և  
ինքնառական դիրքը ('ax), մնում է միայն x հարֆի հնչողությունը՝ որպես  
արատրակտ միավոր:

- 6) Հատոր 5, 398 էջ: Քննվում են kāf, tā' և hamza հարֆերը, հանդիպում է  
հետևյալ միտքը.

الناء مستعملة في هذه الكلمة استعمال الحرف الاصلي: توکأت، وأصل عربيته: وكأ  
يوکئ توکئ

tā'-ն գործածվում է հետևյալ բառում որպես արմատական հարֆ՝ *tawakka'at*,  
որի հիմքն արաբերենում սա է՝ *waka'a*, *yawki'u*, *tawki'un*:

Վերը նշվել էր, որ կաղապարներ կազմելիս՝ արմատական հարֆերը  
հնչյունական փոփոխության հիմնականում չեն ենթարկվում, և բացառություն  
կարող են կազմել էմֆատիկ հնչյունները կամ թույլ հարֆերը: Տվյալ  
պարագայում *waka'a* բայը, ստանալով հավելյալ հարֆեր, ունի ոչ թե *'iwtaka'a*  
տեսքը, այլ հնչյունափոխվում է՝ *'ittaka'a*: Ալ-Իսալիլը դա նեկայացրել էր  
tā'+kāf+hamza, և ոչ՝ wā'+kāf+hamza: Իսկ ինչ վերաբերում է այն հատվածին,  
որտեղ հիմքի տակ հեղինակը նշել է երեք բառ՝ *waka'a*, *yawki'u*, *tawki'un*,  
ապա դրանք են՝ բայի անկատար ու կատարյալ ձևերը, և բայանուն-*maṣdar*-ը:

- 7) Հատոր 8, էջ 396: Վերը նշվեց, որ արաբերենի անուն խոսքի մասի  
բաղկացուցիչ հատվածն է կազմում *tanwīn*-ը: Դրա կիրառության դեպք  
հանդիպում է *nūn* հարֆին վերաբերող գլխում.

النون: حرف فيه نون

*Al-nūn'* հարֆ, որի ներսում կա երկու *nūn*: Այսինքն՝ *nūn* հարֆի ամբողջական  
անունն է՝ *nūn<sup>u</sup>*, որտեղ վերջին հարֆի վրա դրված «un»-ը *tanwīn*-ի  
ինքնառական դիրքն է:



8) Հատոր 8, էջ 207: Վերը նշված «հինգ անուններին»՝ *ḡu.uṣṣ* («ունեցող»), *fu.uṣṣ* (բերան), *'a.xu.uṣṣ* (եղբայր), *'a.bu.uṣṣ* (հայր), *ḡa.mu.uṣṣ* (աներ) ավելացվում են ևս երկուսը՝ *'i.mṣ.ru.'uṣṣ* (տղամարդ) և *'i.bṣ.nu.muṣṣ* (լեզու):

وليس في كلام العرب شئ يكون اعرابه على حرفين غير سبع كلمات وهن: ذو، وفو، وأخو، وأبو، وحمو، وامرء وابنم

Արաբերենում չկան բառեր, որոնք ազդեն միաժամանակ երկու հարֆի վրա *i'rāb-ի* (ձևաբանական դիրք), բացի յոթ բառերից, նրանք են՝ *ḡū, fū, axū, abū, hamū, mar, bnum*: Այսպիսով, այստեղ փոփոխությունն ազդում է վերջին երկու հարֆի վրա: Թեև այստեղ խնդիրը կրում է շարահյուսական բնույթ, քանի որ աղյուսակում պետք է ներկայացնել լծորդական կապակցության օրինակներ, այդուհանդերձ անհրաժեշտություն կա ցույց տալու, որ երկու հարֆ ասելիս հեղինակը նկատի է ունեցել ոչ թե երկու հնչյուններ, այլ երկու միավորներ, որոնք ձևույթ են կազմում: Աղյուսակ 16-ում ներկայացված է *'u.sṣ.ra.tuṣṣ* (ընտանիք) բառը՝

Աղյուսակ 16

Ինքնանական դիրք ( <i>marfū'</i> )	Հարակցական դիրք ( <i>majrūr</i> )	Խնդրառական դիրք ( <i>manṣūb</i> )
<i>ḡu.uṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>ḡi.iṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>ḡa.aṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>
<i>fu.uṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>fi.iṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>fa.aṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>
<i>'a.xu.uṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'a.xi.iṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'a.xa.aṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>
<i>'a.bu.uṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'a.bi.iṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'a.ba.aṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>
<i>ḡa.mu.uṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>ḡa.mi.iṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>ḡa.ma.aṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>
<i>'i.mṣ.ru.uṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'i.mṣ.ri.iṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'i.mṣ.ra.aṣṣ 'u.sṣ.ra.tiṣṣ</i>
<i>'i.bṣ.nu.mu 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'i.bṣ.ni.mi 'u.sṣ.ra.tiṣṣ</i>	<i>'i.bṣ.na.ma 'u.sṣ.ra.tiṣṣ</i>

Այժմ կարելի է անդրադառնալ հարֆ եզրույթի այն օրինակներին, որոնք ցույց են տալիս ինքնուրույն բառ (մասնիկ), որն արաբերենի խոսքի երեք մասերից է:

9) Հատոր 3, էջ 210: Կարելի է հանդիպել «հարֆ» բառի բառարանային բացատրությունը՝ որպես *ḡā'+rā'+fā'* մասնիկների համադրություն՝

وكل كلمة بنيت أداة عارية في الكلام لتفرقة المعاني تسمى حرفاً

Յուրաքանչյուր բառ, որը խոսքը կառուցել է որպես պարզ մասնիկ՝ իմաստն ընդգծելու համար, կոչվում է հարֆ:

Հետևաբար, արաբերենում կա բառերի մի խումբ՝ «հարֆ» անվան տակ: Այդ հարֆերը հանդես են գալիս որպես «սպասարկու բառեր»:

وكل كلمة تقرأ على وجوه من القرآن تسمى حرفاً، يقال: يقرأ هذا الحرف في حرف ابن مسعود أي في قراءته

Յուրաքանչյուր բառ, որ կարդում ենք Ղուրանից, կոչվում է հարֆ. Ասում են՝ այս հարֆը (այստեղ՝ բառը, Հ.Հ.) մենք կարդում ենք իբն Մասուդի հարֆում (այսինքն՝ ըստ իր ընթերցածևի, Հ. Հ.):

Անհրաժեշտ է նշել, որ այստեղ «հարֆ» եզրույթը հանդիպեց երկու անգամ՝ տարբեր իմաստներով: Առաջինը՝ «կարդում ենք այս հարֆը» նշելով՝ հեղինակը հավանաբար ի նկատի է ունեցել «կարդում ենք այս բառը»: Հարֆը որպես բառ գործածել են նաև այլ հեղինակներ, օրինակ՝ Զամախշարին: Երկրորդ, իբն Մասուդի հարֆ ասելով նա մատնացույց էր անուն Ղուրանի՝ իբն Մասուդի ընթերցելաձևը: Բանն այն է, որ Ղուրանն ունի 7 ընթերցելաձև, որոնցից յուրաքանչյուրում, ձայնավորների հետ կապված, բառերը կարող են լինել այլ ընթերցանությամբ՝ տարբերվելով նաև իմաստային տեսանկյունից:

10) Հատոր 1, էջ 89: Այստեղ հանդիպում է եղանակավորող բառերից մեկը՝ la' alla (միգուցե): Դա ազդում է հաջորդ բառի արմատական վերջին մասնիկի վրա, որը հայտնվում է խնդրառական դիրքում: Այդպիսի գործառույթ ունեցող մասնիկները ևս հինգն են՝ 'inna (իսկապես), 'anna (որ), lakinna (սակայն), leyta (երանի), ka'anna (կարծես):

ويقال: عل أخاك: أي لعل أخاك، وهو حرف

Ասում են՝ **հնարավոր է քո եղբայրն է, այսինքն՝ միգուցե քո եղբայրն է, և դա (այստեղ՝ «միգուցե», Հ.Հ.) հարֆ է:**

11) Հատոր 1, էջ 95: Մեկ այլ օրինակում կարելի է տեսնել կապի (որպես խոսքի մաս) գործածության օրինակ՝

وأما " مع " فهو حرف يضم الشئ إلى الشئ

Ինչ վերաբերում է «*ma 'a*»-ին (թարգմանաբար՝ միասին, հետք, Հ. Հ.), ապա այն հարֆ է, որը միացնում է ինչ-որ մի բան մեկ այլ բանի հետք:

- 12) Հատոր 2, էջ 43: Հեղինակը ներկայացնում է *'ayn+nūn+dāl* եռահիմք արմատի բառաձևերը, և կիրառում «բնութագրող հարֆ» արտահայտությունը: Հետագա գործածությունների ժամանակ պարզ է դառնում, որ այդպես են բնորոշվել կապերը: Հեղինակն այդպես է անվանել այն հարֆերը, որոնք չեն ազդում հաջորդ բառի վրա՝ շարահյուսության տեսանկյունից:

عند: حرف الصفة...

«*'inda*» (թարգմանաբար՝ մոտ, Հ. Հ.)՝ բնութագրող հարֆ :

- 13) Հատոր 3, էջ 352: Կարելի է հանդիպել «արդյո՞ք» հարցական դերանունի արաբերեն տարբերակը՝

هل حرف استفهام وكذلك الالف

«*hal*»-ը հարցական մասնիկ է, ինչպես և *a*-ն (*'alif*)

Հարցական դերանունն ալ-Իսալիլն անվանել է «հարցական մասնիկ» (*ḥarf istafhām*): Ենթադրվում է, որ դերանունները պետք է համարվեին «անուն» խոսքի մաս, սակայն այստեղ դրանք «մասնիկներ» են:

- 14) Հատոր 5, էջ 286: Հեղինակը դարձյալ գործածել է «հարցական մասնիկ» (այս անգամ՝ *ḥarf mas'ala*) եզրույթը, այստեղ՝ «ինչքա՞ն» բառը՝

كم: حرف مسألة عن عدد، وتكون خيرا بمعنى "رب"، فإن عني بها "رب" جرت، وإن .  
عني بها "ربما" رفعت

*kam'* հարցական դերանուն, որը դրվում է թվական անվան հետք, և նշանակում է «բազմաթիվ». Եթե ունի այդ նշանակությունը, ապա հաջորդող անունը դրվում է հարակցական դիրքով, իսկ եթե նշանակում է «ո՞րչափ» (եզակի թվով՝ Հ. Հ.), ապա հաջորդող անունը գրվում է ինքնատական դիրքով

- 15) Հատոր 3, էջ 358: Հանդիպում է «խնդրառական մասնիկներ» (*ḥarf al-jazā'*) եզրույթը՝

ما هي التي تزداد تأكيدا لحروف الجزاء مثل أيما ومتى ما وكيفما  
«*mā*»-ն (այստեղ՝ «որ» իմաստով, Հ. Հ.) այն է, որն ավելանում է, և հաստատաբար դա խնդրառական մասնիկ է, ինչպես օրինակ՝ *'aynamā*

(որտեղ որ), *matā mā* (երբ որ), *keyfamā* (ինչպես որ): Այս մասնիկներից հետո գրվող բայը մշտապես անցյալ ժամանակում է: Դարձյալ, հարաբերական դերանունն այստեղ ոչ թե անուն խոսքի մաս է, այլ մասնիկ:

16) Հատոր 5, էջ 16: Հերթական մասնիկը՝ *qad*, հայերենում թարգմանվում է «իսկապես»

وأما قد فحرف يوجب الشيء كقولك قد كان كذا وكذا، والخبر أن تقول: كان كذا وكذا فأدخل " قد " توكيدا لتصديق ذلك

Ինչ վերաբերում է *qad* բառին, ապա դա մի մասնիկ է, որը հաստատում է որևէ բան, և ասում են՝ հաստատու եղել է այսպես և այսպես, և տեղեկություն է հաղորդվում, որ որևէ բան եղել է այսպես և այսպես, և *qad* բառը հաստատուն կերպով մտնում է խոսքի մեջ՝ ապացուցելու դա: Եթե նախկին օրինակներում նշվում էր, թե հարձերը կոնկրետ ինչ գործառույթ էին իրականացնում, և ըստ այդմ այդ հարձերին տրվում էին անուններ, ապա այստեղ *qad*-ն ուղղակի ներկայացված է որպես մասնիկ: Հարկ է նշել, որ դա միայն «հաստատող» *qad* չէ. եթե այն դրվում է ոչ թե անցյալ ժամանակի բայի հետ, այլ ներկայի, ապա ցույց է տալիս, որ վստահ չեն՝ տեղի կունենա՞ն՝ այսինչ գործողությունը, թե՞ ոչ:

Հետագա օրինակների գերակշիռ մեծամասնությունը ներկայացված է ութերորդ հատորում, և այստեղ լրացուցիչ բացատրության կարիք կարծես չկա.

17) Հատոր 8, էջ 218

ثم: حرف من حروف النسق لا تشرك ما قبلها بما بعدها

*ṭumma* (թարգմանաբար՝ հետո, ապա)՝ շաղկապ, որը չի համագործակցում դրանից առաջ, այլ դրանից հետո [գտնվող բառի հետ, < <.]:

18) Հատոր 8, էջ 321: Այստեղ տրվում է «lam» ժխտական մասնիկի բացատրությունը, որը ցույց է տալիս անցյալ ժամանակ, սակայն դրվում է ներկա ժամանակի բայի հետ, վերջինս էլ հայտնվում է հատյալ դիրքում՝

لم، خفيفة: من حروف الجحد

*lam xafifa* (թարգմանաբար՝ թեթև lam, < <.)' ժխտական մասնիկներից մեկը:

Հեղինակը նշել է «թեթև lam», քանի որ այդ մասնիկի վերջին հարձը «թեթև» է, չունի šadda: Վերը նշվել էր, որ երբ առկա է tašdid երևույթը, ապա դա

«ծանրացնում» է հարֆը (*taḡīl*): Այստեղ «ծանր lam» արտահայտությունը կվերաբերեր lamma մասնիկին (թարգմանաբար՝ երբ որ):

19) Հատոր 8, էջ 329

وأما (بلى) فجواب استفهام (فيه حرف نفي)، كقولك: ألم تفعل كذا، فتقول: بلى  
Ինչ վերաբերում է *balā* (թարգմանաբար՝ այո) արտահայտությանը, ապա դա [դրական, Հ. Հ.] պատասխանն է հարցին (որում ժխտման մասնիկ կա),  
ինչպես օրինակ՝ արդյոք չե՞ս արել այսինչ բանը, պատասխանում ես՝ *balā*:

Հարկ է նշել, որ այս պարագայում և վերևի օրինակում գրված «ժխտական մասնիկ» եզրույթները հնչում են տարբեր կերպ՝ համապատասխանաբար որպես *ḥarf jaḥm* և *ḥarf nafī*: Դրանցից մեկն օգտագործվում է հիմնականում բայերի հետ, մյուսը նշանակում է բացասական «ոչ» պատասխան:

20) Հատոր 8, էջ 332:

لو: حرف أمنية

*law* (թարգմանաբար՝ եթե, Հ. Հ.)՝ պայմանի մասնիկ:

21) Հատոր 8, էջ 333:

لا: حرف ينفي به ويجحد

*lā* (թարգմանաբար՝ ոչ, կամ «չ» ժխտական նախածանց, Հ. Հ.)՝ մասնիկ, որը ժխտում է: Հեղինակն այստեղ գրել է միանգամից երկու արտահայտություն՝ *ḥarf jaḥm* և *ḥarf nafī*, ցույց տալով, որ այն և՛ ժխտական մասնիկ է, և՛ ժխտում արտահայտող բառ:

22) Հատոր 8, էջ 355:

إلى: حرف من حروف الصفات

*ʾilā* (թարգմանաբար՝ դեպի, Հ. Հ.)՝ բնութագրող հարֆերից մեկը: Նույն էջում նման կերպ է անվանել նաև հաջորդ հարֆը՝ *fī*-ն (թարգմանաբար՝ մեջ, ներսում)

23) Հատոր 8, էջ 433:

ما: حرف يكون جحدا كقوله تعالى: ما فعلوه إلا قليل منهم

*mā* (չ- նախածանց, Հ. Հ.)՝ մասնիկը կարող է լինել ժխտական, եթե *wasṭan* այսպես. նրանք չարեցին դա՝ բացի մի քանիսից:

24) Հատոր 8, էջ 435:

أم: حرف استفهام على أوله، فيصير في المعنى كأنه استفهام بعد استفهام، وتفسيرها *am* (թարգմանաբար՝ թե՛, Հ. Հ.)՝ հարցական մասնիկ, և իր իմաստը կարծես հարցականի մեջ հարցական լինի:

25) Հատոր 8, էջ 439:

أو: حرف عطف يعطف به ما بعده على ما قبله

*aw* (թարգմանաբար՝ կամ, Հ. Հ.)՝ շաղկապ, որը կապում է իրեն նախորդողն իրեն հաջորդողին (ութերորդ հատոր, էջ 439):

Այսպիսով, հերթական անգամ տրվում է «շաղկապի» ձևակերպումը, մի տեղ՝ որպես *ħarf nasaq* (շարային մասնիկ), մյուս տեղ՝ որպես *ħarf ‘atf* (կապող մասնիկ):

Ամփոփելով ալ-Խալիլ իբն Ահմադի աշխատությունում «հարֆ» եզրույթի գործածության օրինակները, կարելի է եզրակացնել, որ հեղինակն այն կիրառել էր ոչ միայն որպես կաղապար ստեղծող միավոր, այլև որպես բառ՝ նախադասության հատույթ, ինչպես նաև՝ ինքնուրույն խոսքի մաս՝ կազմված ոչ ավանդական եռանդամ հիմքից, որը շարահյուսության տեսանկյունից կարող է ազդեցություն ունենալ իրենից հետո գրվող անվան կամ բայի վրա: Հետևաբար, հարֆը բառի ներսում շարունակում է կատարել ձևույթ կազմելու իր դերը, երբեմն նույնիսկ՝ հարֆը կարող է համապատասխանել ձևույթին, երբ վերջինս կազմված է լինում միայն մեկ հարֆից: Ինչ վերաբերում է խոսքի մասերին, ապա դրանցում կան միահարֆ ձևույթ-բառեր, ինչպես նաև այնպիսիք, որոնք կազմված են մի քանի հարֆերից: Քանի որ դրանք իրենց քերականական կառուցվածքով նման չէին անուններին և բայերին, ուստի առանձնացվեցին որպես խոսքի այլ մաս՝ նախադասության մեջ առանձին հատույթ լինելու հետևանքով:

### 2.3.2. Սիբավեյիի

Աշխատանքի առաջին գլխում խոսվել էր ալ-Խալիլ իբն Ահմադի աշակերտ Սիբավեյիի մասին, ով հեղինակել էր արաբերենի քերականության առաջին գիրքը՝ «*al-Kitāb*»: Այն մեծ կարևորություն է ներկայացնում նաև հարֆի՝ որպես ձևաբանական մասնիկի և խոսքի մասի մեկնաբանության տեսանկյունից:

Արաբերենի ձևաբանության առանձնահատկությունները քննելիս ներկայացվել են անունների (ինքնառական, հարակցական, խնդրառական) և բայերի (ինքնառական, խնդրառական, հատյալ) դիրքերը: Սիբավեյիի աշխատության առաջին հատորում հանդիպում է առանձին գլուխ, որը վերաբերում է դրան<sup>42</sup>:

لكلّ ضرب من اللفظ في الحرف وذلك الحرف حرف الإعراب. فالرفع والجر والنصب والجزم  
لحروف الإعراب. وحروف الإعراب للأسماء المتمكّنة، وللأفعال المضارعة لأسماء الفاعلين التي في  
أوائلها الزوائد الأربع: الهمزة، والتاء، والياء، والنون. وذلك قولك: أفعلُ أنا، وتَفعل أنتَ أو هي، ويَفعل  
هو، ونَفعل نحن

*Յուրաքանչյուրն ունի հարֆի յուրօրինակ հնչողության, և այդ հարֆը համարվում է Է harf al-i‘rāb: harf al-i‘rāb են համարվում raf‘, jarr, nasb և jazm [դիրքերը <. <.]: harf al-i‘rāb-ն անունների դեպքում հաստատուն է, իսկ ներկա ժամանակով [կամ անկատար կերպով] դրված բայերի հետ դրանք կախված են գործողություն կատարողից, և ավելացվում են սկզբում չորս հարֆերից (այսպես՝ ձևույթներից, <. <.) որևէ մեկը՝ hamza, tā‘, yā‘ և nūn, և ասում են այսպես՝ ‘af‘ alu (թարգմանաբար՝ ես անում եմ), taf‘ alu (թարգմանաբար՝ դու անում ես/ նա (իգ.) անում է), yaf‘ alu (թարգմանաբար՝ նա (ար.) անում է), naf‘ alu (թարգմանաբար՝ մենք անում ենք):*

Այսինքն, վերը նշված օրինակներից բացի մյուս բոլոր բայաձևերը (եզակի թիվ երկրորդ դեմք իգական, երկակի թիվ երկրորդ և երրորդ դեմքեր, հոգնակի թիվ երկրորդ և երրորդ դեմքեր, մանրամասն՝ սույն աշխատանքի աղյուսակ 12-ում, էջ 69) այս նույն բայերն են՝ այլ վերջավորություններով, որոնք էլ իրենց harf al-i‘rāb-ն են: Փաստորեն, հարֆ է կոչվում նաև բառի հենց վերջին հատույթը:

<sup>42</sup> hada bāb majārī awāxir al-kalam min al-‘arabiyya (هذا باب مجاري أواخر الكلم من العربية)՝ սա արաբերենում բառավերջի հոսքի մասին գլուխն է:

Հետագա հատորներում կարելի է հանդիպել արմատական ու հավելյալ հարՖերի մասին բացատրության: Վերջիններս հայտնի են *ḥarf zā'ida* (հավելյալ հարՖ) անունով: 'alif հարՖով ավարտվող բառերը (*mağzā, malhā, majrā, marmā*) երկակի թիվ կազմելիս ստանում են հավելյալ հարՖեր: Դա նշվում է համապատասխան գլխում<sup>43</sup>

وَأَمَّا مَا كَانَتْ أَلْفُهُ زَائِدَةً فَنَحْوُ: حَبْلِي وَمَعزَى وَدَفْلَى وَذَفْرَى لَا تَكُونُ تَثْنِيته إِلَّا بِالْيَاءِ لِأَنَّكَ لَوْ  
جِئْتَ بِالْفِعْلِ مِنْ هَذِهِ الْأَسْمَاءِ بِالزِّيَادَةِ لَمْ يَكُنْ إِلَّا مِنَ الْيَاءِ كَسَلْقِيئِهِ وَذَلِكَ قَوْلُكَ: حَبْلِيَانِ وَمَعزِيَانِ  
وَدَفْلِيَانِ وَذَفْرِيَانِ.

*Ինչ վերաբերում է նրան, որ հավելյալ 'alif-ը լինի բառում, օրինակ՝ ḥablā, ma' zā, daflā, ḍaflā, ապա դրա երկակին կարող է լինել միայն yā' հարՖի հավելումով, քանի որ եթե բայը բերվեր այս կարգի անուններից, ապա կասեինք [այստեղ՝ երկակի թիվը կկազմվեր այսպես, < .<.]՝ ḥabliyāni, ma' ziyāni, dafliyāni, ḍafrīyāni (6-րդ հատոր): Այսպիսի օրինակները՝ հավելյալ հարՖերը հիմնականներից զանազանելու համար, հանդիպում են նաև հաջորդ հատորներում: Հեղինակը բացատրում է երկու 'alif-ների՝ իրար կողք կողքի հայտնվելու երկակի թվի տարբերակը: Եթե *mağzā* բառին պետք է ավելանար *āni* վերջավորությունը (*ma.ğø.za.aø+aø.ni*), ապա արդյունքում երկու 'alif-ներից մեկը պետք է փոխարինվեր մեկ այլ թույլ հարՖով (այստեղ՝ *yā'*), և արդյունքում *ma.ğø.za.aø.aø. ni* բառի փոխարեն կստացվեր *ma.ğø.za.ya.aø.ni*: Նույնը կատարվում է հոգնակի թվի կազմության ժամանակ՝ *ma.ğø.za.aø+aø.tu<sup>n</sup> = ma.ğø.za.ya.aø.tu<sup>n</sup>*:*

Բացի հնչյութաբանական նվազագույն մասնիկ իմաստն արտահայտելուց՝ հարՖ եզրույթը նաև խոսքի մաս է: Սիբավեյհին առաջին իսկ հատորում՝ արաբական լեզվաբանության մասին գլխում, տալիս է այդ ձևակերպումը.

فالكلم: اسم وفعل وحرف جاء لمعنى ليس باسم ولا فعل

*Խոսքն իրենից ներկայացնում է անուն, բայ և հարՖեր. [վերջիններս, < .<.] արտահայտում են այնպիսի իմաստ, որով նման չեն ոչ բային, ոչ անուններին: Սիբավեյհին, այսպիսով, վերցնում է ամբողջը, և այն ամենը, ինչ չի համարում իմաստ արտահայտող անուն կամ բայ, խմբավորում է հարՖերի մեջ: Դրանք կարելի է դիտարկել որպես ձև չունեցող մասնիկներ:*

<sup>43</sup> *hadā bāb taṭniya mā kāna manqūsan wa kāna 'iddat ḥurūfihi 'arba'at aḥruf* ( هذا باب تثنية ما كان منقوصاً وكان (عدة حروفه أربعة أحرف



Անուն խոսքի մասին վերաբերող հատվածում<sup>44</sup> ձևաբանությունից բացի անցում է կատարվում նաև շարահյուսությանը. կարելի է հանդիպել լծորդական կապակցության ('iḍāfa)<sup>45</sup> բացատրությունը՝

وإن كان الفعل لا يصل إليه إلا بحرف الإضافة فكأنك قلت: مررت زيداً.

Եթե բային չի միացել որևէ հարֆ (այսինքն՝ կապ՝ որպես խոսքի մաս, < . <.)՝ բացի iḍāfa կազմող կապից, ապա կիրառում ենք խնդրառական դիրք, ինչպես օրինակ՝ տեսա Ջեյդհին: Ձևակերպումը հնչում է պարզ ու հստակ, որով ցույց է տրվում, որ կան կապեր (հարֆեր), որոնցից հետո գրվող/արտասանվող հաջորդ բառը դրված է հարակցական դիրքում, իսկ եթե այդպիսի կապերի կիրառություն չկա, ապա անցում է կատարվում հաջորդ՝ խնդրառական դիրքին՝ ձևափոխելով անվան վերջին հարֆը:

ولا يجوز أن تضم فعلاً لا يصل إلا بحرف جر لأن حرف الجر لا يضم وسترى بيان ذلك

Բայը կարող է ներառել ցանկացած i' rāb, բացի ḥarf al-jarr-ից, քանի որ ḥarf al-jarr-ը չի ազդում բայի վրա: Այստեղ կարող է շփոթմունք առաջացնել ḥarf al-jarr եզրույթը: Բանն այն է, որ մի կողմից՝ այդպես է կոչվում բառի վերջին հարֆը, որը կրում է i ձայնավոր (kasra), մյուս կողմից՝ այդ անունն է կրում հարակցական մասնիկը՝ կապը կամ նախդիրը, եթե դրանից հետո անուն խոսքի մասը դրված է հարակցական դիրքով: Ուրեմն, կարելի է հասկանալ, որ բայը կարող է դրվել ինքնառական, խնդրառական կամ հատյալ դիրքով, բայց ոչ՝ հարակցական:

Առաջին անգամ հանդիպում են «հրամայական հարֆ» (ḥarf al-'amr) և «արգելքի հարֆ» (ḥarf al-nahī) եզրույթները<sup>46</sup>: Բացատրություն է տրվում mā և lā մասնիկների, որոնցից առաջինը ժխտում է միայն անկատար բայը՝ որևէ կերպ չազդելով դրա վրա,

<sup>44</sup> haḍa bāb yaḥmil fihi al-'ism 'ala-'ism buniya 'aleyhi al-fi' l marratan ( هذا باب يحمل فيه الاسم على اسم بني (عليه الفعل مرة) )  
սա այն գլուխն է, որում անուն խոսքի մասը կրում է մեկ այլ անուն խոսքի մաս, որ անմիջականորեն կազմված է բայերից:

<sup>45</sup> Այս հասկացույթը կիրառվում է նաև մի շարք այլ լեզուներում, այդ թվում՝ պարսկերենում, թուրքերենում և այլն (ezafet): Սա գալիս է հերթական անգամ ապացուցելու հարֆի՝ որպես ձևույթի, յուրահատուկ լինելը, սակայն տվյալ լեզուներում, ինչպես և արաբերենում, զերծ ենք մնում 'iḍāfa հասկացույթի լուսաբանումից, քանի որ դրանով արդեն դուրս ենք գալիս ձևաբանության բաժնից ու մտնում շարահյուսության ոլորտ, ինչը քննվող նյութի հետաքրքրության մեջ չի մտնում:

<sup>46</sup> haḍa bāb ḥurūf ujriyat majrā ḥurūf al-istifhām wa ḥurūf al-'amr wa al-nahī ( هذا باب حروف أجزيت مجرى حروف (الاستفهام وحروف الأمر والنهي) )  
սա այն հարֆերի գլուխն է, որոնք խոսքի հոսքում լինում են հարցական, հրամայական և արգելքի մասնիկներ:

իսկ մյուսը ժխտում է ամբողջ նախադասությունը, որից հետո ենթական հայտնվում է խնդրառական դիրքում:

Երրորդ հատորում կարելի է տեսնել «կոչական հարՖ» եզրույթը՝

إلا أن هذا يجري على حرف النداء وستراه إن شاء الله عزّ وجلّ في باب النداء مبيّنًا

*Քացի այդ, այսպեղ հանդես է գալիս ḥarf al-nidā' (կոչական, Հ. Հ.), և դուք, Աստուծո կամոք, կտեսնեք նրա բացատրությունն իր ամբողջ մանրամասնությամբ դրա գլխում՝ ḥarf al-nidā'-ի գլուխ: Այսպիսով, արաբերենում հատուկ կոչական դիմելաձևերը (ā, yā, iyyā), որոնք հայերեն կարող են թարգմանվել որպես դերանուն (ո՛վ) կամ ձայնարկություն (ո՛), արաբերենում առանձնանում են հարՖ խոսքի մասի սահմաններում:*

Հետաքրքրություն է ներկայացնում «հինգ հարՖերի գլուխը»: Այստեղ նշվում են հինգ բառեր, որոնք դրվում են նախադասության սկզբում ու ազդում են ենթակայի վրա. վերջինս գրվում է խնդրառական դիրքով: Հեղինակը նշում է՝

وهي أنّ ولكنّ وليت ولعلّ وكأَنَّ

*Եվ դրանք են՝ anna, lakinna, leyta, la'illa, ka'anna (թարգմանաբար՝ որ, բայց, երանի, միգուցե, կարծես, Հ. Հ.): Հարկ է ավելացնել, որ արաբական երկրներում, ինչպես նաև արևելյան լեզվաբանական դպրոցներում ընդունված է այս խմբին ավելացնել ևս մեկը՝ inna (իրոք): Ավելին, այս խումբը հայտնի է «inna wa axawātuhā» անունով (բառացի՝ իննան և իր քույրերը). Սիբավեյհին այս բառը չէր ներառել:*

Հաճախ են դեպքերը, երբ այն կիրառվում է ḥarf al-istifhām, այսինքն՝ «հարցական դերանուն» եզրույթը: Ի թիվս այլ դերանունների, հարցական դերանունը նույնպես անուն խոսքի մաս չէ, այլ հարՖերից մեկը: Առանձին գլուխ է նվիրված բացառման մասնիկներին<sup>47</sup>

فحرفُ الاستثناءِ إلا

*Քացառման հարՖ է «illā»-ն (թարգմանաբար՝ բացի, Հ. Հ.): Դրանց, ինչպես նաև բացառման այլ մասնիկներից (ḡeyr, siwā, sawā', xalā, 'adā, ḥāšā) հետո գրվող բացառված անունը դրվում է խնդրառական դիրքով:*

فحروف الجرّ لم تغيّرْها عن حال الجزاء كما لم تغيّرْها عن حال الاستفهام.

<sup>47</sup> haḍa bāb al-istiḥnā' (هذا باب الاستثناء) 'սա քացառման գլուխն է:

Հարակցական մասնիկները չեն փոփոխում անջափ վիճակը, ինչպես նաև չեն փոփոխում հարցական վիճակը:

Առաջին իսկ հատորում, որտեղ խոսվում է Հիջազի բնակիչների լեզվի առանձնահատկություններից մեկի մասին<sup>48</sup>, կարելի է հանդիպել հարՖ եզրույթը.

وذلك الحرف " ما ". تقول: ما عبد الله أخاك وما زيد منطلقاً. وأما بنو تميم فيجرونها مجرى أما وهل

Եվ սա *mā* հարՖն է: Ասում են՝ *mā* Աբդուլլահ քո եղբորը, կամ՝ *mā* Ջեյդ մեկնողը: Իսկ ինչ վերաբերում է բանու թամիմ [ցեղին, <. <.), ապա նրանք կիրառում են *'ammā* կամ *hal* (թարգմանաբար՝ ինչ վերաբերում է... արդյո՞ք, <. <.): Այսինքն, այստեղ *mā* բառը թարգմանվում է ոչ իր սովորական իմաստով, այն է՝ «որ», և հանդես է գալիս որպես հարաբերական դերանուն: Փաստորեն, սա նույնպես հարՖ է:

ՀարՖերի՝ որպես խոսքի մասի, մեջ նույնպես կա տարբերություն. Դրանց մի մասը նախդիր կապ է (դարձյալ *ḥarf*), իսկ մյուս մասը՝ պարագա (*ḍarf*): Դրա մասին կարելի է կարդալ համապատասխան գլխում<sup>49</sup>

وإن جعلته اسماً للكلمة لم تصرفه وإن جعلته للحرف صرفته

Եվ եթե խոսքի մեջ հաջորդում է բառը, դրա դիրքը չի փոփոխվում, իսկ եթե հանդիպում է հարՖը, ապա փոփոխվում է: Այստեղ «հարՖ» եզրույթը գործածվում է որպես խոսքի մաս՝ բառի լայն իմաստով:

Աշխատությունը հետազոտելիս պարզ է դառնում, որ հարՖեր են կոչվում բառի այն հատվածները, որոնք ունեն այս կամ այն ձայնավորը: Ինքնին պարզ է դառնում, որ այստեղ նույնպես խոսքը գնում է ոչ միայն զուտ բաղաձայնի, այլև նրա հետ միասին հանդես եկող ձայնավորի մասին՝ որպես մեկ ամբողջության: Կարելի է նկատել, որ Սիբավեյիին առավել մանրամասնորեն ու հետևողական է բացատրել քերականական կանոնները, քան իր ուսուցիչ ալ-Խալիլը. ցուցադրված են օրինակներ, կան ամբողջական բացատրություններ:

<sup>48</sup> *hadda bāb mā 'ujriya majran leysa fi ba 'ḍ al-mawāḍi' bi-luḡa 'ahl al-ḥijāz tumma yaṣir 'ilā 'aṣlihi* ( هذا باب ما (أجرى مجرى ليس في بعض المواضع بلغة أهل الحجاز ثم يصير إلى أصله) *սա գլուխ է mā մասնիկի մասին, որը հանդիպում է միայն Հիջազի բնակիչների լեզվում, և դրանք հարում են իրենց արմատին:*

<sup>49</sup> *bāb tasmiya al-ḥurūf balṭurūf wa ḡeyruha min al-'asmā'* (باب تسمية الحروف بالظروف وغيرها من الأسماء)՝ *zarf անվանվող հարՖերի և այլ անունների գլուխ*

### 2.3.3. Ալ-Մուբառադ

Արաբական հնչույթաբանության մասին գլխում խոսվել էր Բասրայի քերականական դպրոցի վերջին ներկայացուցիչներից ալ-Մուբառադի մասին, ում հեղինակած աշխատություններից առավել հայտնի էր «*al-Kāmil fī al-Luġa wa al-'Adab*» ուսումնասիրությունը: Այն կարևորություն է ներկայացնում նաև հարֆի՝ որպես ձևաբանական մասնիկի և խոսքի մասի մեկնաբանության տեսանկյունից:

Աշխատության 18-րդ էջում հանդիպում է *ḥarf al-jarr*-ի օրինակ՝

لا يعتدى إلا بحرف جر، وذلك أن فعل الفاعل في نفسه، وليس فيه دليل على المفعول نفسه، وليس هذا بمتلة ما يتعدى إلى مفعولين، فيتعدى إلى أحدهما بحرف جر

...սա վերաբերում է միայն *ḥarf al-jarr*-ին, և դա ենթակայական դերբայով է բացատրվում, և ոչ թե խնդրառական կառույցներին, ոչ էլ երկու խնդրառությունների՝ միմյանց կողք կողքի գտնվելուն, այլ նրանցից մեկն ուղղակի *ḥarf al-jarr* է... Այստեղ *ḥarf al-jarr* է կոչվում ոչ թե անուն խոսքի մասը հարադրական դիրքում դնող մասնիկը, այլ անվան վերջին հարֆը: Արաբերենի ձևաբանությանը վերաբերող հատվածում պարզաբանվել էր *ḥarf al-i'rāb* հասկացությունը, որը հենց վերջին հարֆն էր՝ դրված չորս հնարավոր դիրքերից որևէ մեկով:

Ինչպես նշվել է, արմատի կառուցվածքն արաբերենում հստակ է. արմատների մեծամասնությունը բաղկացած է հնչույթաբանական երեք միավորներից՝ հարֆերից: Արմատների դասակարգումն առաջին կարևոր քայլերից է, որ արել էր դեռ ալ-Խալիլը: Դրանց կարող են ավելանալ մեկից չորս երկրորդային հարֆեր և կազմել բառը: Բառն արտաքին տեսքով երբեմն կարող է բաղկացած լինել երկու հարֆերից. դա այն դեպքն է, երբ երկրորդ ու երրորդ հարֆերը կրկնվում են: Երկրորդ հարֆն ունենում է սուբուն՝ զրոյական ձայնավոր, և երկրորդ ու երրորդ հարֆերը միանում են իրար՝ գրվում է դրանցից մեկը, որի վրան՝ *šadda* նշանը: Ալ-Խալիլի աշխատությունում հանդիպել է այս երևույթը, սակայն հեղինակն անվանում է այն «երկհարֆ» (*ṭunāʾ*): Դրան հակառակ՝ ալ-Մուբառադը տալիս է արմատի ավելի հստակ սահմանում, որը կհամապատասխաներ եռահարֆությանը: Դա հանդիպում է 29-րդ էջում՝

أمةٍ ليس شيء من الأسماء على حرفين إلا وقد سقط منه حرف يستدل عليه بجمعه، أو بتثنيته،  
لأن أقل الأصول ثلاثة أحرف

...«'umma»-ն այն անուններից չէ, որ կազմված են երկու հարֆից. դրա [երեք <. <.]  
հարֆերից մեկն ընկել է, որը ցույց կտրվի, եթե կազմվի հոգնակի թիվ կամ իգական  
սեռ, քանի որ բառի արմատն ամենաքիչը բաղկացած է երեք հարֆից...

Հարֆի՝ որպես արմատի բաղկացուցիչ մասի, օրինակներ են հանդիպել նաև 50-  
րդ, 63-րդ, 64-րդ, 179-րդ, 393-րդ և այլ էջերում:

Մի քանի անգամ, այդ թվում՝ 142 էջում, հեղինակը նշում է *ḥurūf al-muḍāri'*  
(ներկա ժամանակի հարֆեր) արտահայտությունը: Դրանք այն նախածանցներն են,  
որոնք դրվում են բայից առաջ և ցույց են տալիս բայի ներկա ժամանակ կամ  
անկատար կերպ՝

...حروف المضارع وهي الهمزة، والنون، والتاء، والياء ...

... *ḥurūf al-muḍāri'* են՝ *hamza, nūn, tā', yā'*<sup>50</sup>...

Առաջին դեմքի եզակի թիվը կազմվում է բառասկզբին ավելացնելով 'alif, քանի  
որ hamza-ն բառասկզբում մշտապես գրվում է այդ հարֆի վրա, անկախ նրանից՝ թե  
ինչ ծայնավոր է կրում: Եթե բառասկզբում հնչում է a կամ u ծայնավոր հնչյունը, ապա  
hamza-ն գրվում է 'alif-ի վրա, իսկ դրա վերևում՝ այդ ծայնավորները, իսկ եթե հնչում է i  
ծայնավորը, ապա hamza-ն գրվում է 'alif-ի ներքևում, և դրանից ներքև էլ գրվում է  
ծայնավորը: Ստացվում է, որ ալ-Մուբառռադը դա այլևս 'alif չհամարեց:

Ինչպես և իր նախորդները, ալ-Մուբառռադը ևս դերանունները չի համարում  
անուն խոսքի մաս: Հանդիպում է *ḥarf al-'istifhām* եզրույթը. այդպես էին կոչվում  
հարցական դերանունները, բառացի՝ հարցական մասնիկները: Հեղինակը բացատրում  
է «արդյո՞ք» հարցական դերանվան կիրառությունը՝

...حروف الاستفهام إذا كانت أسماء امتنعت مما قبلها كما يمتنع ما بعد الألف...

...Հարցական մասնիկները, եթե դրանցից առաջ դրված անունը ժխտական է,  
ինչպես նաև ժխտվում են 'alif-ից հետո ...

<sup>50</sup> Համապատասխանաբար՝ առաջին դեմքի եզակի, առաջին դեմքի հոգնակի, իսկ մյուս երկուսը՝  
երկրորդ և երրորդ դեմքերի համար՝ կախված վերջավորություններից ու սեռից

Մեկ այլ անգամ՝ 177 էջում, որտեղ նա վերլուծում էր չորս բարեպաշտ խալիֆներից մեկի՝ Ալի իբն Աբի Տալիբի պատասխանն Ասորիքի արաբ կառավարիչ Մուավիային<sup>51</sup>, նշում է՝

...حروف الاستفهام للأفعال، فلو كان الفعل ظاهراً لكان على غير إضمار...

...Հարցական դերանունները բայերի համար են նախատեսված, և եթե բայը երևում է, ապա դերանունը կարող է նաև ենթադրություն նշանակել...

Երրորդ անգամ այդ բառակապակցությունը հանդիպում է 558-րդ էջում՝

...مهم حرف استفهام، معناه: ما الخبر وما الأمر...

...mahyam՝ հարցական դերանուն է, որը նշանակում է ի՞նչ տեղեկություն կա, ինչո՞վ ես զբաղված...

Հետազոտելով աշխատությունը՝ կարելի է հանդիպել «հարֆ» եզրույթի այլ կիրառություններ նույնպես, որտեղ այս կամ այն խոսքի մասն է բնութագրվում: Սակայն, եթե ḥarf al-ʾistifhām եզրույթը գործածվում է երեք անգամ, ապա բոլոր այլ «հարֆ» եզրույթները հիշատակում են միայն մեկ անգամ: 147-րդ էջում հանդիպում է հարֆի կիրառության դեպք՝ որպես խոսքի տարբեր մասեր՝

...و حروف للفعل نحو: الاستفهام، والأمر، والنهي...

...Բայերին [ծառայող <. <.] հարֆերը կարող են լինել հարցական, հրամայական, ժխտական...

Աշխատության մեջ ընդամենը մեկ անգամ՝ 152-րդ էջում, հանդիպում է նաև ḥarf al-ʾaṭf (շաղկապ) հասկացությունը:

قال أبو الحسن: وفيه عيب آخر أن "أما" ليست من العطف في شيء، وقد أجرى "خلة" بعدها مجراها بعد حروف العطف حملاً على المعنى

...Աբու ալ-Հասանն ասել է, որ ուշադիր պետք է լինել 'amma (թարգմանաբար՝ ինչ վերաբերում է, <. <.) շակապին, որն ամենևին էլ չի կապում, այլ անջատում է բառերի իմաստը մյուսից՝ նմանվելով «բացի» շաղկապին ...

<sup>51</sup> Մուավիան հետագայում դարձավ խալիֆ (661-680)՝ փոխարինելով Ալիին: Նա իսլամական համայնքում կարողացավ հասնել ժառանգական իշխանության և հիմնեց Օմայյանների հարստությունը (661-750), որի կառավարման ժամանակ պետությունը ձգվում էր Ատլանտյան օվկիանոսից մինչև արևելյան Հնդկաստան:

Վերոնշյալ օրինակներն Ալ-Մուբառռադը բերում էր տարբեր պատմվածքներից կամ նախախլամական ու վաղիսլամական բանաստեղծների ստեղծագործությունները վերլուծելով: Դրա նպատակը ոչ միայն բառերն իմաստաբանորեն և քերականորեն վերծանելն էր, այլև երբեմն տաղաչափական վերլուծություններ կատարելը: Իբն ալ-Հաջջաջի բանաստեղծություններից մեկում հանդիպում է նման տողերի՝

وشاهدنا الجلل **والياسمو ن** والمسمعات بقضاياها  
(անջատում)

Թավատառով նշված բառը (al-yāsīmūna) իրականում կիսվել է և վերջին հարֆը (na) միացել է հաջորդ կիսատողին: Ինչպես հայտնի է, բանաստեղծություններն արաբերենում բաժանված են բեյթերի՝ տողեր, որոնք բաղկացած են երկու կիսատողից: Դրանք պետք է հարֆերի քանակով համապատասխանեն միմյանց: Այսպիսով, կարծես թե բառը «չի տեղավորվել» նախորդ կիսատողում, և անցել հաջորդ կիսատող, ինչը և բացատրում է ալ-Մուբառռադը 276-րդ էջում.

...الإعراب في حرف النسب وانكسرت النون كما ينكسر كل ما لحقه النسب...

*...քերականական բացատրություն չէ, երբ տեղի է ունենում ճկում, երբ հարֆերից մեկը դուրս է թռչում, ինչպես և ցանկացած այլ մեկը կընկներ, եթե հանդիպեր այս երևույթը...*

Ալ-Մուբառռադի աշխատության մեջ՝ 301-րդ էջում, որտեղ ներկայացված էր բանավեճ, գրված էր.

...فسكت الأخطل فما أجابه بحرف...

*...իսկ ալ-Ախտալը լռեց՝ չպատասխանեց մեկ բառ իսկ...*

Մեկ այլ տեղ, որտեղ նկարագրվում էր Ղուրանից արված մեջբերում՝ աուս<sup>52</sup> ցեղին վերաբերող, ալ-Մուբառռադը նշել էր՝

...وهذا الحرف في القرآن يقرأ على ضروب...

*...և այդ բառը նույնիսկ կարդացվում (այստեղ՝ հասկացվում <. <.) է դաժանորեն...*

Կարելի է տեսնել, որ ալ-Մուբառռադը ևս հստակ ձևակերպում չի տվել «հարֆ» եզրույթի հետ կապված: Փոխարենը հանդիպում են եզրույթի կիրառությունը, ինչը թույլ

<sup>52</sup> Մուհամմադի ծննդավայրում՝ Մեքքայում, իսլամը չտարածվելու պատճառով, նա մեկնում է հյուսիսում ընկած Յասրիբ (Մադինա) քաղաք, որտեղ իսլամ են ընդունում և իր գերակայությունը հարգում արաբական երկու ցեղեր՝ աուս (aws) և խազրաջ (xazraj):

Է տալիս կատարելու համապատասխան եզրահանգումներ՝ այն համեմատելով արդի  
լեզվաբանության եզրույթների հետ: Փաստն այն էր, որ նա գործածել էր եզրույթը  
որպես բառ՝ նախադասության նվազագույն միավոր, ինչպես նաև որպես խոսքի մաս:



## **2.4. ՀարՖ հասկացույթի բովանդակությունը սեմական ձևաբանության հասկացակազմի համատեքստում. համեմատական վերլուծություն**

Արաբերենն իր յուրահատուկ հնչյունական կազմով և ձևաբանական կառուցվածքով դասվում է սեմական լեզուների շարքը: Դրանք, կազմելով ինքնուրույն խումբ, իրենց հերթին մտնում են աֆրասիական կամ սեմաքամյան լեզվաընտանիքի կազմ: Վերջինս բաղկացած է ևս 5 խմբերից՝ բերբերա-լիբիական (կամ լիբիա-գուանչական՝ Կանարյան կղզիներում բնակված գուանչի ժողովրդի անունից), քուշական (Սուդանի տարածքում գոյություն ունեցած Քուշ պետության անունից), օմոյան (Եթովպիայում գտնվող Օմո գետի անունից), եգիպտական (17-րդ դարից՝ մեռած), չադյան [Дьяконов 1965: 2]:

Հարկ է նշել, որ սեմական լեզուներին յուրահատուկ է այն փաստը, որ արմատների մեծամասնությունը բաղկացած է արմատային երեք բաղաձայններից, հազվադեպ՝ 4 կամ 5: Ձայնավոր հնչյունները ձևաբանության մեջ ծառայողական դեր են կատարում և արմատի կազմ չեն մտնում [Гранде 1998: 17]: Գրական արաբերենը՝ որպես սեմական լեզու, դրսևորում է անվանման և ստորոգման բազմաթիվ առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունները գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք մեծապես պայմանավորված են լեզվի նկարագրման ձևավորված ավանդույթով: Գրական արաբերենը դարերի ընթացքում քերականորեն չի փոփոխվել. զարգացել և հարստացել է միայն բառապաշարը: Միևնույն ժամանակ, ինչ վերաբերում է բանավոր, խոսակցական լեզվին, արաբական երկրներում ձևավորվել են տասնյակ բարբառներ [Гранде 1998: 10]: Ուստի կարելի է կատարել համեմատական հետազոտություն՝ արաբերենի և վերը նշված մեռած լեզուների միջև:

Սեմական լեզուներ եզրույթն առաջ է քաշվել Աստվածաշնչում տեղ գտած ժողովուրդների ցուցակից, որի համաձայն այդ լեզուներով խոսող ժողովուրդների մեծ մասը ծագում է Նոյի որդի Սեմից [Гранде 1998: 5]: Դրանք խորհրդային և ռուս արևելագետները դասակարգել են 3 ճյուղի՝ արևելյան, հյուսիսարևմտյան և հարավային, վերջինիս կազմ մտցնելով արաբերենը: Ամերիկյան լեզվաբանությունն

ընդունում է 2 ճյուղի գոյությունը՝ արևելյան և արևմտյան, վերջինում ճյուղավորվում են կենտրոնական (այդ թվում՝ հյուսիսարևմտյան լեզուներ և արաբերեն) և հարավային (այդ թվում՝ հարավարաբական կենդանի ու եթովպական լեզուներ): Պատմահամեմատական վերջին ուսումնասիրությունների ժամանակ հաշվի առնվեցին լեզուների մոտ կամ հեռու լինելը սեմական նախալեզվին<sup>53</sup>, դրանց հնչյունաբանական, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները (հավելված 2): Ժամանակային առումով ամենավերջին և առավել ընդունված դասակարգման հեղինակն է հունգարացի լեզվաբան Ռոբերտ Հեցրոնը (1938-1997): Այն հիմնված է լեզվախմբերի համար ընդհանուր նորամուծությունների վրա:

Աքքադերենը և էբլայերենն ամենահին սեմական լեզուներն են [Hetzron 1997: 69]: Երկուսի անուններն էլ ծագում են համանուն քաղաքներից: Աքքադերենը մեռած սեմական լեզու է, որը գոյատևել է Միջագետքի տարածքում շուրջ 3 հազարամյակ (մոտավորապես մ. թ. ա. 2800/2500–մ. թ. 1): Որպես գրավոր լեզու աքքադերենն օգտագործվել է նաև Եգիպտոսում, Սիրիայում, Պաղեստինում, Փոքր Ասիայում, Իրանում: Գրային համակարգը ժառանգվել է շումերերենից (մ. թ. ա. 3000–2000 թվականներ), որը գոյություն էր ունեցել նախքան աքքադերենի առաջացումը [Barthélemy 1998: 73]: Մոտ երեք հազար տարվա ընթացքում լեզուն ենթարկվել է փոփոխությունների, ի հայտ են եկել բարբառներ: Աքքադերենի պատմությունը բաժանվում է հինգ փուլի, որոնցից յուրաքանչյուրը գոյատևել է մոտ կես հազարամյակ՝ հին աքքադերեն, հին բաբելոներեն և հին ասորերեն, միջին բաբելոներեն և միջին ասորերեն, նոր բաբելոներեն և նոր ասորերեն, ուշ բաբելոներեն [Hetzron 1997: 69]: Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի սկզբներին երևան է գալիս աքքադական (ասորաբաբելոնական) գրականությունը, որը ևս ծագում էր շումերականից<sup>54</sup>: Գրեթե բոլոր արձանագրությունները չափածո են [Фролов 1991: 18]:

<sup>53</sup> Սեմական նախալեզվի տարածքի հետ կապված կոնսենսուս չի ձևավորվել. այն կարող է համարվել Արաբական թերակղզին, Նեղոսի դաշտավայրի հյուսիսը, Վերին Միջագետքը կամ Արևելյան Միջերկրականը: Նախալեզուն խոսակցական է եղել սկսած մ.թ.ա. 6-րդ հազարամյակից: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում ձևավորվել են աքքադերենը, էբլայերենը և հին քանաաներենը:

<sup>54</sup> Այդ ժամանակահատվածում սկսվում է հնագույն՝ Գիլգամեշի մասին էպոսի մշակումը: Այն ստեղծվել է աքքադերենով՝ շումերական ավանդազրույցների հիման վրա, 1,5 հազարամյակի ընթացքում՝ սկսած մ.թ.ա. 18–17-րդ դարերից: Առավել ամբողջական տարբերակը հայտնաբերվել է 19-րդ դարի կեսերին

Նախքան անցնելը սեմական լեզուների ձևաբանական կառուցվածքին՝ դիտարկենք սեմական նախալեզվի, աքքադերենի, հին եբրայերենի և արաբերենի հնչյունական համակարգը (տե՛ս հավելված 3): Կարելի է տեսնել, որ սեմական նախալեզվի բոլոր 29 հնչյուններն առկա են արաբերենում, դրանց մի մասը գոյություն չունի աքքադերենում, որոշները կրկնվում են և՛ աքքադերենում, և՛ հին եբրայերենում:

Անուն խոսքի մասը սեմական նախալեզվում նույնպես առանձնացվել է որպես գոյական և ածական (ձևաբանորեն չեն տարբերվել), թվական, դերանուն: Միայն գոյականն է ունեցել երկակի թիվ, մյուսներն ունեին միայն եզակի ու հոգնակի թվեր: Հոգնակին կազմվել է արական և իգական սեռերի վերջավորություններով կամ բեկյալ եղանակով: Աքքադերենում չկային կոկորդային կամ թույլ բաղաձայններ. սղված կոկորդային կամ թույլ հնչյունը սղվել է, արմատային բաղաձայնների թիվը՝ դարձել 2:

*Աղյուսակ 17.*

qa.ṭø.lu / qi.ṭø.lu / qu.ṭø.lu	ša.kø.nu (փոխանորդ) / mi.lø.ku (խորհուրդ) / mu.rø.ṣu (հիվանդություն)
qa.ṭi.lu / qa.ṭu.lu	na.ki.ru (թշնամի) / ša.mu.xu (բուսականություն)
qi.ṭa.lu / qa.ṭa.lu qi.ṭā.lu / qa.ṭā.lu	zi.ka.ru (տղամարդ) / ga.ra.bu (քու) li.šā.nu (լեզու) / qa.rā.bu (ճակատամարտ)
qu.ṭū.lu / qu.ṭā.lu	ru.kū.bu (կառք) / qu.rā.du (հզոր)
qi.ṭø.ṭa.lu / qa.ṭø.ṭā.lu / qu.ṭø.ṭu.lu	øi.kø.ka.ru (այգեգործ) / ka.šø.šā.pu (զուշակ) nu.kø.ku.su (կտրված)
qa.ṭa.lø.lu	pa.ra.kø.ku (սրահ)

*Աղյուսակ 18.*

øa.qø.ṭa.lu	øa.zø.ka.ru (լիալուսին)
ma.qø.ṭa.lu / mu.qø.ṭa.lu	ma.šø.ka.nu (վայր) / mu.šø.pa.lu (խորություն)
ta.qø.ṭi.lu / ta.qø.ṭa.lu	ta.kø.pi.ru (ապաշխարհում) / ta.mø. xa.ru (մարտ)
ša.qø.ṭu.lu	ša.iø.pu.tu (դժբախտություն)
qa.ṭø.lū.tu	ša.rø.rū.tu (թագավորություն)

Նիսնվեում՝ Աշուրբանիպալի գրադարանում կատարված պեղումների ժամանակ: Այն գրված է 12 վեցաայուն պնակիտների վրա՝ մանր սեպագրերով, ունի 3000 տող և թվագրված է մ.թ.ա. 7-րդ դարով:

qa.ṭø.lā.nu / qa.ṭi.lā.nu / qu.ṭø.lī.nu	ša.kø.rā.nu (հարբեցող) / na.di.nā.nu (վաճառող) / šu.rø.qī.nu (ծոնում)
--	--

Եզակի թվով դրված գոյական անունները բառավերջում կարող են ունենալ հավելյալ հնչյուն՝ m (mīm): Այդ երևույթը հայտնի է որպես mimation (*միմուլթյուն*), և դրա մեկ այլ տարբերակը՝ tanwīn (*նունուլթյուն*) հանդիպում է արաբերենում: Աքքադերենում նույնպես անունն ունի երեք դիրք:

1-10 քանակական թվականներն աքքադերենում ունեն երկու սեռ՝ արական և իգական (t հավելումով): 11-19 թվականները կազմվում են ešru (տասը) թվի հետ՝ առանց հոդակապ: Տասնավորներն ու հարյուրավորներն ունեն միայն մեկ ձև:

*Աղյուսակ 19*

	արական սեռ (3-10 թվականների հետ հաշվարկվող անունը՝ իգական սեռով)	իգական սեռ (3-10 թվականների հետ հաշվարկվող անունը՝ արական սեռով)
1	išten	-
2	šina	šitta
3	šalašu	šalaštu / šalaltu
4	arbau / irbau	irbittu
5	xamšu / xamša	xamiltu / xamšat
6	šiššu	šiššit
7	šiba	šibittu
8	šamanu	šamantu / šamanat
9	tišu	tittu / tišit
10	ešru	ešertu / ešerit

Դերանուններն աքքադերենում հինգն են՝ անձնական, ցուցական, հարցական, անորոշ, հարաբերական: Անձնական դերանունները կարող են գործածվել ինքնուրույն, կամ լինել կցական՝ միանալով բային կամ անվանը: Ինքնուրույն գործածվող

դերանունը կարող է ունենալ երկու դիրք՝ ինքնառական և խնդրառական:  
Դերանունները երկակի թիվ չունեն:

Աղյուսակ 20

Թիվ	Դեմք, սեռ	Ինքնուրույն		Կցական	
		ինքնառական	խնդրառական	անվան հետ	բայի հետ
Եզակի	I	anāku	iāti	-ia, -ī	-ni
	II արական	atta	kāša	-ka	-ka
	II իգական	atti	kāši	-ki	-ki
	III արական	šū	šāšu	-šu, -š	-šu, -š
	III իգական	ši	šāša	-ša	-ši, -š
Հոգնակի	I	anini	niati	-ni, -nu	-nāši, -našu
	II արական	attunu	kāšunu	-kunu	-kunuši
	II իգական	attina	kāšunu	-kina	-kinaši
	III արական	šunu	šāšunu	-šunu	-šunu
	III իգական	šina	šāšunu	-šina	-šina

Բայական համակարգն աքքադերենում մոտ է արաբերենին. կա 10 կաղապար:  
Դրանցից 4-ը հիմնական են, 6-ը՝ լծորդական, քանի որ կազմվում են հիմնական բային  
ավելացնելով ta կամ na հնչույթաբանական մասնիկները:

Աղյուսակ 21

	բայ		բայ		բայ		բայ
I <sub>1</sub>	i-ka.šā.d	II <sub>1</sub>	u-ka.šø.šā.d	III <sub>1</sub>	u-ša-kø.šā.d	IV <sub>1</sub>	ikø.-ka.sa.d
I <sub>2</sub>	i-ki.ta.šā.d	II <sub>2</sub>	u-kø.ta.šø.šā.d	III <sub>2</sub>	u-šø.ta-kø.šā.d	IV <sub>2</sub>	itø.-ta-k.šā.d
I <sub>3</sub>	i-ki.ta.na.šā.d	-	-	-	-	IV <sub>3</sub>	itø.-ta.na-k.šā.d

Աղյուսակ 21-ի վերջին սյունակում եղել են հնչյունափոխություններ. IV<sub>1</sub> բայը  
գրված է ik-kasad, պետք է լիներ in-kašad, որտեղ ik-ը հնչյունափոխվել է k-ի  
ազդեցությունից, և երկու k հնչյունների ազդեցությունից փոփոխվել է նաև  
արմատական բաղաձայնը՝ kašad-kasad: Նույն տրամաբանությամբ IV<sub>2</sub> բայը գրված է

itø.-ta-k.ša.d, պետք է լիներ inø.-ta-k.ša.d, և IV<sub>3</sub> բայը գրված է itø.-ta.na-k.ša.d, պետք է գրված լիներ inø.-ta.na-k.ša.d:

Բայն ունի ներկա, անցյալ և շարունակական (permansive) ժամանակներ, հրամայական եղանակ: Պարզագույն բայի խոնարհումը<sup>55</sup>

Աղյուսակ 22

Թիվ	Դեմք, սեռ	Ժամանակ		
		ներկա	անցյալ	պերմանսիվ
Եզակի	I	øa.ka.ša.d	øa.kø.šu.d	ka.šø.da.ku
	II արական	ta.ka.ša.d	ta.kø.šu.d	ka.šø.da.ta
	II իգական	ta.ka.ša.d	ta.kø.šu.di	ka.šø.da.ti
	III արական	øi.ka.ša.d	øi.kø.šu.d	ka.ši.d
	III իգական	ta.ka.ša.d	ta.kø.šu.d	ka.šø.da.t
Հոգնակի	I	ni.ka.ša.d	ni.kø.šu.d	ka.šø.da.ni
	II արական	ta.ka.ša.du	ta.kø.šu.du	ka.šø.da.tu.nu
	II իգական	ta.ka.ša.da	ta.kø.šu.da	ka.šø.da.tu.nu
	III արական	øi.ka.ša.du	øi.kø.šu.du	ka.šø.du
	III իգական	øi.ka.ša.da	øi.kø.šu.da	ka.šø.da

Արաբերենում անցյալ ժամանակի բայաձևը չի սկսում նախածանցով, ի տարբերություն արքադերենի: Շատ են նմանությունները, նույնիսկ երբեմն համընկնում են ածանցները և ձայնավորները:

Հին եբրայերենին ծագման հարցը կապված է հրեա ժողովրդի պատմության հնագույն շրջանի հետ: Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերին Միջագետքից անցնելով<sup>56</sup> Քանաան՝ եբրայեցիները յուրացրին տեղի լեզուն և իրենց հին լեզվի որոշ ազդեցությունը կրած մեկ այլ քանաանական բարբառ ստեղծեցին [Հակոբյան 2003:

<sup>55</sup> Մնացած այլ աղյուսակները կարելի է տեսնել Գրանդեի «Введение в сравнительное изучение семитских языков» գրքի արքադերենին վերաբերող մասում, որից և բերվել են օրինակները:

<sup>56</sup> Իվրի բառի հետ կապված կա երկու՝ տեսակետ՝ ավանդական ու գիտական: Առաջինի համաձայն եզրույթը ծագել է Նոյի թռռան՝ Սեմի որդի Էվեռի (Եբեր) անունից, իսկ երկրորդի համաձայն բառը նշանակում է անցնել, հատել (անցել են Եփրատ գետը) [Հակոբյան 2003: 17]:

16]: Ընդունված է *հին* կամ *աստվածաշնչյան եբրայերեն* անվանել այն լեզուն, որով գրվել է Հին կտակարանը շուրջ մեկ հազարամյակի ընթացքում (մ. թ. ա. 12–2-րդ դարեր): Մեծ տեղ են զբաղեցնում չափածո ստեղծագործությունները [Фролов 1991: 19]: Ժամանակի ընթացքում լեզուն փոփոխվել է, սակայն այդ փոփոխությունները չեն զետեղվել Հին կտակարանում: Միայն մ. թ. ա. 6-րդ դարում հին եբրայերենը մեծապես ազդվել է տարբեր լեզուներից, մասնավորապես՝ արամեերենից: Ենթադրվում է, որ մ. թ. ա. 1-ին հազարամյակի վերջին այն դուրս է գալիս բանավոր գործածությունից՝ իր տեղը զիջելով Մերձավոր Արևելքում լայնորեն տարածված արամեերենին [Ламбдин 1998: 21]:

*Հեթաստվածաշնչյան եբրայերենը* (մ. թ. ա. 1–մ. թ. 7-րդ դարեր) հայտնի է «միշնայական» կամ «ոաբբինական» անուններով: Այն բաժանված է թանայական (Կումռանի ձեռագրեր) ու ամորայական (Թալմուդ և Գեմառա) փուլերի: 2-րդ փուլը տևել է շուրջ 5 դար. եբրայերենն այդ ժամանակ բացառապես կրոնական լեզու էր՝ պահպանված հիմնականում գաղթօջախներում: Դրանք առաջացել էին 70 թվականին հրեաների ապստամբության ճնշման արդյունքում, երբ հրեա բնակչության մեծամասնությունը տեղահանվել էր Պաղեստինից [Hetzron 1997: 145]:

Հին եբրայերենում նույնպես խոսքը բաժանված էր երեք մասերի: Ի տարբերություն աքքադերենի, հին եբրայերենում պարզ բառերն ունեցել են երեք կաղապար՝ qa.թø. | (**nafši**՝ հոգի), qi.թø. | (**sifri**՝ գիրք), qu.թø. | (**romhi**՝ նիզակ):

Անունն ունենում է երկու սեռ՝ արական և իգական: Վերջինը բնութագրող հատուկ երևույթներից ու առարկաներից բացի՝ այլ անունները լինում են իգական սեռի, եթե բառավերջում ունեն  $\bar{a}$  (at),  $\bar{e}t$ ,  $\bar{u}t$ ,  $\bar{i}t$ ,  $\bar{i}yut$  վերջավորություններից որևէ մեկը: Արական սեռի հոգնակին կազմվում է  $\bar{i}m$ , իսկ իգական սեռի հոգնակին՝  $\bar{o}t$  կամ  $uyy\bar{o}t$  ( $iyy\bar{o}t$ ) վերջավորություններով: Երբեմն արական սեռը նույնպես կարող է ունենալ  $\bar{o}t$  վերջածանցը: Երկակի թիվը կազմվում է  $ayim$  վերջածանցով: Ո՛չ հին, ո՛չ արդի եբրայերենը չունի *միմություն* կամ *նունություն*:

Հին եբրայերենում կա որոշյալ առում. դա արտահայտվում է բառի առաջին հնչյունին կցվող *ha* մասնիկով: Եթե բառն սկսվում է կոկորդային հնչյունով, ապա որոշյալ հոդը դառնում է  $h\bar{a}$ , իսկ ոչ կոկորդային հնչյունը կրկնապատկվում է՝ *habbeit*:

Լեզվում կան դիրքերին նման երկու քերականական երևույթներ՝ որոշյալ առումով ուղիղ խնդրին՝ eփ նախածանցի, ուղղություն ցույց տվող ā վերջածանցի հավելում:

1-10 քանակական թվականներն աքքադերենում ունեն երկու սեռ՝ արական և իգական: 11-19 թվականները կազմվում են ‘āsār կամ ‘esrē (տասը) թվի հետ՝ առանց հոդակապ (11 և 12 թվականների բաղադրիչները համապատասխանեցվում են ըստ սեռի, 13-19՝ դրվում են հակառակ սեռով): Տասնավորներն ու հարյուրավորներն ունեն մեկ ձև:

*Աղյուսակ 23*

	արական սեռ (3-10 թվականների հետ հաշվարկվող անունը՝ իգական սեռով)	իգական սեռ (3-10 թվականների հետ հաշվարկվող անունը՝ արական սեռով)
1	’eḫāḍ	’aḫaṭ
2	š <sup>e</sup> nayim	štayim
3	š <sup>e</sup> loša	šalōš
4	’arbā ‘ā	’arba ‘
5	ḫ <sup>a</sup> miššā	ḫāmēš
6	šiššā	šēš
7	šib ‘a	šib <sub>a</sub> ‘
8	š <sup>e</sup> mōnā	š <sup>e</sup> mōne
9	tiš ‘ā	tēš ‘ā
10	‘sārā	‘eser

Դերանունները հին եբրայերենում վեցն են՝ անձնական, ցուցական, հարցական, հարաբերական, անորոշ և ստացական: Անձնական դերանունները կարող են գործածվել ինքնուրույն, կամ լինել կցական՝ միանալով բային կամ անվանը: Ինքնուրույն գործածվող դերանունը կարող է ունենալ երկու դիրք՝ ինքնառական և խնդրառական: Դերանունները երկակի թիվ չունեն:



Թիվ	Դեմք, սեռ	Ինքնություն		Կցական		
		ինքնառ.	խնդրառ.	անվան հետ (եզ. թ.)	անվան հետ (հոգն. թ.)	բայի հետ
Եզ.	I	'anōxi / 'anī	'ōtī	-ī	-ay	-nī / anī, enī
	II արական	'attā	'ōtēxā	-xā	-exā	-xā
	II իգական	'at	'ōtēx	-x, -ēx	-ayix	-x, -ēx
	III արական	hū	'ōtō	-ō, -ēhu	-āu	-hu, -ō, -u
	III իգական	hī	'ōtāh	-āh	-ehā	-hā, -āh
Հոգն.	I	(' <sup>a</sup> )naḥnu	'ōtī ati	-ēnū	-ēnū	-nū, -ānū, -ēnū
	II արական	'attem	'ōtē xen	-xem	-ēxem	-xem
	II իգական	'atten	'ōtēxem	-xen	-ēxen	-xen
	III արական	hēm	'ōtām	-ām	-ēhem	-m, -ām, -ēm
	III իգական	hēn	'ōtān	-ān	-ēhen	-n, -ān, -ēn

Բայական համակարգը երբայերենում ունի 9 կաղապար: Դրանք են՝ **qāṭal**, **qitṭel**, **hiqṭil**, **quṭṭal**, **hoqṭal**, **hitṭqatṭel**, **niqṭal**, **šiqṭēl**, **qōṭel**: Այսպիսով, հին երբայերենն իր հնչյունական համակարգով (կարճ, գերկարճ և երկար ձայնավորներ, կոկորդային հնչյուններ) և ձևաբանական կառուցվածքով առավել բարդ լեզու էր, քան արքայերենը:

Բայն ունի ներկա և անցյալ ժամանակներ (անկատար և կատարյալ կերպեր), հրամայական եղանակ: Հին երբայերենն, այսպիսով, շատ ավելի մոտ է կանգնած արաբերենին: Դրա պատճառը ոչ միայն միևնույն՝ արևմտյան ճյուղի մեջ ընդգրկված լինելն է, այլև ժամանակային առումով անհամեմատ ավելի երիտասարդ լինելը:

Պարզագույն բայի խոնարհումը սահմանական եղանակի անցյալ և ներկա ժամանակներում, ինչպես և հրամայական եղանակում, ներկայացված է աղյուսակ 25-ում՝

Աղյուսակ 25

Թիվ	Դեմք, սեռ	Ժամանակ / եղանակ		
		ներկա	անցյալ	հրամայական
Եզակի	I	<b>kā. ta. b. tī</b>	<b>'e. xø. tō. b</b>	–
	II արական	<b>kā. ta. b. tā</b>	<b>ti. xø. tō. b</b>	<b>x<sup>e</sup>. tō. b</b>
	II իգական	<b>kā. ta. b. tī</b>	<b>ti. xø. t<sup>e</sup>. bī</b>	<b>xi. t<sup>e</sup>. bī</b>
	III արական	<b>ka. ta. b</b>	<b>yi. xø. tō. b</b>	–
	III իգական	<b>kā. t<sup>e</sup>. b. ā</b>	<b>ti. xø. tō. b</b>	–
Հոգնակի	I	<b>kā. ta. b. nū</b>	<b>ni. xø. tō. b</b>	–
	II արական	<b>k<sup>e</sup>. ta. b. tem</b>	<b>ti. xø. t<sup>e</sup>. bū</b>	<b>xī. t<sup>e</sup>. bū</b>
	II իգական	<b>k<sup>e</sup>. ta. b. ten</b>	<b>ti. xø. tō. b. nā</b>	<b>x<sup>e</sup>. tō. b. nā</b>
	III արական	<b>kā. t<sup>e</sup>. b. ū</b>	<b>yi. xø. t<sup>e</sup>. bū</b>	–
	III իգական	<b>kā. t<sup>e</sup>. b. ū</b>	<b>yi. xø. tō. b. nā</b>	–

Աքքադերենում ու հին եբրայերենում թեև չկար «հարֆ» եզրույթը, քանի որ այն առաջացել էր այն ժամանակ, երբ այս լեզուներն արդեն մեռած էին, բայց կարելի է տեսնել քերականական բազում ընդհանրություններ՝ մասնավորապես ձևաբանության ասպարեզում: Դարձյալ մեկ բաղաձայն և մեկ ձայնավոր հնչյուններ միասին կազմում են հատույթ, միասնաբար հանդես գալիս ձևույթի կազմում: Ուստի, **կաղապարը սեմական լեզուներում մեկ ձևույթ է, բաղկացած հնչույթաբանական նվազագույն մասնիկներից՝ արմատական և հավելյալ հարֆերից, և դրա ներսում արմատ և ածանց չի առանձնացվում:**

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀարՖ եզրույթը վերը քննված շրջանակում ունի երկու ընկալում: Մի կողմից՝ այն հնչույթաբանական նվազագույն մասնիկ է ինչպես արաբերենի, այնպես էլ՝ արաբատառ գրային համակարգն օգտագործող լեզուների համար: Բացի այդ, հարՖը վերջնական միավոր-ձևույթ է, որն առանձնանում է բառի գծային անդամատման արդյունքում, երբեմն նույնիսկ՝ բառ, և, իհարկե, խոսքի երեք մասերից մեկը: Մյուս կողմից՝ հարՖ եզրույթը համարվում է հնաբանություն և փոխարինվում է ժամանակակից ընդհանուր լեզվաբանության եզրույթներով: Այս վիճելի հարցը կարևոր է թե՛ տիպաբանական, թե՛ համեմատական լեզվաբանության տեսանկյունից:

Եզրույթն արաբական լեզվաբանական ավանդույթում հանդիպում է արաբ առաջին քերականների աշխատություններում՝ վերը նշված բոլոր իմաստներով: Արդի արաբ լեզվաբանները և արաբագիտությամբ զբաղվող տարբեր դպրոցներ շարունակում են գործածել այդ եզրույթը՝ նորովի մեկնաբանելով նրա տեղն ու դերը հնչույթաբանության և ձևաբանության մեջ: Հետազոտության ընթացքում արված դիտարկումները կարելի է ամփոփել հետևյալ եզրափակիչ դրույթներում.

1. ՀարՖը՝ որպես եզրույթ, ունի տարբեր իմաստներ, որոնց հիմքերը հասնում են արաբական քերականության առաջացման և լեզվաբանական ավանդույթի ձևավորման շրջան: Հետազոտվող ժամանակահատվածում հարՖը գործածվել է «ինչ-որ առարկայի մաս» իմաստով, ինչը ցույց են տալիս եզրույթի կենցաղային կիրառությունները: Այնուհետև այն ներմուծվել է լեզվական բառապաշար. հարՖը կարող է լինել մաս՝ խոսքի մաս, նախադասության մաս՝ բառ, բառի մաս՝ ձևույթ, ձևույթի մաս՝ հնչույթային մակարդակի նվազագույն միավոր:
2. Արդի լեզվաբանության մեջ կան պնդումներ, որոնք միտում ունեն հարՖից առանձին դիտարկել բաղաձայն և ձայնավոր հնչյունները՝ որպես ինքնուրույն հնչույթներ: Սակայն արաբերենում հնչույթային մակարդակի նվազագույն միավորը հարՖն է, որը կարող է ձևավորել լեզվի նվազագույն իմաստակիր մասնիկը՝ ձևույթը (կաղապար կամ ածանցներ): Ուստի, կարելի է ընդունել բոլոր լեզուների համար կիրառելի եզրույթներ՝ միաժամանակ նշելով տվյալ ավանդույթի եզրույթը:

3. Ըստ Ալ-Խալիլ իբն Ահմադի, որը ներմուծել էր հարֆն արաբական լեզվաբանական ավանդույթ, 'alif-ը և hamza-ն երկուսն էլ արաբերենի թույլ կամ թերի հարֆեր են, միմյանցից անկախ միավորներ, որոնք հանդես են գալիս որպես արաբերենի ձևահնչույթային և վանկաչափական համակարգի մասնիկներ: Երբեմն ոչ միայն այդ երկուսը, այլև արաբերենի ևս երկու թույլ հարֆեր՝ wāw և yā', կարող են փոխարինվել մեկը մյուսով: Հետագա հեղինակները հաստատում են hamza-ի՝ հարֆ լինելը, որով հարֆերի թիվը հասցվում է 29-ի: Առանձնացնելով յոթ բառեր, որոնք դիրքի փոփոխության ընթացքում փոխում են ոչ միայն բառավերջի մեկ, այլև երկու հարֆերը, հեղինակը ցույց է տվել, որ խնդրո առարկան եղել է ոչ թե հարֆը՝ որպես մեկ բաղաձայն հնչյուն, այլ մեկ ամբողջություն: Ստացվում է, որ միայն ձայնավորի փոփոխությունը չի դիտարկվել որպես առանձին երևույթ. եթե փոփոխվում է ձայնավոր հնչյունը՝ լինելով հարֆի մաս, ապա դա համարվում է, որ փոխվում է ամբողջ մասնիկը:
4. Շարունակելով ուսուցչի՝ ալ-Խալիլ իբն Ահմադի գործը՝ Սիբավեյհին նույնպես բացատրում է հարֆ եզրույթը որպես բառի մասնիկ՝ մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից բաղկացած: Ըստ երևույթին, դա իր մեջ կարող է պարունակել նաև զրոյական բաղաձայն կամ զրոյական ձայնավոր, այսինքն՝ դրանցից մեկի բացակայությունը պատճառաբանվում է որպես դրա զրոյական գոյություն՝ պահպանելով հարֆը:
5. Ալ-Մուբառռադը նույնպես հստակ ձևակերպում չի տվել «հարֆ» եզրույթին: Փոխարենը այս կամ այն օրինակում հանդիպում է դրա կիրառությունը: Ըստ այդ օրինակների՝ կարելի է տեսնել, որ հարֆը բաղկացած է երկու հնչյունից՝ բաղաձայն և ձայնավոր: Դա հակասում է հարֆի ձևակերպմանը՝ թե՛ որպես մեկ տառի, թե՛ որպես վանկի, քանի որ վերջինիս կազմ կմտնի նաև զրոյական ձայնավոր ունեցող հարֆը: Վանկում կստացվի 2 հարֆ, հետևաբար վանկ և հարֆ եզրույթները համարժեք չեն:
6. Ձևաբանության տեսանկյունից առավել հստակ ձևակերպում է հանդիպում ալ-Մուբառռադի աշխատությունում՝ կապված արմատական հարֆերի հետ: Արմատի կազմում երկու՝ միջին ու վերջին հարֆերը կարող են կրկնվել, և եթե դրանցից

առաջինն ունենում էր զրոյական ձայնավոր, ապա երկու հարֆը գրվում էին միասին՝ որպես մեկ հարֆ, վրան դրվում էր համապատասխան նշան՝ šadda: Հետագոտության ընթացքում պարզ դարձավ, որ եթե ալ-Խալիլը սա բացատրում էր որպես մեկ հարֆ, ապա Ալ-Մուբառռադն առաջինն էր, որ դրան տվեց ավելի ճշգրիտ բացատրություն՝ այն ներկայացնելով որպես երկու հարֆի համադրություն: Քիչ չեն դեպքերը, երբ ալ-Մուբառռադը գործածել էր եզրույթը որպես բառ՝ նախադասության նվազագույն միավոր:

Պարսկերենի և օսմաներենի տաղաչափության տիպաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարֆ հասկացությունը, լինելով բուն արաբական եզրույթ, դարձել է նաև այդ երկու՝ ոչ սեմական լեզուների վանկաչափական նվազագույն մասնիկը՝ բաղկացած երկու՝ բաղաձայն և ձայնավոր հնչյուններից: Հետևաբար, հարֆը չի կարող ձևակերպվել որպես հնչյուն: Մյուս կողմից, վանկի ներսում կարող են լինել մեկից ավելի հարֆեր, այդ թվում՝ զրոյական ձայնավոր ունեցող մասնիկը, ուստի ճիշտ չի լինի նաև հարֆի՝ որպես վանկի ձևակերպումը: Ըստ այդմ՝ հնչույթային և վանկային մակարդակների նվազագույն միավորը հարֆն է՝ բաղաձայնի ու ձայնավորի *անբաժանելի* միություն, քանի որ փաստացի հարֆն է այս ամբողջ համակարգի հիմքում:

Աքքադերենի և հին եբրայերենի համեմատական հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ լեզուների պարագայում նույնպես կաղապարները կազմված էին մեկ բաղաձայն և մեկ ձայնավոր հնչյուններ ունեցող հատույթից, որտեղ դրանք միասնաբար հանդես են գալիս ձևույթի կազմում: Այս մոտեցումն ակնհայտ էր նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ «հարֆ» եզրույթը չէր առաջացել, սակայն ձևաբանության ասպարեզում բազմաթիվ էին քերականական ընդհանրությունները:

Հետևաբար, հետազոտության ընթացքում կատարված վերլուծությունն ու քննված հարցերը կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն սեմական լեզուների, առաջին հերթին՝ արաբերենի հնչույթաբանության ու ձևաբանության ուսումնասիրության համար, այլև օգտակար լինել արաբական գրային համակարգը գործածող լեզուների տաղաչափական համակարգը հետազոտելու տեսանկյունից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Սկզբնաղբյուրներ (արաբերեն)

1. *Mahdī al Makhzūmī and Ibrahīm Al-Samirā'ī, Kitāb al-‘Ayn (սկզբնաղբյուրի հեղինակ՝ al-Xalīl ibn Aḥmad al-Farahīdī), հրատարակված ութ հատորով, Բեյրութ 1988-92*
  - Առաջին հատոր – 382 էջ
  - Երկրորդ հատոր – 368 էջ
  - Երրորդ հատոր – 440 էջ
  - Չորրորդ հատոր – 473 էջ
  - Հինգերորդ հատոր – 464 էջ
  - Վեցերորդ հատոր – 326 էջ
  - Յոթերորդ հատոր – 496 էջ
  - Ութերորդ հատոր – 522 էջ
2. *‘Alī ibn ‘Īsā Raba‘ī, Kitāb al-‘Arūḍ, (սկզբնաղբյուրի հեղինակ՝ al-Xalīl ibn Aḥmad al-Farahīdī), Բեյրութ 2000, 172 էջ*
3. *‘Abd al-Salām Muhammad Hārūn, Kitāb Sibawayhi al-mašhūr fi al-naḥw wa ismuhu al-kitāb, (սկզբնաղբյուրի հեղինակ՝ Sibawayhi), (աշխատության տասը հատորը՝ հրատարակված 4 մասով), Կահիրե 1988-92*
  - Առաջին մաս – 446 էջ
  - Երկրորդ մաս – 432 էջ
  - Երրորդ մաս – 664 էջ
  - Չորրորդ մաս – 494 էջ
4. *Abd al-Ḥamīd Hindawi, Al-Kāmil fi al-Luḡa wa al-Adab, (սկզբնաղբյուրի հեղինակ՝ al-Mubarrad), Կահիրե, 1998-2000*
  - Առաջին հատոր – 464 էջ
  - Երկրորդ հատոր – 449 էջ
  - Երրորդ հատոր – 334 էջ
  - Չորրորդ հատոր – 350 էջ

*Աղբյուրներ (հայերեն)*

5. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, *4-րդ վերամշակված հրատարակություն*, Երևան 1987, 736 էջ
6. Բախշինյան Ք. Վ., Բիանջյան Հ. Հ., Ղազարյան Լ. Վ., Մելիքյան Գ. Վ., Պարսկերենի դասագիրք, *խմբագրությամբ Գառնիկ Ասատրյանի*, Երևան 2011
7. Գաբուչյան Հ. Մ., Կարաբեկյան Ս. Բ., Գրական արաբերենի գործառական քերականություն, Երևան 2002, 107 էջ
8. Կարաբեկյան Ս. Բ., Արաբական տաղաչափության հիմունքներ, Երևան 2002, 24 էջ
9. Հակոբյան Ա. Ե., Արդի եբրայերեն, Երևան 2003, 522 էջ
10. Նազարյան Ա. Հ., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-հայերեն-ռուսերեն ուսումնական բառարան, Երևան 1993, 656 էջ
11. Սարգսյան Ա., Սաֆարյան Ա., Սահակյան Լ., Օսմաներենի դասագիրք, *խմբագրությամբ Ռ. Սաֆրաստյանի*, Երևան 2016, 324 էջ
12. Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալիլը և «Թյուրքագիտության հիմունքները», Երևան 2012, 300 էջ
13. Պետրոսյան Հ. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Երևան 1975, 328 էջ
14. Պետրոսյան Վ. Զ., Շարույթաբանական ըմբռնման հարցեր (Ի. Ա. Բողոյեն դե Կուրտենե, Ֆ. դե Սոսյուր), *Բանբեր Երևանի համալսարանի*, 2 (113), Երևան 2004, 77-83 էջ
15. Զահուկյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, *վերապրություն*, հատոր 1, Երևան 2015, 702 էջ

*(ռուսերեն)*

16. Алпатов В. М., История лингвистических учений, Москва 2005, 368 с.
17. Белова А. Г., Введение в арабскую филологию, Москва 2003, 67 с.
18. Беляев Е. А., Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, *издание 2-е*, Москва 1966, 278 с.
19. Бенвенист Э., Общая лингвистика, *под редакцией, с вступительной статьей и комментарием Ю. С. Степанова.* — Москва 1974, 446 с.

20. Березин Ф. М., История лингвистических учений, Москва 1984, 319 с.
21. Березин Ф. М., Головин Б. Н., Общее языкознание, Москва 1979, 416 с.
22. Габучан Г. М., К вопросу о структуре семитского слова (в связи с проблемой внутренней флексии) // «Семитские языки», вып. 2, ч. 2. М., Наука, 1965, 114-127 с.
23. Гранде Б. М., Введение в сравнительное изучение семитских языков, *издание 2-е*, Москва РАН 1998, 440 с.
24. Гранде Б. М., Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, Москва, РАН 2001, 592 с.
25. Дьяконов И. М., Семито-хамитские языки, *Языки народов Азии и Африки*, Москва 1965, 117 с.
26. Звегинцев В. А., История арабского языкознания, Москва 2007, 80 с.
27. Зиндер Л. Р., Фонема и морфема. *Проблемы лингвистической типологии и структуры языка*, Ленинград 1977, 191 с.
28. Карабекян С. Б., К основаниям арабской морфонологии, *Вопросы арабистики*, вып. I, Ереван 1996, стр. 3-12
29. Карабекян С. Б., Морфонологический анализ сегментов с танвином в арабском литературном языке, *Страны и народы Ближнего и Среднего Востока*, XVI, Ереван 1996, 223-229 с.
30. Карабекян С. Б., О некоторых просодических универсалиях в свете данных арабской фонологии, *Вопросы арабистики IV*, Ереван 2001, 3-13 с.
31. Карабекян С. Б., «Разбитое» множественное число в литературном арабском языке: опыт морфонологического анализа, *Сборник статей, посвященный 80-летию академика К. Г. Церетели*, Тбилиси 2003, 115-118 с.
32. Карабекян С. Б., Уровни лингвистического анализа и основные единицы описания в традиционном арабском языкознании, *Страны и народы Ближнего и Среднего Востока*, XXIII, Ереван 2004, 507-518 с.
33. Карабекян С. Б., Оганесян А. П., Яврумян М. М., Вновь о структуре семитского слова морфонологическая постановка вопроса. *Тезисы доклада на XXXVII Международном конгрессе востоковедов*. Москва 2004



34. Касевич В. Б., Морфонология, Ленинград 1986, 483-649 с.
35. Касевич В. Б. Фонологические проблемы общего и восточного языкознания, *из книги Фонологические проблемы общего и восточного языкознания*, Москва 1983, 181-476 с.
36. Касевич В. Б., Элементы общей лингвистики, Москва 1977, 177 с.
37. Кодухов В. И., Общее языкознание, Москва 1984, 303 с.
38. Ламбдин Т. О., Учебник древнееврейского языка, *перевод с английского Якова Эйделькинда, под редакцией Михаила Селезнева*, Москва 1998, 509 с.
39. Маслов Ю. С., Введение в языкознание, Москва 1987, 272 с.
40. Мец А., Мусульманский ренесанс, *издание 2-е*, Москва 1973, 473 с.
41. Мечковская Н. Б. И другие, Общее языкознание, Москва 1983, 456 с.
42. Негря Л. В., Общественный строй Северной и Центральной Аравии в V-VII вв., Москва 1981, 156 с.
43. Пиотровский М. Б., Южная Аравия в раннее средневековье: Становление средневекового общества, Москва 1985, 226 с.
44. Поливанов Е. Д., Введение в языкознание для востоковедных вузов, Ленинград 1928, 231
45. Реформатский А. А., Введение в языкознание, *издание 4-е, исправленное и дополненное*, Москва 1967, 542 с.
46. Рыбалкин В. С., Классическое арабское языкознание, Киев 2003, 348 с.
47. Тоникян С. А., Мифологические аспекты сюжетов Корана, Ереван 2009, 134 с.
48. Тер-Гевондян А. Н., Армения и Арабский халифат, Ереван 1977, 326 с.
49. Фильштинский И. М., История арабов и Халифата (750-1517 гг.) *издание 3-е*, Москва 2006, 349 с.
50. Фильштинский И. М., История арабской литературы V начало X века, Москва 1985, 528
51. Фролов Д. В., Классический арабский стих, М. 1991, 359 с.
52. Фролов Д. В., Предлоги в арабской грамматической традиции, *Языки зарубежного Востока*, Москва 1977, 177-185 с.
53. Юшманов Н. М., Грамматика литературного арабского языка (под редакцией и с предисловием И. Ю. Крачковского), СПб. 1999, 145 с.


(անուղերեն, արարերեն, ֆրանսերեն, գերմաներեն)

54. ‘Aṭāwī T., Al-ḥarakāt wa al-ḍamā’ir: beyna al-foṇem wa al-morfem, *from ‘Awadd al-nadd magazine*, London 2013, 11-26 pp.
55. Baalbaki R., The Book in the Grammatical Tradition 123-139 pp, *from Grammarians and Grammatical Theory in the Medieval Arabic Tradition*, Oxford Routledge 2004, 356 p.
56. Barthélemy F., A morphological analyzer for akkadian verbal forms with a model of phonetic transformations, Montreal 1998, 73-81 pp.
57. Y‘aqūb E., Fiqh al-Luġa al-‘arabiyya wa xaṣā’iṣuḥa, Beirut 1982, 287 p.
58. Fischer W., Zur herkunft des Grammatischen terminus Harf, *Jerusalem Studies of Arabic and Islam*, 1989, 134-145 pp
59. Gelder G. V., Kufa vs Basra: the Literary debate, *article from journal Asiatische Studien: Zeitschrift der Schweizerischen Asiengesellschaft*, Zürich, 1996, 339-362 pp
60. Gruendler B., The Development of the Arabic Scripts, Atlanta 1993, 91 p.
61. Ḥasān T., Manāḥij al-Baḥṭ al-Luġa, Cairo, 1991, 282 p.
62. Hawting G. R., The First Dynasty of Islam (*second edition*), New York 2000, 151 p.
63. Hetzron R., The Semitic languages, London 1997, 594 p.
64. Hitti P. K., History of the Arabs, tenth edition, Hong Kong 1970, 845 p.
65. Huehnergard J., A Grammar of Akkadian (*third edition*), Harvard 1998, 648 p.
66. Hoyland R. G., Arabia and the Arabs, London 2001, 324 p.
67. Jackson J., Introducing Language and Intercultural Communication, New York, 2014, 413 p.
68. Karabekyan S., Yavrumyan M., Harf, *part of Encyclopedia of Arabic Language and Linguistics (EALL)*, vol. 2, 236-239, Leiden 2006
69. Kouloughli D. E., Sur le Statut Linguistique du Tanwīn, Leiden 2001, 21-50 pp
70. McCarthy J. J., A prosodic account of Arabic broken plurals. *Linguistics Department Faculty Publication Series. Paper 25*. Dordrecht 1983, 289-320 pp
71. McCarthy J. J., Prince A. S., Foot and word in prosodic morphology: The Arabic broken plural, *Linguistics Department Faculty Publication Series. Paper 11*. Dordrecht 1990, 209-283 pp


72. McCarthy J. J., Template form in prosodic morphology, *Papers from the Third Annual Formal Linguistics Society of Midamerica Conference*. Bloomington 1993, 187-218 pp
73. Mirzaoğlu F. G., Alevi-Bektaşî Şiirinde Bâd-i Sabâ Motifi, *Türk Kültürü ve Hacı Bektaş Velî Araştırma Dergisi*, Ankara 2012, 109-130 pp.
74. O'Leary D., Arabia Before Muhammad, *reprinted edition of 1927*, London 2001, 234 p.
75. Owens J., Models for Interpreting the Development of Medieval Arabic Grammatical Theory, *JAOS*, Ann Arbor 1991, 225-238 pp
76. Versteegh C., *The Arabic Language*, Columbia University Press, New York 1997, 277 p.
77. Versteegh C., *The Arabic Linguistic Tradition, Part of the Landmarks in Linguistic Thought series, vol. 3.*, London 1997, 206 p.
78. Watson, J. C., *The Phonology and Morphology of Arabic*, New York 2002, 307 p.
79. Weil G., *Die grammatischen Schulen von Kufa und Basra*, Leiden 1913, 116 p.

## ՀԱՎԵԼՎԱԾ


Հավելված 1. Խալիլի շրջաններ




Առաջին շրջան




Երկրորդ շրջան



Երրորդ շրջան



Չորրորդ շրջան



### Հինգերորդ շրջան

Հավելված 2. Սեմական լեզուների դասակարգում՝ ըստ արևելյան և արևմտյան ճյուղերի՝

- Արևելյան
  - Աքքադերեն
  - Էբլայերեն
- Արևմտյան
  - Կենտրոնական
    - Արաբերեն
    - Հյուսիսարևմտյան (ուգարիտերեն, արամեերեն, քանաանական լեզուներ՝ եբրայերեն, փյունիկերեն, մոավերեն, ամմոնեերեն)
  - Հարավային
    - Արևելյան (սոկոտրի, մեհրի, հարսուսի, ջիբբալի)
    - Արևմտյան (հին հարավարաբական, եթովպական լեզուներ՝ գեեզ, ամհարերեն, տիգրե, տիգրինյա, արգոբբա, հարարի, գուրագե և այլն)

Հավելված 3. Սեմական նախալեզվի, աքքադերենի, արաբերենի և հին եբրայերենի հնչյունական համակարգը. տառադարձման աղյուսակ

Սեմական նախալեզու	Աքքադերեն	Արաբերեն		Հին եբրայերեն	
b	b	ب	b	ב	b/b
p	p	פ	f	פ	p-/p
d	z	ذ	d	ד	d/d
t	š	ث	t	ת	t/t
t	š	ط	d	ט	t
d	d	د	d	ד	d/d
t	t	ت	t	ת	t/t
t	t	ط	t	ט	t
š	š	س	s	ש	š
z	z	ز	z	ז	z
s	s	س	s	ס	s
š	š	ص	š	צ	š
l	l	ل	l	ל	l
š	š	ش	š	ש	s
š	š	ض	d	ז	'
g	g	ج	j	ג	g/g
k	k	ك	k	כ	k/k
k	q	ق	q	ק	q
g	-	غ	g	ע	'
h	h	خ	h	ח	h
'	-	ع	'	ע	'
h	-	ح	h	ח	h
'	-	ء	'	א	'
h	-	ه	h	ה	h
m	m	م	m	מ	m
n	n	ن	n	נ / ר	n / r
r	r	ر	r	ר	r
w	w	و	w	ו / י	w / y
y	y	ي	y	י	y